

796(062)



ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ ՍԿԻԶԲԸ


Խմբագիր
ԿԱՐՕ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Արտոգրատ
Տօք. Թ. ԹՈՎՄԱՍԵԱՆ

ԱՐԻ ԹԻԻ 5-6

ԳԻՆ 10 ԼԷՎԱ

1 ՅՈՒՆՎԱՐ 1926



ՄԵՐ ԻՏԷԱԼԸ

ХОМЕНТМЕНЪ

ОРГАНЪ
НА

Спорт. Д-во „Хоментменъ“
Пловдивъ

Издателъ: Д-р. Т. Томасянъ
Редакторъ: Г. Газаросянъ

HOUMENTMEN

REVUE ILLUSTRÉE

Organe de l'Union Arménienne
de Culture Physique et de
Scoutisme

Adresse: T. HÉKIMIAN
Philippople (Bulgarie)

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՃԻԳԻՆ
ՆՊԱՏԱԿԸ ՊԷՏԲ Է ԸԼԼԱՅ: ՍԱՀՄԱՆԷՆ
ԱՆԴԻՆ՝ ԻՏԷԱԼԸ ՄԻՋՈՑԻՆ, ԵՒ ԱՃՈՒՄԸ
ՍՊԱՌՈՒՄԻՆ ՏԵՂԻ ԿՈՒՏԱՅ:

ՅՕԻՈՒԱՆՆԵՐՈՒ


ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆ,
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ,

ալլ զուրիւններու եւ
րիւրերու համար
ինչպէս նաեւ
ԳՐԱՄԻ ԱՌԱՔՄԱՆ
ու վարչական ալլ
գործերու համար հասցէ

ԹՈՐԳՈՄ ՀԷՓԻՄԵԱՆ

ՖԻԼԻՊԷ (ՊԵՒԼՓՐՈՎ)

Հ. Մ. Ը. Մ. ի ՌՈՒՄԱՆՈՅ ԵՒ ՊՈՒԼԿԱՐՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ ՅԵՏ ԱՅՍՈՒ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ „Հ. Մ. Ը. Մ.“ ՏԻՏՂՈՍՈՎ՝ ՓՈԽԱՆԱԿ „ՄԱՐԶԻԿ“Ի ԻԲՐԵՒ ՎԵՐՋԻՆԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ:



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ Հ. Մ. Ը. Մ. ՌՈՒԹԵԱՆ

ԳԻՆ 5 ԼԵՎԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

	Վեցամսեայ	Տարեկան
ՊՈՒԼԿԱՐՈՒ	30	60 լէվա
ՌՈՒՄԱՆՈՒ	60	120 լէվ
ԹՈՒՐԲՈՒ	100	180 զրաշ
ԱՐՏԱՍԱՀՐԱՆ	10	20 ֆրանք
ԱՄԵՐԻԿԱ	1	2 աշլար

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ

ՀՐԱՆԴ ԷՄԲՐԵԱՆ — ՍՕՖԻԱ Բլոգաս Պանֆի բիւ 4
 ԹՈՐԳՈՐ ՀԷՔԻՄԵԱՆ — ՖԻԼԻՊԷ „Պանֆա Ասպարեկ“
 ԱՐԱՄ ՔԻՐՏԵԱՆ — ՎԱՌՆԱ Ուլ. Թրուովսֆա 15
 ՆՈՒՊԱՐ ՉԱՔԷՐԵԱՆ — ՌՈՒՍՏՈՒԳ Solisուֆա 71
 ԱՐԱՄ ՅԱԿՈԲԵԱՆ — ՊՈՒՐԿԱԶ Ֆերսիանսովա 17
 ՊԵՓՐԵՄԵԱՆ — ՇՈՒՄԷՆ Արմենսֆա չար 826
 ՅԱԿՈԲ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ — ՀԱՍՔՕՎՕ
 Գ. ՍԱՀԱԿԵԱՆ — ՍԷԻՎԷՆ Չասովնիֆա
 Գ. ՆԱԶԱՐԵԱՆ — Արմէնսֆա ուշիլիթի — Սթ. Զակարա
 Պ. ՓԱՓԱԶԵԱՆ — Թ. ԲԱԶԱՐՃԷԳ Թանկա վաճառատուն
 ԹԱԳԻՈՐ ԳՈՒԶԵԱՆ — ՊՕՐԻՍՈՎԿԻՐԱՏ

Անոնց պէտք է գիտել բաժանորդագրուելու համար

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է

„Մարգիկ“ ի Ա. քիւր ամբողջովին սպառած եւ արժանանալի բաժանորդներու կողմէ պահանջուած րլլալով, բոլոր անոնք որոնք ունին Ա. քիւր եւ հաւաքածոյ չեն պահեր՝ հանին քերթիս Վարչութեանը ղրկել:



ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ ՍԿԻԶԸ

Խմբագիր
ԿԱՐՈ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Արսուիսկր
Տօք. Թ. ԹՈՎԱՄԱՍԵԱՆ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 5-6

ԳԻՆ 10 ԼԷՎԱ

1 ՅՈՒՆՎԱՐ 1926

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

ՈԳԻՆ ՈՒ ՃԱՄԲԱՆ

Առ ուկաղէս մանկութեան կամ երիտասարդութեան, ու անոր ապագայ յայտերուն նուիրուած տան մը նկատեր են Ամանորը:

Բայց առանձնապէս հայեցի հայեցողութեամբ անկեա իր մէջ աշխատող զանազան թան մը ունի, կառնէք: Մեզի համար, մասնաւոր, որ կեանքը իր դժբախտ կոշմերով միայն ճանչցանք, դրեթէ անկարելի է ահազգովին վաղուան՝ նոր Օրերու նայել, այնքան խոր է կակիծը անցեալի հորուածներուն:

Սիրտ-ծակով էջեր ունի մասնաւորապէս վերջին տասնամեակի մէջ պատմութիւնը, որ նսխապատմութիւնը ելաւ մեր այսօրուայ հայ երիտասարդութեան:

Ինչքան ալ կակիծուն, քանի մը գիծերով վերջի՛չենք զայն:

1908—1914, — յայտեր և օրօրումներ, ծախ ու ծիծաղ, բայց, նորէ՛ն, «արիւնհոտ երազներ»:

1915—1918, — Ջարդ ու սարսափ, յեղակարծ ամայութիւն մը՝ սահմանէ սահման, անփոխարինելի կորուստներ, և ծուխ ու մուխ՝ տառնց ծխանի ու խորոյցի...:

1918—1920, — «Մեր Հայրենիք», վերանորոգ, համրանք, տաւն-տել, քաղց, տքնաջան աշխատանքներ, ու նորէ՛ն խուճապ, փոխուստ, խորտակում:

1920—1925, — Խաղաղութիւն: Նոր աշխատանքներ, բայց հաշար ցաւ ու կակիծ, և սրայքայուած տնտեսութիւն մը՝ ա՛փ մը իւզով, հա՛լիւ բաւելի՛ մենք մեզմով տապալուելու:

Ապրին, ծովերէ՛ ծով, շուարուն, թախաղտ, ալեւու ի ու հիւժող-լպծուն բազմութիւններ՝ իր-րե «գաղութ», զուրկ կապէ ու ներդաշնակութենէ:

Եւ, — չարագոյնը — ֆիզիքական վտանգը դարձնակալ՝ Մայր-Երկրի չաւը. իսկ գաղութնեղաւ մէջ «ձերմակ ջարդը» իր յարածուն կլանումով:

Այս է, մեր երէկուայ և այսօրուայ պատմութիւնը:

Վաղը, — Անտոյզ, խուլ ու մթամած:

Բայց, ո՛ւր կը տանի այս աղետաւոր ճամբան: Երէկը արիւն կը կաթկթէ դեռ... Վաղը, ապա-գան, զոյն ու թախք չ'ունի...

Ե՛լքը:

Փնտռենք զայն կրկին մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Թողնենք Աւարայրն ու Արարան, կամ ցեղին դիմադրաւոր ուժը:

Արհաւիրքի ու խորտակումի վերջին շրջանին մէջ իսկ մեր ժողովուրդը խայնեցներ ու ճիգեր է ունեցեր, որոնք լքեր-անցեր են մարդկային երեւակայութիւնը: Այսօրուայ պայմանները, թէև անդա-մառաւ ու անրուարաչ, բաւական են՝ ինքնախոստ ու ջլապինդ նայելու համար նոր օրերուն:

Եթէ անցեալը հոգ ու կակիծ տուաւ մեզի՝ հիմնական փոփոխութիւն մը գրաւ, սակայն, մեր կենցաղին ու խառնուածքին մէջ: Եւ տոռապանքը, աշխատանքի ու տխրահոնիլ թէև, խմորեց ու լրծեց մեզ, աշխատաշատ երաշտանութեան մը տեղ կեանքի մասին իրաւուն ու ինքնախոստ հասկացողութիւն մը տալով: Երէկ, — և այս տասնեակ տարիներ — բարեմիտ ու պարանաւոր էինք: Այսօր դարձեր ենք մոսածղ ու հաշաւ: Երէկ յայտի ու բաղձանքի, հեռուոր ու անգոյ երաշներու ժողովուրդն էինք: Այսօր դարձեր ենք իրողութիւններու և սեփական ճիգին ապաւանաւ տալը մը: Ծիչէ է, որ մարդկային պատ-մութեան մէջ անօրինակ եղաւ մեզի վիճակուած աղէտը: Բայց առոր պատճառը պէտք է փնտռենք նախ մութեան մէջ անօրինակ եղաւ մեզի վիճակուած աղէտը: Բայց առոր պատճառը պէտք է փնտռենք նախ ժողովուրդի թերի կողմերուն մէջ: Եթէ չարիքը նիւթեղէն ու մարդկային անհամեմատօրէն մեծ ար-

մէքներ խլեց մեզմէ, զայն լրացուց բարոյական նոյնքան մեծարժէք փորձառութեամբ մը: Տարեմուտի այս օրերուն մանաւանդ, երբ կոչուած ենք մեր կեանքին «եւրփ ու մուտք»ի արդար հաշուեկշիւը բնելու, չի մոռնա՞նք և՛ այս «հաշիւ»: Որովհետեւ, զժրատութեամբ մէջ խի բարեբախտութիւն — փորձառութիւն — դռնէլու այս դրական կեցութեամբ զգալապէս պիտի նուազեցնէ Յաւին մեծութիւնը և պիտի ամբասնդէ մեր հաւատքն ու անկէ բխող ճիշդ, անկարելին դարձնելով զմուտքին:

Ի՞նչ փոյթ, եթէ երեկուայ անխոխարիւնէլի կորուստներէն յետոյ, սահմանէ սահման մեր այսօրուայ անհաղթող ու ցիրուցան պայմաններուն մէջ, և մեր անստույգ վալուան հախորակին, վատայժ ու հեատպառ պիտի զգանք ինքզինքնիս: Աշխատանքին մեծութիւնը չէ, որ անկարելի պիտի ընէ անոր իրականացումը: Հին երէն եկող աւանդութիւնը, և անոր հետ հոյակապ ժառանգութիւն մը բաւական են նւիրական ու հաճելի դարձնելու՝ զմուտքութիւնները հարթելու մեր աշխատանքը:

Արդէն խի սխալած ու խոհական, այլևս նոր սերունդին համար պէտք է հիմնաւորենք իսկաւ մը, որ բխի հայ ժողովուրդի խորքէն ու աւանդութիւններէն: Եւ եթէ պայման է, որ նոր Տարին վաղուայ մեր ակնկալութիւնները արժեցնէ, ջանանք նախընտրել միջոցները, զորքը՝ երեւոյթէն, և կարեւորը հաճելիէն զերազանս զխանալով: Որովհետեւ, իրականին մէջ թաւականները չեն, որ պիտի ճշգին ճորտքիւնը: Մարդկութեան, բայց մանաւանդ հայ ժողովուրդի համար, սարիւնքը միշտ մնացել են նոյնը: Մենք ենք որ, միամիտ ու լաւատես, ամէն մէկ ամբասնդի մէջ պատրանք մը սիրել ենք դնել, մինչ Չարիքը բնագոյական կամ մարդկային, յարատեւօրէն քայլեր է օրերուն հետ: Աւելցնենք, թէ նոր տարիէն չէ, որ պէտք է ակնկալենք, այլ մենք պէտք է ստեղծենք մեզի հարկ եղածը մեր պահանջը պատշաճեցնելով մեր ումերու զատողութեան: Եւ այս ինքնապատահեալութեամբ, մենք ստեղծած պիտի ըլլանք, նուեւ, մեր իրական նոր տարին: Կլիտամ, ուժապաստ, հագնարեկ, բայց հաւատաւոր՝ մպակով զխնայրուել բոլոր զմուտքութիւնները: Դադարին ու հարսանիքին թափոբները միշտ միտան քայլեր են մեր բախնդակ պատմութեան մէջ: Ներշնչուինք այդ աւանդութեան, և բոլոր արտաքին ձեւէրէն անկախ, ջանանք մաքուր ու վառ պահել հիներու ոգին: Երէկը՝ փորձաքար մը և ներշնչարան մը թող ըլլայ և այսօրը՝ նուիրումի օր մը, որպէսզի վաղը անպայմանօրէն յաջողութեան օր մը գտանայ: Ինչպէս հին, աւանդական օրերուն՝ մեր նահապետական օճախներէն ներս, այսօր ալ բախերիկն ու կայծը վառ պահենք մեր երգիք՝ ներքէն ու հոգիներէն ներս: Աւելի վերջ՝ ճարձատու մը և ստեղծագործութիւնը ինքնին կը ծնին: Հերիք է որ ժառանգական կայծը, ջանանք անչէջ մնայ մասնաւորապէս երիտաւարութեան մէջ:

Սկսող տարին: Ա՛ն ալ պիտի անցնի, ինչպէս իր բոլոր նախորդները: Աւ մենք պիտի մնանք նորէն անողոք կեանքին հետ գէժ աս յանդիման: Եւ ոչինչ այնքան աղէտաւոր պիտի ըլլայ հայ ժողովուրդին համար, քան քերտութիւնն ու խռնալէ զուրկ սերունդ մը:

Բախերիկը վա՛ն և հիմնաւորաւ խռնալ մը, — ա՛յս թող ըլլայ մեր նոր տարուայ կոչումը:

Կ.



Անցեալի օրերէն

Հ. Մ. Բ. Մ. Ի վերջին Լոնտոն. Պատու. Ժողովը Պոլսոյ մէջ

5582-54



In corpore sano, mens sana

ԱՌՈՂՋ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ ԱՌՈՂՋ ՀՈԳԻ

Մէթոտիկ մարմնակրթանքը — իրեն նպատակ ունի ուղիւ կեցութեամբ, ներդաշնակել շարժումները համաձայնեցնելով զանոնք խմբական գործադրութեանց մէջ ու զարգացնել մարմնին տոկունութիւնը:

Մարմնին այս ուղղութեամբ պատրաստութիւնը կ'ազդէ հոգիին վրայ, զարգացնելով գեղարուեստաձաշակը, ինքնավստահութիւնը, համարձակութիւնը ու կարգապահական ոգին:

Հայ երիտասարդները կազմակերպուելով սոյն նպատակներով, կ'անջատուին փողոցի անբարոյացուցիչ մթնոլորտէն, կապ կը հաստատեն իրարու հետ, իրարու կը մօտենան, զիրար կը ճանչնան, կը շնչաւն ու կը խորացնեն իրենց ազգային, լեզուական, տոհմային ու կրօնական մասնաշատկութիւնները. մէկ խօսքով, կը դառնան աւելի հայրենասէր, հոյսեւասիրութեան մաքուր առումով:

Մարմնակրթական դուռ կազմակերպութեան վրայ եթէ աւելցնենք հայ պատանիներու սքանչելի կազմակերպութիւնը, որուն նպատակն է մշակելու զարգացնել ամենաթափաւր տարիքէ սկսած հայ մանուկին սրտին մէջ մաշդկային ամէնէն ազնիւ գոհացումները, — հայ երիտասարդութեան Հ. Մ. Բ. Մ. ի շուրջ կազմակերպութիւնը կը դառնայ այլեւս շարժում մը, որը

խորացնելով հանդերձ ազգային ինքնադիտակցութիւնը հայ երիտասարդ հոգիներու մէջ, միանգամայն հաշորդակից կ'ընէ զայն համաժարդկային մեծ խելահիւսի իշխանացման ձեռնարկին:

Այս առաջադրութիւնները պէտք է որ նպատակը կազմեն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Ընկերութեան ու վստահեմ, թէ ա՛յդ է առաջադրութեան նպատակը: Ու նկատի առնելով վերջին տարիներու միջոցին մեր ազգին մարմնական ու բարոյական տարապայման ուժասպառումը, կարելի է երեւակայել այն ահագին դերը: որը սահմանուած է հայ երիտասարդութեան սոյն կազմակերպութեան մանաւանդ գաղութներու մէջ, ուր այնքա՛ն բազմաթիւ են մեր տոհմային այլաւորումի վտանգները: Բայց, ... Caveant consules! (Առաջնորդներ, աջալուրջ եղէ՛ք): Չըլլայ որ կուսակցականութեան մանրէն թախանցէ ձեր այնքա՛ն գեղեցիկ կազմակերպութեան մատաղ մարմնոյն մէջ, որովհետեւ այդ պարագային քայքայուած անվրէպ պիտի նետէ ձեր այնքա՛ն ազնիւ ներշնչումներով լիկած գործը մեր անցեալի շատ մը օգուտաւ ձեռնարկներուն աւերակոյտին մէջ:

Ազգօգուտ ու արդիւնաւոր գործունէութեան մասին անկէլծ ու սրտագին մաղթանքներս կ'ազդեմ Հ. Մ. Բ. Մ. ին նոր տարուան առթիւ:

Առնիա

Է. Մ. ՃԵՐԱՀՕՅ



ՃԵՐԱՀՕՅ

Յիւնադադաւի օրօանին Բուլկէի որբանոցին որբ-արիներէն մաս մը, իրենց Հայաստան մեկնումին առթիւ որբանոցի ռաւոցիչներու ընկերակցութեամբ

Բժիշկին գրեկն փրցուած էօր

ՄԱՆՁԵՐՈՒՆ ԳԵՐԵՋՄԱՆԸ

Հիմա որ սեւերուս վրայ տակաւ կը զգամ տա-
րիներուն ծանրութիւնը, ու ձեռքիս դրելը՝ երբեմն
փետուրի պէս թեթեւ՝ այժմ մահուան բաւերուն մէջ
կը կապուի ու կը շփոթի, կը յիշեմ Նիւն Նիւն օրերը,
այն օրնեան օրերը, երբ ուղեղիս, ջիւղերուս, մար-
մինիս բոլոր բջիջները այնպէս լեցուած էին կեան-
քով՝ ու մահուան դաշտ խորին համար տեղ չէր մնա-
ցած...

Երջանիկ տարիք, ուր կեանքը կ'եռայ, սիր-
ըր կ'զուլ, հոգին կը պոսթիկայ:

Ու ո՞վ կրնայ մոռնալ հազար անգամ կրկնուած
անունը այն պաշտելի ընկերոջ՝ որ միանգամայն դա-
սակիցը էր, տարեկիցը ու սրտակիցը, երեւակայական
վէպերուդ հերոսը, հրաշալի արկածախնդրութիւն-
ներուդ հեղինակը:

Արամն էր իմ զինակիցս Միասին կը խաղայինք,
միասին կը սերտէինք, միասին կը չախուէինք: Երբ
ան հետեւի ազրիւրէն ջուր բերելու կ'երթար, ես ալ
հետը կ'երթայի տափոր մը ուսիս: Երբ ես թռչուն-
ներուն թակարդ լարելու կ'երթայի՝ դաշտերը,
ան ալ հետս կուգար, սուս սուլոյցներով զիրենք
հրաւրելու:

Ու ինչ չարութիւններ չէինք ընել միասին:
Երկու թիթեւ մէկ լուցիկի գամելով՝ դասարանին մէջ
թոցնել, մեղուններուն թեւերը փետուրով՝ լարի վրայ
խաղցնել, ձանձի գլուխներ ձգմելով՝ գլխերը զար-
դանկարել, տղոց բերանը չաքար մը տալով՝ ակա-
ները փրցնել...: Էստ կը յիշեմ որ օր մը ողջ միւնիկ
մը լուցիկի տուփի մը մէջ մտցնելով չորս թաթիկ-
ները չորս ծակերէ դուրս հանեցինք ու ազատ արձա-
կեցինք: Երբ զիրուկ դասասուս ու բոլոր աշակերտ-
ները տեսան որ փոքրիկ տուփ մը սրահին մէջ ինք-
նիրեն կը վաղվդէր խնթի մը պէս՝ ամէնքն ալ սար-
սափաճար դուրս խոյացան...

Անտունն Ուրախականներ՝ որ մեզ կ'առաւտեա-
նեւու պէս յարգել կուտային դպրոցին մէջ: Ճիւս-
դային չարութիւններ՝ որ մեզ հրեշտակներու պէս
կուրախացնէին...

Աւաղ, օր մը կուգայ ուր մեծագոյն տոտրի-
նութիւններն անգամ չեն կրնար այս պրտիկ չարա-
ձճութիւններուն չափ ուրախացնել մարդկային
սիրտը...

Եւ սակայն չկարծէք որ մեր երջանկութիւնը
անխառն էր. ո՛չ, ո՛չ: Կատարեալ մարդ բլլալու հա-
մար գլխաւոր բան մը կը պահէր մեզի՝ պիտի ու
մօրուքը: Ու բո՛ւ ալ, բուսնելու պէս կ'ամբիւրէինք...

Օր չէր անցներ որ դպրոցին ծախի տակ, ձե-
րունի կոճկին վրայ հասակնիս չը չախէինք, մատեր-
նուս ծայրին վրայ բարձրանալով, ու զմեկի խոր-
դախ հարուածով մը չձեղքէինք կոշիտած կեղեւը՝
իրիւս չախանիչ:

Սակայն հիմա որ տարիներն ու մահը մեր մէջ
ամէն մըցում ի սպա՛ն քնքեցին, ինչո՞ւ չ'խոստովա-
նիմ որ, ան ինձմէ հասակով ալ, սլո՞ւմ ալ, ճար-

տարութիւնս՝ ալ, չարութիւնս՝ ալ միշտ զերս-
զանց էր:

Լողալու մէջ իր նմանը չկար: Պայքարի մէջ
մէկ, հատիկ էր: Երբեմն Զատիկի, Երեւելի յոյն
դպրոցին աղօց դէմ կուռի կը բռնուէինք սաղմական
չաքարով՝ ճակատ ճակտի, քարերը է՛ն չիտակ ու է՛ն
հետեւ թուցնողը միշտ ինքն էր: Մեզի համար ամ-
բողջ զիւղին մէջ Ազդին պատիւը փրկողն ան էր
միայն:

Վա՛յ եթէ իր ճախուն վրայ չուն մը հաջե-
կերք օր չանցած այդ չունը պիտի անհետանար:

Զէ՞ որ անգամ մը իր թռչնիկը փարատաղ կա-
տուն աշտարակի մը գաղաթէն կ'օթն անգամ վար
նետած էր, մինչեւ որ եօրր հոգիներն ալ խեղճին
բերնէն դուրս գային:

Սիւլիւրիկի այդ աշտարակը ճիշտ մեր տան դէմ
էր, բարձր ու խաբխուլ մինարէ մը: Յունական հին
մեհեանի մը վրայ թառած, մեհեանը զեռ կանգուն է՝
մինարէն փլած...: Հո՛ն կ'աղօթէր երբեմն բժշկութեան
մայր-աստուածը, հիմա բուերն ու դեւերը կ'իշխեն
հոն: Գիշերը սարսափ կը լեցնէ այդ պատերը, ու
լուսինը այդ աւերակներուն լեզու կուտայ՝ կ'ըսեն...

Արամ այդ դեւերն ալ արհամարհեց: Գիշեր մը
աշտարակէն ներս սոլաջ, խաւաչ ու գործարձիկ
սանդուղներէն սկսաւ բարձրանալ խաբխուրով,
պատերը չոյելով, ստները արիւնելով: Երբսը գա-
ղաթը հասաւ, չունը բռնեց, ձեւքն երկնցաւ: Վերը
անդիւրը տեսան այդ կայծր ու կուսցի սաղալի հա-
ռածներ տեղացուցին իր աչերուն:

Իր դէմքին վրայ միշտ մնացին այդ վէրքի
սպիները: Սակայն աշխարհիւններ կան որ զեղեցկու-
թենէն աւելի կ'արժեն...: Այդ օրէն ի վեր զիւղին
հերոսն էր Արամ:

Քանի՞ քանի՞ անգամներ ալ շինեցու դպրոցէն
կը կանչէին գայն՝ վարժուհիին դառագիւրք մը տա-
նելու, աշակերտներուն մարմնամարզ մը ցուցնելու,
սրտորակով: Եւ սակայն՝ այս պատանին որ
անդիւրը կը փնտէր ու մահչերը կը ձեռէր, աղջիկ-
ներու առջեւ աղաւ մը պէս կը դադար ու մեղաւորի մը
պէս կը կարմրէր...

Էգբեր իրեն համար տրտակարգ, բայտիկ, ան-
բնական, անկաշխի էակներ էին: Մայրիկը՝ իր փոքր
հասակէն մեծած ու իր բոլոր եղբայրներն ալ արու-
բլլալուն՝ Մանչանց կը կոչուէր իրենց տունը: Բա-
լորն ալ միեւնոյն փայտէն տաշուած՝ ու մեզ ու չքեղ
պատանիներ էին, — զիւղին փառքը: Բայց բոլորն
ալ Արամին պէս չուտած, ամչկոտ, ախտաղին զգա-
նութիւն մը ունէին: Կիները միայն հետեւէն տեսած
բլլալով՝ ձեռքի սեղմում մը դինաթափ կ'ընէր զի-
րենք...

Արամ քանի՞ կը մեծնար՝ ա՛յնքան կը տկարա-
նար: Եկեղեցիին մէջ երգած տուն ձայնը կը փոխու-
ղաղոցին մէջ պատասխանած տուն միտքը կը խա-
ւարէր. զիրք մը կարգալու սրահուն՝ էջը չըտրծուցած՝
կարգացածը կը մոռնար:

Տղոց մէջ տարտամօրէն կը փոխային որ «սոթ
բանէր կ'ընէ», «սղնածուծը հասեր է»...

Օրեր կային որ քովը չէր մօտեցուեր, այնքան

յոսեփոս, դաժան, գայլապիտո կ'ըլլար. բռնած բանը կը կոտրէր:

Սակայն իր մտաւորական ոյժը կորսնցնելէ վերջ՝ քիչ քիչ իր մարմնական առաւելութիւններն ալ անհետացան: Մաղերը փայտած Սամսոնի մը պէս՝ սրմանգուկ, գողգոթուն, չուարած բան մը եղաւ: Այտասկերը զոռեցան, աչքերուն ծիրը կապարի գոյնը ստացաւ:

Ու չգտնուեցաւ մէկը, ո՛չ քահանան, ո՛չ վարժապետը, ո՛չ հայրը, ո՛չ իսկ բժիշկը, որ այդ տղէտ պատանին բացատրէին թէ այդ մենաւոր ու մեղաւոր զրոսանքները զինքը գերեւման կը տանէին...

Արեւոտ օր մը, դանդաղօրէ՛ն, ժայռերուն դազաթը գացի՛ր միտախն: Յանկարծ զրպանէն արծաթէ խոշոր դրամ մը հանեց ու ձեռքի լաշն շարժումով մը ծովը նետեց զայն: Արծաթը վայրկեան մը փայլեցաւ արեւուն տակ, յետոյ անգուցիւրն մէջ կորսուեցաւ ու պզտիկ ճաղիւն մը հանեց:

— Ասիկա տասներորդն է որ հօրմէս գողցայ, բռաւ, ծովը նետելու համար...: Իւրաքանչիւր փորձութիւնս այդպէս կ'ուզեմ պատժել. բայց կը զգամ որ ո՛ւշ է արդէն, կամքը մեռեր է մէջս, ա՛լ թաղաւորի գանձ մը իսկ չպիտի բաւէ այս ծովը լեցնելու...:

Ասիկա մեր վերջին պտոյսը եղաւ ու մեր վերջնաթեր խոտակցութիւնը:

Արամ անկողին ինկաւ ու ա՛լ չ'իշտաւ:

Մեր ծնողները մեզ արգիւնցին իրեն աչքերէլ: Գիւղերու մէջ ուր գիտութիւնէ աւելի բնազդը կը տիրէ, հո՛ն ուր բժիշկի ոտքը կը կոխէ, բարեկամները իրենց ձեռքը կը քաշեն՝ անասնական ինքնապաշտպանութիւնով մը: Ու բնատանիքը ի՛նչ ցաւին մէջ կը կծկուի, միայնակ կը մնայ իր հիւանդին հետ՝ որ յաճախ ամենատարրական զգուշութիւնն իսկ չ'ունի իր սիրելիները չվարակելու համար...

Ամիսներով տարտամ չշուկներով բռնակոտորացայ:

— Երէկ գիշեր նորէն բժիշկ կանչուեր է...

— Թաւերով արիւն փոխեր է...

— Փոքրիկ եղբայրն ալ անկողին ինկեր է... Օր մը, սակայն, ծնողքէս դադանաբար, իրենց տունը մտայ, ու վախն ի վախ սանդուխներէն վեր ելայ:

Հիւանդին սենեակէն բժիշկը դուրս կ'ըլլէր: Ընտանիքին անդամները զայն պաշարեր էին երկիւղած ձեւերով:

— Ոտքդ պաղնեմ, բժի՛շկ, կ'ըսէր ծերունի հայրը դողալով...: Յոյսի բա՛ն մը տաւր մ'աղի:

Բայց ան ճակատագրական կտրուկ շարժում մը բռաւ:

— Ամէն ցաւ վախճան մը ունի, բռաւ:

Բժիշկէն վերջ չուտով զիս զրկեցին քահանան կանչելու: Տէրտէրն ինծի խաչ մը ու գիրք մը տուաւ, ու խնդրեց որ հեռն երթամ, վախն ու վառութիւնը սիրտս լեցուցին:

Ես այն ատեն զեռ չէի տեսեր թէ ինչպէս կը մեռնին մեր թուեաւորած չուները՝ ստլոյտասկները խաճնելով, կանգնելով ու իյնալով, դողալով ու պաղատելով...

Սակայն այդ օրը սորվեցայ ինչ որ բոլոր բժիշ-

կական կաճառները չ'ուղեցին սորվեցնել՝ թէ մարդ մը անասունի մը պէս չի՛ մեռնիր...

Հոն՝ ուր Գիտութեան մարդը յոյսի փոքրիկ բռա մը անդամ չէր գտած բռելու՝ կրօնքի պաշտանեան հաւատքի անհուն պաշար մը բերեր էր իր մոգազաթի գրքին մէջ: Հո՛ն ուր բժիշկը կեանքը կը չափէր ու կը կտրէր՝ չո՛ր ձեռով մը, քահանան յաւիտենական կեանքի անծայրածիր հորիզոններ կը բանար՝ օրհնական շարժումով մը: Ու երկու հազար տարիներէ ի վեր կրկնուած իր բառերն՝ մի՛շտ նոյն գաղափրն ունէին ոսկեղծելու այն վերջին ժամերը, ուր գիտապէ՛ս, ամէն յոյս, ամէն հաւատք, ամէն սէր, ամէն իրականութիւն ու ամէն երազ կը սնանկ սնայ, կը մեռնի, կը փոխ: Գերադա՛յն պարտութեան ժաման՝ գերադա՛յն յաղթութեան խաբկանքը:

Քարկա՞նք թէ իրականութիւն, չե՛մ գիտեր: Սակայն այդ օրէն ի վեր համոզուեցայ թէ որքան ատեն որ մարդերը պիտի մեռնին՝ ա՛յնքան ատեն պիտի աղբի նաեւ կրօնքը:

Արդարեւ, քահանային մեկնելէն վերջ, աննիւթական շնորհ մը իջած էր արդէն հիւանդին դէմքին վրայ: Անկողնին մէջ նստաւ, ձեռքը ձեռքերուս մէջ դրաւ, ու խօսեցանք իրարու հետ՝ հի՛ն օրերուն պէս:

— Ինքզինքս երբէ՛ք այսքան լաւ չէի զգացած, բռաւ...: Վաղը եթէ արեւ ըլլայ՝ կ'ուզե՞ս որ միտախ դաշտ երթանք պատելու...:

Յետոյ, յանկարծ լսեց, ականջս լարեց, տրժգունեցաւ:

— Կը լսե՞ս, բռաւ, իրիկուան գանգակն է...: Կը յիշե՞ս, ամէն անգամ ես կը դարնէի մեռելին գանգակները...: Օր մը երբոր իմ կարգս ալ գայ, կ'ուզեմ որ դուս դարնես ինծի համար: Բայց այնպէս ուժով քաշես պարանք՝ որ արաբ աշխարհ իմանայ...:

Սակայն ի՛նքն ալ, ե՛ս ալ, այնպէս համոզուած էինք որ այդ օրը երբէք պիտի չգար...

Հետեւեալ օրը՝ զարնանային զմայլելի՛ օր մը՝ բնդհատ բնդհատ զօղանջ մը փրթաւ օդին մէջ:

— Հրդե՞հ կայ, մայրի՛կ, բախ...

— Շուտով չապիկկ առ ու ժամ գնա, աղո՛ս, Արամը մեռեր է...:

Մեռե՞ր է...: Մեռե՞ր է...: Խենթի մը պէս վեր վաղցի, փոքրիկ խուցի մը մէջ բանտուեցայ, դուռները գոցեցի, պատահանները խցեցի՝ այդ բնդհատ բնդհատ ու անբնդհատ զօղանջը չիմանալու համար...:

Սակայն ի դու՛ր: Գիւղական գանգակը ամբողջ տարին ինծի համար լացաւ:

Ընտանիքներ կան որոնց անդամները՝ խաղի թուղթերու պէս իրարու ետեւէ կ'իյնան: Սակայն վարակումը հնձեց այդ դեռատի կոտիճները: Մահը փակեց այդ տան դուռը: Ու մինչեւ այսօր, գիւղի պատանիներուն կը ցուցունեն մանչերու գերեզմանը:

Ռ. ՍԵԼԱԿ

Լոզան 1913

(Տօք. Ռուբին Չիլինկիրեան)

ԲԱՐՁՐԱՑԻՐ, ԲԱՐՁՐԱՑՈՒՐ,

ՀԱՅ ԱՐԻ՝

Սրբազան դաւանանքիդ եւ վսեմ նշանաբանիդ քաղցր արձագանքը

Կը բերեմ քեզ այսօր՝ Նոր Տարիի սեմին վրայ,
Որպէս զի դո՛ւն ալ, Տարիին հետ, պատահիի անմեղ օրը-
ներէդ կարող
Ու երգումներով նուիրականացած գերագոյն Ուխտի նո-
րոգես:

Ժամանակին հսկայական անիւր կը քաւալի անայրաք,
Եւ իր սեւական հոլովումին մէջ
Նոր նուանումներու յաղթանակը կ'երգէ:
Երկի ժանգը այսօր կը փայլի, իսկ խաւարը՝
Իր մթուրեան արհաւիրքը փարատած՝
Լոյսի ցոլեր կը սրսկէ ամենուրեք:

Դո՛ւն ալ, Հայրենիքիդ, եւ մանաւանդ տառապած
մարդկութեան համար
Տոփող Սիրտ կամփի պաղպատներով զրահած,
Արհամարհէ՛ կեանքի դժուար՝ նանապարհին վրայ ծաղ-
կած տառակները:

Յառաջացի՛ր անվանդ ու յամա՛ն՝
Վանդի, անոնք լո՛ւ նշաններդ կարիւնտեն,
Իսկ հեւայող կուրծք չեն կրնար բզկէլ:
Կոխո՜սէ՛ զանոնք քո ծանրաշափ քայլերով ու ժգնուր-
եամբը,

Ու հեռուն պիտի նշմարես վարդի մը տեղը զգլխիչ,
Ու պիտի զգաս անոր հոգեզարար բոյրը երկնային:
Վանդի, Հա՛յ Արի, վարդի մը հակասագիրք՝
Զայն կաշկանդող տառակներուն փայլներէն է կայսուած,
Ինչպէս յանախ երազուած երջանկութիւնը մարդոց՝
Որ դախան տառապանքին անողոք նիրաններուն մէջ
Կը հեծէ անվերջ:

Դո՛ւն, բարութեան, առաքինութեան շաղախովը քրճուած
Հոգիիդ վսեմ բռնչներուն անձնատուր, սլացի՛ր անհունին
մէջ,

Ու նայուածքիդ մէկ սեւեռումովը՝
Զափէ՛ վեհելք, մարմնի եւ հոգիի ազնուացման:
Ու Բարձրացի՛ր, Հա՛յ Արի:
Թարփչներդ խոնարհած՝ անցի՛ր հպարտօրէն,

Նստադուրեան, հանդիսի եւ շուքադուրեանց գեհեմական
ֆառուղիներէն՝

Ուր զազիր հեռանքի բուռնութեամբ եւ փրփրոս գինին կը
մատուցակեն:

Խոյ՛ կայն ասէլութեան եւ արհամարհանքի սուր նշե-
րովդ,

Ու բիբերդ սեւեռէ՛ միայն անձամբ բայց բովիչ այն ե-
րանութեան՝

Որուն հմայքէն անմեղօրէն գինովցող քո աննենչ ու ա-
նապակ հոգի՛դ՝

Պիտի բզձա՛յ միտ հոյա՛լազ վերելք՝ գերեզօր գեղեց-
կութեանց:

Ու Բարձրացի՛ր, Հա՛յ Արի:

Տե՛ս սրբազան Տաճար՝ դնդերի եւ հոլի պատշաճութիւն,
Որուն նուիրական խորանին վրայ կանգնած լուսեղէն
ֆառմեր

Ծիրանեզոյն պատմունքներ զգեցած՝

Բարութեան եւ գեղեցկութեան հետաքրքիր կնդրակները
մխացնող

Իրենց ոսկիէ բուրվառներով, կը խնկարկեն Ուժը՝ աս-
ւածակներ

Ու բոցածին Վահագնին՝ որուն շունչը մոլեգնօրէն կը
ծաւալի

Ու եղբայրօրէն կը միանայ խնկաւէ բուրումներու հետ:
Ծծէ՛ այդ երկնային բոյրը՝ որ Բարիին ու Գեղեցկին

Հաղորդութիւնն է միանգամայն:

Յառաջացի՛ր տիրականօրէն, անողոգող եւ սեւական
զնացով,

Մինչեւ ար հասնիս ստորոք այն հսկայական բարձունքին՝
Որուն գործ էղանցներէն ցեղիդ յաւիտենական իտէպը

կառչած է,
Եւ որուն կատարը սպիտակ անմեղութիւնը յաւերժացած է:

Ուխտաւայրդ է ան, որ հեղնած է մանկութիւնը դարեւուն:
Թա՛փ տուր քեւերո՛ւդ,

Երկիւղածօրէն համբուրէ՛ փեշերը այդ ալեւոր ծերունիին՝
Ու վաղուան Յոյսի պատգամները շնորհելով

Քեզ հետեւող հաւատացեալ կարաւանին՝
Անձակէ՛ պահ մը հորիզոններ չափող հրաբուրբ հայ-
եացիդ՝ վե՛րը,

Ալեփառ զաղաքը այդ հսկայ եւ ան պարտի Բարձունքին
Որուն յաւիտենապէս սպիտակուած ձիւնէ կուրծքին վրայ,

Ոչ մէկ բիծ չէ՛ կրցած իր սրբապիղծ հետքը դրոշմել,
Հոգիիդ պէս՝ իր կուսութեամբը անմեղ՝

Որուն համան բուրասանին մէջ ունեցող շուքաներ՝
Իրենց ցասումն ու նախանձը պոռկեցին:

Ու կարաւանը՝ որ գիտակցօրէն քեզ հիւ, քայլերով
հետք կ'որոնէ,

Առաջնորդէ՛ դեպի վեր հայաբանդակ ոլորտներ գեղեց-
կութեանց անհունին՝

Ու բարութեան ձգտումը հոգիիդ խորը դրոշմած՝
Բարձրացո՛ւր զայն, Հա՛յ Արի...

Յիւլիպէ

ՀՐԱՀԱՆ



Հ. Մ. Բ. Մ. ի Ռուսական օրհանգի եկած եւ Ռուսներէ
սեղական խումբերը՝ մրցած խորհրդատուովի օրը:

Լուսնի. Հ. Պարսիկպանեան — Պուրեթո



Հ. Մ. Ը. Մ. ի վառնայի V1 Մասնաճիւղի զաւլիկներու խումբին մաս մը իրենց առկայ Պր. ՕՏՏԻՔԻ Էնկիպարեան եւ փոխ առկայ Պր Մուսեղ Կուսուղեան Նկարում իրենց Ա.ին կարգի բնութիւնը անցնելէ յետոյ:

ՄՇԱԿՈՅԹԸ ԵՒ Հ. Մ. Ը. Մ.Ր

Ստորեւ գրուած տուեքը թո՛ղ նկատուին իրրեւ տկար արտայայտութիւն մը Հ. Մ. Ը. Մ. ի տառապազրած վսեմ նպատակներուն հանդէպ իմ տածած բարասուն համակրանքին:

Հայ իրականութեան տխուր պատկերներուն քով, Հ. Մ. Ը. Մ. ի արտաքերած ձեռքերը եւ բարձրանալու մը՝ ինքնին շատ սրտազնդիչ երեւոյթներ են, անմիջապէս քաջալերանքի արժանի:

Կոտորակուած, հպաճուած, տառապալիքալից Հայաստանի գլխուն վրայ տարափուտ արքայապետութիւնը ընթացքին՝ մեր երիտասարդ սերունդը դիտցուաւ եւ կրցաւ միշտ պայծառ պահել մեր ազգային նկարագրին գեղեցկագոյն գիծը, — գիտեմ բախտին հարուածներուն գէժ ճակատիլ չվհասիլ, տառապանքի նսկայ սուրին վրայ կոփել պայքարի նոր գէնքեր եւ, անոնցմով գինուած՝ գինքը տանջողներէն աւելի ապրիլ:

Հ. Մ. Ը. Մ. իր յարատեւ գործունէութեամբ, մարմնացումն է այդ յաւակնական գծին, մեր ազգային ինքնուրոյն գոյութիւնը պահպանելու բնաղիւն:

Ազգին մշտապէս հանձարն է որ կը ճառագայթի:

երիտասարդութեան անխնայ ձեռքեր ընկու. ցանկութեան եւ կարողութեան մէջ:

Դնդերները ամբայնելու, զգացու բները աշուտացնելու, բարոյականը բարձրացնելու, հոգիին թախք տալու առաջադրութեամբ կոտորուած տէն ձեռնարկ կը մննջնէ տղային նիւթական ու բարոյական դժբաղու իր, զոր նախարդ սերունդներէն ժողովագրած ենք եւ սքր աշխարհն շատ նաւագեցու գերջին տառնամեակի ընթացքին:

Ազգային գոյութեան պահպանման եւ ուժեղացման գաղափարը, երէկ, կախաղաններու եւ գերեզմաններու վրայ կը սաւառնէր, պայքարի բոցին ու արեան հեղեղներու մէջ կ'աւճանար, իսկ այսօր, բարձրմշակոյթի մշտանում տալիքներէն միայն պէտք է ծծէ իր կենսահիւթը:

Ժամանակ է որ մեր երիտասարդ սերունդը գիտակցի, թէ ազգի մը, մանաւանդ մեզի նման փոքր ազգի մը գործութիւնը եւ երջանկութիւնը պայմանաւորուած են բարձր ու բաղձնակողմանի մշակոյթի մը անբանալով:

Այս ճշմարտութեան թախանցած ըլլալու տարացոյցներ կուտայ Հ. Մ. Ը. Մ. ի: Հետեւաբար, մեր պարասկանութիւնն է թէ՛ իրրեւ մարդ, թէ՛ իրրեւ հայ քաջալեր հանգիստնալ տնոր:

Առնիստ

Յ. ՊՈՂՈՍԵԱՆ

ՄՍԱՆՆԵՐՈՒ ԱՌԱՔԻՆՈՒՔԻՆԸ

Մարմնակերպությանը ներքին շնչախոլը դիւրաւ կը փորձուի հարցնել՝ «Մարմնակերպութեանը միջոց մըն է թէ՛ նպատակ»:

Եթէ միջոց մըն է մարմնակերպութեանը, պէտք է անոր տալ ոչ-դաշտիտրական դեր մը եւ զայն դորձիք ընել կեանքի տալիս ֆիզիքական պոքսթրանքուն: Այս դերին մէջ մարդ մեզ կը ներկայանայ իբրեւ անասուն մը — խորհող, եթէ ուզէք — եւ իր մասնները կը կառարեն մեքենայի մը դերը:

Եթէ նպատակ մըն է մարմնակերպութեանը, պէտք է տալ իտեալ դեր մը, զայն հետացնել բնազդէն եւ օգտաւոր ձեւերակներէ, խորհուրդ զնել մասնին մէջ, վսեմին ու գեղեցիկին պոքսթրանքուն ընել անոր տալիս եւ անոր բանմանը միմայն զաղախարականի մարդը:

Մարդ իր կազմուածքով եւ խառնուածքով կը պոքսթրանի թէ ֆիզիքական եւ թէ հոգեկան աշխատանքներուն, ու շատ դիւրաւ կրնայ անցնիլ մէկէն միւրը, մարմնակերպութեանը ընելով, այսպէս, թէ միջոց եւ թէ նպատակ:

Գոյութեան պոքսթրանը կը պարտադրէ մեզ մեր մեծ աշխարհութեան տալիս ընել մեր մասնները: Սակայն, երբ նախապատմական մարդը իր բազուկներով կը մաքաւէր վայրի կենդանիներուն դէմ կողով կոկորդիլ՝ օթլէթի քաջագործութիւնը չէր որ կը կատարէր: Այս բիրտ ուժին քով կրնանք դասել նաեւ այն տկարակալմանը որ իր բժիշկին խորհուրդով կ'ստիպուի իր սենեակին մէջ սեղն առաւոտ կորդ մը մարդանքներ ընել: Այս վերջինը եւս հետեւ է իտեալը ներկայացնել՝ քանի որ մաշկանք կ'ընէ ազդելու համար: Մասններու այս ձեւ գործածութիւնը ըլլայ բիրտ կամ ոչ, զուրկ խորհուրդէ եւ զաղախարականէ՝ կը ներկայացնէ՝ մարմնակերպութեան սեղնէն ստորին աստիճանը:

Երկրորդ աստիճանին կը հասնինք, երբ նկատի կ'առնենք գիւնարը, որ ընդհանուր գծերով կը ներկայացնէ նոյնը ինչ որ նախաճարը կ'ընէր իր կայծքաբէ գէնքով — գոյութեան պոքսթրան: Նախաճարը կ'ընէր այս բանը միայն իր անհատին անունով, իսկ գիւնարը, իբրեւ ընկերային էակ, կ'ընէ ոչ թէ իր՝ այլ ազգին, կամ հաւաքականութեան մը անունով, եւ գոհունակութիւնը ունի իր մասնները հայրենիքին ի սպաս դրած ըլլալու:

Աւելի բարձր աստիճանի մը վրայ կը կենայ սթօր: sport բառը կուգայ լատիներէն *disportare* էն, որ կազմուած է *dis* (հեռու) եւ *portare* (տանի) բառերէն եւ որ կը նշանակէ «հեռու տանի», այսինքն զմեզ հեռու պահել սովորական զբոսգացիներէ: Ասոր կ'ըսեն խաշ: Խաշը բոլոր կենդանի արարածներուն մէջ բնազդն է: Մարդ կը խաշայ, ինչպէս մանուկը, կատուին ձագը եւ կամ գոռուկը կը խաղան:

Խաշը թէեւ բնազդ մըն է, սակայն պատերազմէն աւելի վեր մակարդակի մը վրայ կը գտնուի, որովհետեւ ներքին հետ սեղն մէկ ասնջութիւն հաւնի: Խաշի առն իրապէս հեռացած ենք գործի աշխարհէն:

Աստիճան մը եւս բարձրանալով կը հանդիպենք ֆէրիքլէսի շրջանի յայն օթլէթին: Հոս ոչ կեանքի պոքսթրան կը մընի, ոչ հայրենիքի ի սպաս կը դրուի մասնը, եւ ոչ ալ խաշի բնազդը զոհաշու կը ստանայ, այլ յայն մարդիկը իր մարմնակերպութեանը կը կատարէ զաղախարականի մը համար, ի պատիւ Աստուծոյ մը — Իսնիսիսի: Աթլէթ բառը կը ծագի յունարէն *աթլէթիս* բառէն, որ կը նշանակէ մրցանակի համար մաքառող: Նոյնիսկ այսօր Աթլէթի վայրենիները կը կատարեն կրօնական պարեր, սուսերամարտութիւն եւ այլ խաղեր: Արեւելի այս մարմնակերպութեանը թաղուած է վհուկութեան, միախառնութիւն կրօնքի մէջ, բայց եւ այնպէս իտեալացած, սոյնուացած եւ անջատուած է գոյութեան պոքսթրանի բիրտ գործակալներէն: Սակայն յայն ոգիմոլիականը (եւ ոգիմոլիական բանն իսկ յոյց կուտայ Արիմոլոսի անմահներուն նուիրուած ըլլալը) մեզ կը ներկայացնէ կրօնական այս մարմնակերպութեանը զաղախակալը: Կրօնական այս վհուկութեան զատ յայն մարդիկը մեզ կուտայ նաեւ նոյնքան բարձր զաղախարական մը — գեղեցկագիտական: Յոյնը, ինչպէս ամէն բանի մէջ, այս զուտ կրօնական մարմնակերպութեան մէջ եւս դրու գեղեցիկին գալախաբը եւ անով ներկայացուց մարմնակերպութեան գեղարուեստին գերազոյն իրադրութիւնը — Ուժն ու Գեղեցիկը մարդկութեան իտեալը ընելով:

Պէտք է խոստովանիլ, սակայն, որ անցած է այն դարը երբ ներքին զուտ ներքին էր եւ գեղարուեստը կ'ըմբռնուէր իր գուտ գեղարուեստ: Բաներսդ զարը եկած է խորհուրդ զնել սեղն բանի մէջ, եւ մարմնակերպութեանը դաշրած է թէ բիրտ ուժ ըլլալէ եւ թէ զուտ գեղեցկագիտական մարդն մէջ սահմանութիւնէ: Անք մարմինը կը կ'օթլենք ոչ թէ միայն զարուար եւ առողջ ազդելու եւ թշնամիին ազդելն հարուած մը տալու — ինչ որ մարմնակերպութեանը կ'ընեն միջոց — կամ՝ գրգռելու եւ Ուժն ու Գեղեցիկը պաշտելու համար — ինչ որ մարմնակերպութեանը կ'ընեն ներպատակ — այլ աւելի բարդ ու բարձր ըմբռնում մը զոհացնելու համար: Վերոյիշեալները չեն գոհացներ 20րդ դարու մտածողութիւնները: Մարմինը կը կերտենք զլիսութեամբ երկու հոգաւորի, — մասններու առաքինութեան եւ, անոնց միջոցաւ, հոգեկան առաքինութեան համար:

Արդի հոգեբանութիւնը մեծ կարեւորութիւն կ'ընծայէ մասններու եւ մարմնոյ մոտոր (motor) աշխարհին, եւ շատ սերտ կապ մը կը տեսնէ հոգեկան եւ մարմնական գոյամիակներու միջեւ:

Մասնները կարելի է կամքի գործարաններ նկատել: Ապրիլ՝ ըսել է կամենալ եւ մասններն ալ այս կամքին արտայայտութեան գործարաններն են: Կատարեալ մարդուն արտայայտելու ձեւը սոսկ բառերով չէ՛ այլեւ գործերով: Եթէ մասնները այս տեսակէտէն գիտենք՝ շատ դիւրաւ կարելի է ըմբռնել թէ՛ անոնք կ'առնեն իրենց աստիճանութիւնները եւ մաշկութիւնները: Օրինակի համար՝ ասիւնութիւն եւ յայտնութիւն մասններու աստիճանութիւններն են, իսկ յոգնութիւն, քմահաճայք, տալիս, ինքնասանձութիւն պակաս եւ անվճարականութիւն՝ մասններու թերութիւններ: Իրական մարմնակերպութեանը խորհելու

և գործադրելու անցած միջոցը կը կախեցնէ, քանի որ լակերպի ձևը ստեղծելու համար, լուս և ուղղամիտ գործնչու կը դնանտէ: Մարդիկը կ'ըլլայ ներսւս և լ'ըլլայ քնէ կ'ընէ աղղեցիկ և չեղանէ: Այսպէսով մարմնակրթանքը կը դառնայ կամքի մարզանք:

Մարմինը կը կրթենք նաեւ մարմնակրթութեան ոգիին համար: Մարմնակրթութեան ստեղծութիւնը իր հետ էր բեռն նաեւ հարցի տարբերութիւն: Այդ տարբերութիւնները կրնան ըլլալ անհատական և բնկերական:

Մարդիկին հոգին և մարմինը աւելի մօտ են իրարու քան հասարակ մարդուներ: Կրթութեամբ մարմինը կ'ըլլայ պարզութիւն, քաջ և ինքնամասն, կ'ապրի պարզ կեանք մը և իր սովորութիւնները կ'ըլլան նախքան պարզ: Մարդիկին կամքը կ'ըլլայ առողջ, կայուն, վճռական և միշտ պատշաճ: Այս բոլոր միասին կը հիւսնեն մարդիկին փառքի պատկը — իր գործը ունենալով իրեն:

Մարդիկին պարտականութիւնը չի վերջանար իր «նախն» զգացումովը: Ան չաղբիւր Ռաբլեյի հոգիին մէջ: Եթէ այդպէս ըլլար, հարկ չկար զօրաւոր անհատականութիւն մը պատրաստելու յոգնութիւնը յանձն տանել: Անհատականութիւնը անհրաժեշտ է, որովհետեւ մարդ բնկերակն աշարած մըն է և կ'ապրի իր նմաններուն քով: Ուրեմն կեանքի ուղիէն անստանալով բնկանալու համար պէտք ունի ինքզինք կառավարելու: Մարդիկը զարաւոր «նա» մը ունենալով հանդէս գիտէ անիւ բան մը գտնել և յանձնել կեդրոնական մարմնի մը՝ հաւարական օգուտ մը համար: Այս գտնութեան կ'ընեն կարգապահութիւն (սիսթիմ): Եթէ ամէն «նա» տանձաքնակ գործէր, և իր կամքը պարտադրէր միանշանակ՝ այն ժամանակ պիտի ունենայինք «բոլորին պատերազմը բոլորին դէմ»: Ուրեմն, մարդիկը զիսկ եկրարկուիլ: Հասարակելու այս զգացումը իր հետ կը բեռն նաեւ հանգստեմբ (tolerance), ուրիշին գաղափարը յարգելու տարբերութիւնը: Մարդիկը գիտէ նաեւ պարտաւիժի ու կը յարգէ ուրիշներու յաշխանակը: Ուրիշին «նա» արդիւր մը չի նկատեր իր «նա»ին, կ'ունենայ պարտականութեան գիտակցութիւն և անոր զուգորդութեամբ նաեւ պատասխանատուական ըմբռնում, քանի որ պատասխանը պատասխանատուութիւն կը նշանակէ:

Մարդիկը կը կատարէ իր պարտականութիւնը իր անձին և բնկերակեան հանդէպ և կը ձգտի Homo Sapiens-ը հասնել իր գերագոյն կաշխատութեան, դառնալով տիեզերք մը ինքն իր մէջ ու ինքնիրմով կատարելով:

Սեփա, 22 Դեկտ. 1925

Յ. ՄԱՐԹԱՆԱՆ

ԻՆՁՈՒ ՆԱՄԱՐ

Այդէն բարձրացինք տարի մը ևս, և նոր տարին մեզ կը դնէ նոր հարցերու և պահանջներու առջև:

Յետադարձ տկնալի մը բռնական պիտի ըլլայ, արդէն, մէկ-մէկ տեսնելու համար այն բոլոր պահանջները և սխալները, զորս ունեցանք անցեալ շրջանին: Ատիկա ինքզինք սրբազնի պիտի նշանակէ:

Արիւնքու կազմակերպութեան և ոգիի մասին մեր մէջ շատ անգամներ խառնած է. այնպէս որ, գրեթէ անոր օգտակարութեան մասին բնկիւր չէ մնացած այլևս: Սակայն տարեկան «հաշուէշխո» հարցում մը կը դնէ մեր առջև ինչո՞ւ մեր մէջ դեռ չէ նստկցում իսեալ սխալները և երբ պիտի հասկցուի ան: Ահա անվերջ խորհրդածութեան նիւթ հայթայթող հարցում մը: Այս, իրականին մէջ այնպէս համարում ենք որ, մենք արիւնք ենք, թէ մենք հասկցած ենք նշանակութիւնը անոր, քանի որ զայն կը կիրարկենք մեր մէջ և թէ՛ մենք սխալուողմի կրթիչ դաստիարակութեան տաշխորդներն ենք եւն, սակայն դարձնականին մէջ կը սեւեռուի որ մենք դեռ շատ հեռու ենք այդ բոլորէն, որչափ ատեն որ չենք բնկում անոր նշանակութիւնը և չենք մարտնչում զայն: Չախաղանքութիւն մը չպիտի ըլլար բնկ թէ մեր մէջ սխալուողմը շատ մեկերեսային է դեռ և՛ քիչ բաշխութեամբ մը՝ եթէ տղայաց զբոյժն սխալուողման տարազը հանենք, մնացեալը անպատրաստ մը պիտի ըլլար: Թերեւս շատեր անարդար նկատեն այս եզրակացութիւնը՝ ներքնապէս բնկանալով թէ իրականութիւն մըն է անիկա: Մեր շրջանին մէջ մենք դեռ չապահանջանք այն պատանիին, որուն համար հպարտութիւն կարողանայինք բնկ, անա ճշմարիտ արի մը, որը պիտի կարողանայ յաւանքիկայ սեւեռուողի տաշխորդը ըլլալ: Դեռ չի պատահեցանք այն մեկին, որուն հետ միս ու ոսկոր դարձած ըլլար սխալուողմը, չի պատահեցանք կրտսեր, այն հայ աշխիւն որը կոչուած է իր բազմիցս չարքանդ ցիլին պատահան կերակուելու, ահա թէ ինչ որ այնքան սրտցաւրէն պէտք է կրկնել հարցումը, — Ինչո՞ւ մեր մէջ դեռ չէ նստկցում իսեալ սխալները:

Այս հարցումին առջև, գիտեմ, բոլորն ալ իրենց մեղմացուցիչ և արդարացուցիչ պատգամները և պատասխանները ունին: Սակայն, ինչ որ ալ ըլլայ բնկիւր, վճիռն բան մը չէ կարելի փոխել մինչև այն օրը, երբ մեր աշխատանքներուն մէջ չենք տար անհրաժեշտ փոխութիւնը:

Մենք առ այժմ, կը նմանինք անջրպետին մէջ սաւառնող այն թռչունին, որ չ'գիտէր ո՛ւր և որ ծառին իջնալ. մարգական հակայ օվկիանոսին մէջ՝ մենք կը նմանինք այն երկրուն նաւին, որ ուղղութիւնը կորսնցուցած է և չի գիտեր որ կողմ յառաջանալու և այս ամէնը միմիային անոր համար որ, դեռ չի կարողացանք զանազանել և զոռել սխալուողմը՝ օթել թիկուն և ֆոթիլը ինչ գրանցուցիչ արտաքինէն անոր համար որ, մենք սխալուողմը եղած ենք արտաքինով միայն և բնաւ հոգ չենք տանիր ներքինին, հոգիին: Մէկ բարեւ, երկու մարդական շարժում և առանց իսկ նշանակութեան թախանցելու, դոց սորվում քանի մը գումանայրի յարաւած... և պոչաւ: Մնայեալը, — մնայեալը կը մնայ միշտ երկրուն, անորոշ և անմարտ:

Այս չէ, սերելի տղաք, մեզնէ պատուածը: Մենք պէտք է քիչ մը դուրս ելլենք մեր հագուածներու սանձանէն և եթէ ի վիճակի չենք շատ հեռուները երթալու, գոնէ հետաքրքրուինք մենք մազմուկ մեր անմիջական շրջապատով, օգնենք իրարու և չի թա-



գուհիք սք, մեր աղքատը վիզը ծռւած մեղի նայի օգնութիւն հոյցէ, չի թողունք, կրտսմ, որ դժբախտացածները մուռացի սնի շարժումներով մեր աշակերտութեան շինքն, այլ մեք գիտնանք ինքնաբերաբար կրթիչ հոն՝ ուր մեր օգնութեան կարողներ կան, որպէսզի որ մը ճակատարաց կանգնանք ըսել թէ, մեք այլ կոտորակներ մեզ պարտականութիւնը:

Ահադին աշխատներ իրարու կը յաջորդեն և դեռ մենք ձեռքներն ծալած դիտողի վիճակին մէջ ենք, քան քանի ուղեւ հալելուն և խթորիկներ անտուն և ապաստարան թողուցին մեզ սրբէն դժբախտացած աշակերտները և չի դառնալու համար իսկ մեզմէ, որը, հոգաբարձի դատումն ի ձեռքին և քարայր սիրտերը սթապելէր թիւրեւէն. ինչո՞ւ այս ամէնը, վստիկի դեռ չենք ըմբռնած ողին այն վարդապետութեան, որուն արժանի ձեռնողները ըլլալու հաւակնութիւնը ունինք: Ես տեսոյ արիւնք որոնք դռմ հաւաքեր էին և ձմրան այս նշանակին խաղաղուակ էին դներ, որու դեռ 5—6 ամիս կայ: Արդեօք կարելի չէ՞ր սոցիալական օրերուն այդ դրամը յատկացել աւելի վեհ և աւելի սոսիալ միտն նպատակն ու: Ո՞ւր չենք կարող պոստիլ աղքատներու, որոնք կտոր մը փայտ և պուտ մը կաթ կը խնդրեն: Ինչ աշխատ իսկ կան գաղթականներ, որոնք շատ անգամներ անթի գիշերներ կանցնեն: Կը հարցնե՞ս որո՞ւ վրայ կիցնայ մտածել այս ամէնքի մասին. ո՞վ պիտի ըլլայ դանաք միտիւթաղը և անոնց վրայ գուրգուրացողը: Զէ՞ որ մենք մեր արիւնքը կոչած ենք, մեր օրերու ասպնւիրը: Այսպէս է որ կրնէին հին տապանները, այսպէս պէտք է հասկնալ տապանութիւնը: Ոչ, վստահ եղէք, որ այս ձեռով արի բոլորն ալ կրնան ըլլալ: Օրինակներով խաբէր հաստատելու համար անջրպետը մեր և սխառտեցմի միջև: «Մարդիկ» ի շարքը թիւով մարի խաբէր դրուած էր. մինչև այսօր հալիւ հօթը ութը հոգի պատասխանած են 11 մասնաճիւղեր հասնող շրջանի մը մէջ: Ուրեմն կը հետևենք որ մեր թիւթը կարողացողներուն մէջ ամէնքէն քիչը մեր արիւնքն են և կամ եթէ կը կարգան, շատ հարկաւորութիւն կ'անցնին այնպէս որ չեն հետա-

քրքրուիր նոյնիսկ իրենց հետ անմիջական կապ ունեցող գործներով:

Վտանքի պահուն ամենակարեւոր գեմի մասին մէկ հոգի միայն պատասխանած էր և ճիշտ էր պատասխանը «պաշտիւնութիւն». սակայն բացատրելու համար օրինակ մը բերեք էր և գիտէ՞ք թէ ուրիշ, ֆութպոլէն, ահաւասիկ մեր հոգեբանութիւնը: Արի մը չէ կարողացեր սկստալական արկածալից կեանքէ օրինակ մը գտնել և գայեր եկեր դարձեալ ֆութպոլին է ապաւինել, ինչո՞ւ, վստիկի գնտակը իրեն հետ միտ ու ոսկոր է եղեր և հոն է վագեր անոր միտքը:

Հայ Արի, ինչո՞ւ այդքան տարուեր և կլանւեր ևս այդ պիտի գունդով, երբ անդին հեկայ երկրադունդ մը կայ քու գործերուդ համար սահմանաւ: Ինչո՞ւ աչք տնկած այդ գունդին ետեւէն երկինք կը նայիս, երբ վարք այնքան տեսնելիք և կատարելիք գործեր կան. ինչո՞ւ, կրտսմ չի հետաքրքրուիլ յատկապէս և թշուառութիւններով լեցուն երկրադունդով և գերի դառնալ պարզ օդով լեցուն գունդին: Ահա այս քանին համար է որ մեր մէջ դեռ չէ հասկցում սկստալ սիւմը և չպիտի ալ հասկցուի ան որքան առն որ օդով լեցուն գնդակներու և ծրագիրներու ետեւէն կը վագեր:

Ուշադիր եղէք, տղաք: Այն կապը որով կապւած է իտլիպանդ ծայրը, ուրիշ քան չէ եթէ ոչ ձեր մահով ճիւղ: Փութպոլէք ժամ առաջ քակել գայն, ձեր բարի գործերով, այլապէս որ մը այդ կապը պիտի խեղդէ ձեզ:

Տարեկան շրջանի անգամ կը ևս մատու գնել վերքին, իսկ միջոցներու մասին մտածելը կը պատկանի վերին մարշալոյն, որը, ուրախ եմ որ իր առաջին շրջաբերականով կը մտնենայ արդէն գործին պահանջին և վստահ եմ որ չ'պիտի ուշանայ նաեւ դարմաններ մտածել իմ կողմէ ևս մասնաւորը: Լամ այս զատուուն համար:

Փակելով անձեալ շրջանի անհաճոյ տպաւորութիւններու Էջերը, կը մաղթեմ որ գալիքին համար աւելի քաջալերական և գնահատական տպեր գրելու առիթը տան ինձ իմ Արի եղբայրներս:

Սոնիա

Մեմ ՇՈՒՆ



ՏԻՊԱՐՆԵՐ

„ՊԱՐՈՆ ՍԲՈՐԴՍԱՆՆԵՐ...“

Մարշալական շրջանակներու համար սովորական դէմք մըն է ան. այն ամէն քաղաքներուն մէջ, ուր մարդական միութիւն մը գոյութիւն ունի, կարելի է հանդիպել անոր և ունկնդրել իւր „հեղինակաւոր տեսութիւնները“, զորս ոմանք՝ զմայլած անոր խառնու ձևերէն՝ կը նկատեն անհրաժեշտ ու անքննելի։ Անիկոյն ընդհանրապէս միութեան „համակիր անդամ“-ներու շարքին կը պատկանի, և երբեմն ալ՝ վարչական կամ կազմին։

Կեդարանախոխեալ մէկ նմոյշն է անիկա Բնդհանուր Պատերազմի ընթացքին թաշաւին սրճարաններու մէջ ժամանակը սպաննող այն մարդոյ՝ որոնք թուղթ ու քարտէս ի ձեռին՝ բանակներ շարժման մէջ կը դնէին, դիրքեր կ'առնէին, ճակատներ կը ձևաւորէին, քաշաքներ կը դրաւէին և զոյալ սրներ գերի կը բռնէին — և որոնք բնականաբար զժգոհ էին Հրամանատարն ու և Մարաշախոսներու անճարակութենէն։

Մէկ այս հերոսը ոչ մէկ սրտի հետեւում ըլլալով հանդիմ, ամէնքէն ալ կը ճառէ հիմնադիր վստահութեամբ մը։ Սովորաբար տխուր, տագոյն և երկչոտ տիպար մ'է ան՝ որ գնդերէն չունի բաց ուրիշներուն ունեցածովը կը պայծառայ։ Կը վախճայ թեթեւ ազդոյէ մ'իսկ, սակայն խառնակութեամբ ան կը վերադառնայ Բնդհանրական մը կամ Տէմաքի մը բռնի կամ իւրեքիւրի կը դրուածներ։ Չի կրնար գնդակին ուղիղ հարուած մ'անգամ տալ, բայց կը գայրաւայ թէ ինչո՞ւ հայ Ֆորվեսները զիս չունին։ Գաւաթ մը ջուրի մէջ խնդուելէ վախ ունի, այլ սակայն խելք չկըրնար հասցնել թէ ինչո՞ւ մեր տղաքը լողալ չեն սորվիր, կամ թէ ինչո՞ւ այս տարի Միս Էտէրի, Միս Հարի կամ Հիւմի չյաջողեցան Մանչը անցնել լողալով։

Անիկա գրասենեակի կամ սրճարանի մը մէջ կը գտնուի ընդհանրապէս. բուրդէ ներքնազգեստ կը հագնի, ցուրտ օդերուն դուրս չելլէր և կը դողայ երբ պատահանը բռնան։ Կ'կարդայ բոլոր թերթերու մարդական յոդուածներն ու լուրերը. վստահանի անթեր կամ սրճարանին անկիւնէն կը վերադառնայ անգիտեցած մըրցամենքուն արդիւնքները, կը քննադատէ կամ կը վաւերացնէ խումբերու կազմը։ Միմիայն թէքիք բացասութիւններ կը դրժածէ անգիտեցած կեղծ հնչիւնով. երևակայութեամբ կ'ընկերակցի այլուր գտնուող մարդիկներուն, մըրցանիչներ, կը կոտորէ անոնց հետ և յողթանակներ կը տանի։

Ու անիկա, աւելորդ է ըսել, խոստովաւ հիւսիսով մ'է — տեսնոյ գտնանք տեսած ըլլալու —։ Անդրիս կամ Ուրուկուայի ֆուլթայիտներուն, Ֆինլանդիայի կամ Ամերիկայի մալիկներուն և այլ մարդական զանազան դէմքերուն։ Գոյով իր ազգակիցներուն, անիկոյն ընդհանուր առմամբ գտնոյ կ'որակէ իր „ծոյլ, անկարող և ոչ մէկ յառաջդիմութեան առաջ“։

Ու ինք որ դուք՝ ամենէն աւելի քննադատելի ազգակիցներ ունի, չի վախճար որ մարդիկները գիշերները դուրս ելլեն, ուշ անկողին մտնեն, բաժնի խմին կամ տարբեր հոգեւորներ հետ սպաննեն։

Բայց, իսկ սպէս ալ, չէ՞ որ ամէն ինչ պէտք է զոհել սրբին...

ԻՍՍԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ-Արիներ, դուք, հայուն վաղուան վստայոյն և ապագայ քաղաքացիներ, այսօր ձեզի հետ կ'սրճ խոսակցութիւն մը կ'ուզեմ ունենալ և քսնի մը կարեւոր թելադրութիւններ ընել։

Դուք, բոլորդ ալ բնական է կ'զգայ թէ այս օտար հողին վրայ անհրաժեշտ է ցուցնել հայ ցեղի կարգապահական սկիւն, ընդգրկեալ Պուլկար աղիւ ժողովուրդի լաւագոյն յատկութիւնները և հիւսիս պատճառել անոնց։ Յայտնութեան համար խառն շատ աւելի գրական ջանքեր պէտք են. խառն միայն փրկուած չէ՞ ո'ւէ ժողովուրդ և չի փրկուիր. յուսահատութեամբ բնաւ երբեք պատճառներ չ'ունինք. իսկ եթէ յուսահատինք, ապրիլու իրաւունք չ'ունինք և մեր աշարուան տիտը վիճակին պատճառ ելլինք կը հրճուին ալ աւելի։

Իմացական առաջին աստիճանի բարձր բնութեան կութիւններով օժտուած և պուլկառէ կամք մ'ունեցող հերոս ժողովուրդի մը զաւակները կ'աւել ըլլալու համար պէտք է շնորհաւորենք զիրար և հայտնի զգանք ինքզինքնին։

Այս, դուք ցիլի մը գաւակներն էք որ յուսահատական ամենամութ վայրի տներն իսկ, վալուսն, Ապագային յոյսը ունեցաւ։

Հայ-Արի, եթէ ծնողք չէ կրց ո՞ր ըմբռնել այս աշարուան գործիք մեծ ութիւնը և մեծ ուխտիչ հոգիւնը կ'ստեղծեն, դուք հայորդի, տեսնոյ վաւերութեան ունեւալու և տառաձեւութեան, պէտք է բացառել անոնց թէ կողմնացեալ առանձնութեան մէջ չի կրնար զարգանալ անհատի մը անձնականութիւնը, այլ ուրիշ անձերու ընկերակցութեան մէջ միայն։ Տաղանդը, կ'ըսէ կ'ոթէ, կ'աճի առանձնութեան մէջ, բայց նկարագիրը կը կազմուի աշխարհի հոսանքին մէջ։

Այսօր որքան կ'ըմբռնի էք դուք, որ գրեթէ համառ պատանիներ քով քովի եկած, իրարու կեանք և արեւ կը բաղձաք։

Մարդու մը ապրած անցեալ կեանքը ամենէն վստահելի երաշխիքն է անոր ապագայ կեանքին։ Բերական է ձեռքէ շատեր տեսած և կամ կարողացած են թէ ձեր վերապրող և կամ նահապաղած կրտսեր եղբայրները ի՞նչ նախաձեռնի կենք մը ապրած են ըլլայ հայրենիքի մէջ, ըլլայ աշտասանման։ Ուրեմն, այժմէն ապագային կրնաք նայիլ կատարեալ վստահութեամբ և մեծ հաւատքով։ Գործը ոչ միայն կ'որոտայ յայտնէ անհատին հոգեկան աշխարհը ու կը շինէ անոր նկարագիրը, այլ նաեւ ժողովուրդը կ'ընէ զայն իր ցեղին ամենամեծ կեանքին։

Բարի մարդը բարութիւն կը խոսնայ ուրիշներու, եղբ. բարի և բարի պատանիներու հետ յոյսաբերութիւններ մշակեցէք ու ջանացէք բարութիւն փոխանցել վստահութեամբ հակում ցոյց աւելնել ձեր ընկերներուն և բոլոր մարդոց երիտասարդներուն։ Այս պէտքով, դուք հոգ տարձեք կ'ըլլաք բարոյական ախտազերման։

Ամէն աղիւ զգացում, ամէն բարի խոստովութեան և ամէն գործ կրկնուելով կը հիմնաւորուին մեր մէջ իրեւ ունակութիւն։ Այս իսկ պատճառով, արի-խրմբապետ երբ, և մարդիկները պէտք է “Ուրեմն կամք, այն տիպ եղբ.՝ նշանաբան ունենան իրենց, և անով կ'ստեղծուի մը փառքին իրենց ստանձնած գործին։

Հայորդիներ առողջ կ'անք մը ունենալու համար ի՞նչ կ'որոտէ ծանօթութեանց քառ մը, երբ գտնուք միացնող սկզբունքը չկայ։

Ունակութեանց արդիւնք և մեր կեանքի բոլոր

ստորական գործերը առանց բացառություն: Հազուելու, լուսացուելու, ճաշելու, նիստ ու կացի, բոլոր կերպերը ունակութիւններ են. դէշ ունակութիւնները արժատախիլ ընելու համար բաւ չէ զղջալը, այլ էական եւ անհրաժեշտ է չի կրկնել, յաշոտութիւնը կապանութիւն կրկնաբարութեան ջանքերով:

Չկայ ուրիշ մասնական մը երբ այնչափ նոր բան սորվի եւ այնչափ բան իւրացնէ մարդկային անհատը որչափ իր կենաց ձևը այդ տարիքին մէջ:

Մաշկիւններ ուրեմն, աւելի քան երբեք պէտք է ուշի ուշով նետուին իրենց թերթի միջոցաւ իրենց տրուած դասերուն եւ օգտուն զանազաններու կողմէ յաճախակի եղած դաս սխառութիւններէն:

Լուսազոյնին ճանաչումն ու ճաշակն է միայն որ կարող պիտի ըլլայ տալ մեզի ճանաչումն ու զգուսնորը յոնգոյնին:

Սիրեցեք Գեղեցիկը, Բարին ու Ճշմարիտը, որովհետեւ ատենց սէրն է աշխարհի յստաջլխական շարժմանց միակ աղբիւրը եւ ոչ թէ չարին ու սուտին զգուսնորը:

925 Դեկտ. 5
Սօֆիա

ԳՐԻԳՈՐ Գ. ԳՈՒՏՈՒԼԵԱՆ

ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՁՄԵՌՆԱՅԻՆ ԶԲՕՍԱՆՔԸ

Բոլոր այն երկիրներուն մէջ, ուր արլերիզմը յստաջլխամբ է, ճմեռնային եղանակի ընթացքին տեսլի կ'ուշեւան քոս-քնքրի վաղքեր, որոնք սահմանուած են ատենց փորձի չի ձգելու մարդկիները — որոնք, պէտք է աւելցնել թէ՛ մերիւններէն շատ աւելի ամբողջ արլերիկ եղանակի ընթացքին (չարաթախան առնուաղն երկու անգամ) միջոց ունին կանոնաւոր փորձեր ընելու: Արագութիւն կամ հեռաւորութիւն վաղաջ բոլոր մարդկիներուն, և նոյնիսկ սրտի տարբեր ձեւերով զրադոյներուն համար, ձրմեռնային այս վաղքը մեծ օգուտ ունի:

Մասնաւորաբար մեր մարդկիները, որոնք ամառնային եղանակին իսկ, ինչպէս բախք, կանոնաւոր փորձեր չեն ընել, փարելով այս մարդաբան՝ ոչինչ կը կարոնցնեն, ընդհակառակը քոս-քնքրի զուարճալի, ճեռքըրքաշարժ կերպ մը արեւա է, զոր պայման չէ իրը մրցում նկատել և անկէ խրոչիլ: Փոխառակ ամէն կիրակի առաւօտ, և նոյնիսկ կէսերի վե՛ջ, երթալ գոյ և ազատանամ մթնշաղկով վայրեր ման գալու, քանի մը ուղաք կրնան քով քովի գալ ու իրենցմէ ամենէն փորձառուին զեկալալութեան տա՛ն՝ կիրարկել այս կենսաւոր և ստաջլարար մարդաբան:

Ինչպէս բախք քիչ վերք, սխալ է սկզբնական չըջաներուն քոս-քնքրիին նայիլ իրը վաղք, մրցում, այլ՝ համայնի քայլերով պոտյո մը բաց դաշտին կամ անտառին մէջ, սահմանաւած՝ ոչնչացնելու այն վեռաւոր տարրերը որոնք մեր մարմնին մէջ կրնան մուտք գործած ըլլալ մեր ստարեայ կեանքի ընթացքին: Եթէ փորձերը կանոնաւորապէս կատարուին և խմբակի իր արշաւը ընէ ամէն կիրակի, երկու ամիս վերջ ու թեկնածուներուն ցոյց տալիք բնգոտնակութեան համեմատ կարելի է նախապէս 1 կամ 2 քիլոմէթր

եղող ճամբան երկարել մինչեւ 3 կամ 4 քիլոմէթր: Այս վերջին պարագային է միայն որ մասնակցողները կրնան իրենց քաղաքային-զբօնաշրջիկի զգեստը փոխել կարճ տախտին, մասնաւոր կիսակոշիկին եւ բուրդէ բաճկոնակին հետ ու այդ արշաւը ընել արագօրէն քալելով կամ թեթեւ մը վաղելով: Երկու ամիս ալ այս կարգի փորձերէ վերջ, գէպի Մարտ, խմբապետը կրնայ մրցում մը կազմակերպել միայն իրեն յայտնի ճամբու մը վրայ, որովհետեւ քոս-քնքրիին այնպիսի վաղք մըն է որուն մէջ մրցողը կրնայ դիւքաւ իր ճամբան կրճատելու միջոցը գտնել՝ եթէ նախապէս ծանօթ ըլլայ անոր: Այդ պատճառաւ վաղքի ուղին գծելու լաւագոյն միջոցն է (մրցման օրը միայն) թուղթի կտորներ և այլ նշաններ զետեղել որոշալ ճամբուն վրայ:

Անպայման մասնազէտ մը ըլլալու չէ այս կարգի մրցման մը ճամբան ընտրելու համար, կը բաւէ գրանել փոխառակն ուղի մը, որ պարունակէ, բացի հարթ գետնէ, մէկ քանի ելեւէջներ՝ ո՛չ շատ ցցուած և ոչ ալ դա՛նալէժ, մէկ քանի մացտախիտ անցքեր և վերջապէս մէկ մէթրէն նուազ բարձրութիւն ունեցող արգելքներ: Որպէսզի մրցողները զիրար չի նեղեն, լաւ է որ թէ մեկնումի և թէ վերջաբանի վայրերը տախարակ ու լայն ըլլան:

Արշաւէն կամ վաղքէն վերջ, առ ի չ'դոյն անհրաժեշտ տուելն՝ համետ քոսիկ տէրերը կրնան գոհանալ զգեստներու ամբողջական փոխառակութեամբ (զըլ-խաւոր սրայման) լաւ մարձում մը ընել տալով և խրմելով ու և է տաք բան մը:

Եթէ արլերիզմ ընելու համար անհրաժեշտ է սրաւ մը, ճմեռնային այս վաղքին համար բնութեան ստեղծած սարքն ու ձորերը բաւ են. այնպէս որ կամք ունեցողները համար շատ դիւին է անոր փարիլ:

Աւելցնեք թէ քոս-քնքրիի եղանակը նոյնաբերին կ'սկսի, Մարտին վերջանալու համար և թէ մէկ քանի տարուան փորձառութիւն չ'ունեցողներուն համար վստեղաւոր է երկար հեռաւորութեանց վրայ (4—5 քիլոմէթրէն աւելի) մրցումներու մասնակցիլ:

Բարիկ

Ժ. Ե.



Հ. Մ. Բ. Մ. Ֆիլիպի Ա. Բիսմ' Հաւթուայի մեջ՝
Պուլկար խումբի մը հետ մրցումէն վերջ:
Պուլկար խումբը
Հայոց լիմը

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ

«Բարձրացի՛ր, Բարձրացու՛ր»

Հ. Մ. Բ. Մ.

... Բայց ինչքան հպարտացուցիչ ու մխիթարական է, որ ընդհանուր յուսարկելու մի այս օրերուն, սահմանէ սահման մեր այս տառապագին թախառմին մէջ, խուժը մը բոլորանուէր տղոց շարժումը մէկ օրէն միւսը, առինքնորէ բոլոր նայումաժները, և, աշխոյժ երիտասարդութիւն մը—հոգ չէ թէ հաւանդուտոր—կը պրկէ ու կը լարէ ինքզինքը:

Տարօրինակ չէ՞—կսկծուն ու շարաշուք դէպքերու կողքին, խանդոտ ու ոգեւոր շարժումներ. այսպէ՛ս է եղեր մեր բովանդակ պատմութիւնը: Անորման ժողովուրդ, որու ինքնայատուկ և երբեմն ճակատագրականօրէն յատկանշական գիծն է մնացեր՝ տառապանքը ժպտելով դիմագրաւելու իր սյգին բընազդը:

Գեռ երէկ անողոք ցնցումի մը չձեցումին ենթակայ, անստոյգ ու չուարուն, արտահանքօրէն տփէ ափ ցանցնուող բազմութիւններ, —կեանքի՛ կենդանութեան ու գերիսի՛ր խոյանքներու ձգտումը ունին արդէն...:

Եւ ասոնէ մը ի վեր, խանդաղատանքը, մտնումանդ, մեր կորստի երիտասարդութեան Սիբոս պէտք է կարենալ պատմութիւնը քրքրելու այս տարաբան աղոց: Զրկանքի ու դառնութեան էջեր, բայց ո՛չ մէկ բախտաւոր կողմ: Արցունքի ու արիւնի հետքեր, բայց ո՛չ մէկ ժպտուն երանք, ո՛չ մէկ հրճուագին իրականութիւն...: Ինչ՞ ընել, եթէ այս սերունդին բաժինը եղաւ տախիա, և պարտաւոր ենք ամուր ու ժպտուն կենալ միշտ՝ Զարի՛քը զգնանելու ճիգով: Ամուր ու ժպտուն կենալ, անկումի այս օրերուն մանաւանդ, կարենալ ու ժպտօրէն հնչեցնելու համար—«Բարձրացի՛ր Բարձրացու՛ր»:

Երկու բառ միայն...: Եւ անա զգլխից պատկերը մեր կաշմբուն տղոց առօրեայքին—շարք շարք, հըպարտ, ուսած կուրծքերով,—որոնք իրենց առօրեայ կեցութեամբ ցուցադրեցին օր մը Պոլսոյ մէջ, մանկունակ ու երազուն խոյանքի մը անձնատուր...:

Եղեանէն մնացորդներն էին անոնցմէ շատերը—սոսորոպիկ, գլխաբաց, թուխ ու տկար: Բայց իրենց սե ու խոշոր աչքերուն մէջ հուրը կար կայծկլտուն և անոնց քայլերուն թախի, պիտի ու հասնէ ցնցում կուտար սրտերուն...:

Հա՛ղիւ քանի մը տարուայ յիշողութիւններ այս բոլորը: Բայց, կրկնուող դառնութեանը հետ, նորէն նոյն կանչը դադուիլ, դադուիլ—«Բարձրացի՛ր, Բարձրացու՛ր»:

Ինչքան յատկանշական է երկու բառերով այս նշանաբանը: Մէկը՝ բարձրանալ—ցելին տարերային անցեալը: Միւսը—տենջը, անդունայ ձգտումը, ապագային ի խնդիր:

«Բարձրացի՛ր», ի հարկէ՛: Բարձրացէ՛ք և դո՛ւք, տղաք: Բարձրացէ՛ք, որովհետեւ դուք ամենէն բեղմը-

նաւոր ժառանգորդներն էք ժողովուրդի մը, որ ելլալ ու նստուիլ միայն գիտցաւ: Բարձրացէ՛ք, որովհետեւ դուք անտարունջ բայց անվհատ գաւակներն էք այն դարաւոր սերունդներուն, որոնց բովանդակ կեանքը բարձրացումը միայն եղաւ: Բարձրացէ՛ք, որովհետեւ ձեր ցելը,—հայ ցելը—երբէք իջնալ չիօրձեց, բայց խոյանալ երազեց, հարուածուեցաւ, բայց անկումը չճանչցաւ. երբեմն անողորմօրէն զգնանուեցաւ, բայց միշտ ալ կանգուն պահեց ինքզինքը, ու, բոլոր հասարակ կամ սովորական բաներէն վեր՝ ճախրանքը փնտռեց՝ գեղեցիկին, վստահին և սյգին:

Ինչ փոյթ, որ իր այդ հզոր թախի, թախի պատրաստեց, նաեւ, իր ցաւալին խորոշումէն բռնէ: Յելը իր կոշտէն ունէր ու կարծէր, որ սեռունդները արդարացիէն զայն, նոյնիսկ արիւնաների պարտութիւններու վախճանով...: Փա՛սք բոլոր անոնց, որոնք—ձեզմէ՛ կամ՝ բոլորէն առաջ—Լոյսին վաղցին, ու, Գեղեցիկին զոհարարութեանը հետ, անխախտ պահեցին Սյգին ու Վստագնին փառաբանութիւնը:

Ճիշտ է, դարերը շատ բան փոխեցին իր կենցաղէն ու կեանքէն: Ու եթէ պատահեցաւ որ, հեթանոս պաշտամունքի փոխարէն Բարիին ու Զոհարարութեան ուխտը պարտադրեն մեզի, կամ՝ մեհնաններու սրտառուջ խորհրդաւորութեան տեղ եկեղեցիին անհաղորդ խորանը կանգնեցին, ո՛չ մէկ որրնաւոր պաշտամունք, ընդունակ չեղաւ ցելին հոգիէն անջատելու սյգին ու գեղեցիկ մեքիտութիւններու տիրական հաւատքը: Առէք նաւասարդեան Օրերը կամ հեթանոս վարդապետը, մեր քրիստոնեայ տոճորին...:

Ու բարձրացուցէ՛ք, տղաք: Բարձրացուցէ՛ք, մեր այս զգնանումի օրերուն, սեռունդը, որ պիտի դայ յեղալարձ ամառութիւն մը լրացնել: Բարձրացուցէ՛ք հոգին, ձե՛ր հոգին, որ հաշաղատ արտայայտութիւնն է ըլլալու մեզմէ՛ տեսձ նեւուող կամ ինկուներուն, և՛ բարձրացուցէ՛ք մեզ արիւնատ, բզքոտն, բայց նախուէն դոջը, որուն անուամբ սրգլխի՛ զոհարարութիւններ արձանադրուեցան...:

Այսպէ՛ս՝ բարձրանալով ու բարձրացնելով: Այսպէ՛ս՝ և կեանքին մէջ—հա՛րա՛ս՝ ինչպէ՛ս հայ ժողովուրդը տառապանքի իր անագորոյն ապումի օրերուն բա՛րձր ճակտով՝ ինչպէ՛ս վալել է ձեր ցելին թոշոգ մտածումին, հատո՛ւ և ստոյգ, անխորտակի՛ր հաւատքով՝ յանուն նոր դուրձադարձութիւննչաւ ու նոր բանկուակերու, և ուսած կուրծքով, որովհետեւ—մի՛ մոռնաք—որ անոնց տակ ձեր և մեր Հայրենիքն է որ դեռ կը խլրտայ...:

Եւ ամէն անգամ որ ձեր կոշտին երգումը բնէք, յիշեցէք, որ այդ երկու բառերուն մէջ Հայրենիքին համար ձեր ապագայ տեղծագործութիւններու խառնումը կաշուած էք զնկելու: Եւ կարծէք, որ վաղւան զոհողութիւններուն հետ, վաղուան վալելքն ալ ձերը ըլլար տղաք:

Իսկ մեզի, մեր անմուրս ժողովուրդին, այս օտայ հորիզոններու տակ, վալելքը տաւէք ձեր թիկնեղ ու ստոյգ կեցութեանը, և զգլխից պատրասէք՝ ձեր յաղթ շարքերուն ումեղ ու դուստ թափիւնին...:

Բարձրացէ՛ք ու բարձրացուցէ՛ք, որովհետեւ մենք կայտաւր ունենք ձեր թախներուն, հաւատացէ՛ք մեզի...:

ԽՈՐԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

ԿԱՂԱՆԴԻ ՆՈՒԷՐ ՄԸ

Ամէն քաղաքի պէս՝ մերն ալ իր ընտիր ու խղճամիտ տղոց կարգին, ունէր, նաեւ, իր չարութեան ու գոհնկութիւններու մէջ մոլորած շարքը՝ անպարկեշտ տղոց:

Այս վերջիններէն էր Միհրանը: Գեո 14 տարեկանին ցայտուն ու որոշ էր իր մէջ ապագայ աշխատանքի ու անակարգի տեսլարը:

Միայն երկու տարի դպրոց եկեր էր, կամ փախչելով, կամ սուտ հիւանդ ըլլալով. ու հիմա, ա՛լ փողոցներու տղան էր ան: Աղտոտ ու հայհոյող բերան մը Միհրանին, որ լսողին դայրոյթ կը պատճառէր: Աչքերը սև ու չար, դէմքը թուխ՝ դոր յաճախ ճանկոթուած ու արիւնոտած կը տեսնէինք:

Մէջքին կարմիր դօտի մըն ալ կը փաթթէր, ուր ծխաառփը և մէկ քովին ալ դանակը անպակաս էին միշտ: Շատ կը ծխէր: Երբեմն, նոյնիսկ կը գինովնար, ու անվայել երգերով փողոցներէն կ'անցնէր: Մահամերձ հիւսիս ունէր, երախաղ նո՛ր քնացած էր, ինչ փոյթ:

Փողոցներէն անցած պահուն մանաւանդ, սովորութեան մը պէս — որ երբեք չի մոռցաւ — բոլոր դռներուն զանգակները կամ օղակները յաջորդաբար և խնդի մը պէս ուժգնօրէն կը զարնէր, և ետին դարձած լրբօրէն կը խնդար, դուռները ելած կամ պատահաններէն իրենց գլուխները դուրս ցցած կիներուն ու աղջիկներուն վրայ, որոնք խաղի եկած, բարկութեամբ մը իրենց սովորական անէծքը կը մոլտային Միհրանին ետեւէն:

— Զոքերդ կոնծին, չիացած չուն:

Տեսակ մը հաճոյք ու զուարճութիւն դրաց ան, երբ բնաւար մարդոց ետեւէն անոնց բռները վար քաշեց, նկղեց, զայրացուց ու իրենց ճամբաներէն յամնցուց զանոնք:

Այսպէս, օրին մէկը, բարի ու ծերուկ կնոջ մը որթատունկի ճիւղեր շալկած այգիէն տուն վերադարձի պահուն գնաց անոր ետեւէն բնոր վար քաշելու...

Ու մի՛չ Միհրանը կը շարունակէր քաշել ծերուկին բնոր, մ'աղ մնաց, որ 60 տարեկան կինը ետեւն ի վար փութէր, և չթողուց օձիկը այդ խնդկնոջ, մինչև որ թշուառը, ճարահատ, ալ սկսաւ լալ ու աղբակ:

— Մ'անե՛ր քա դուակս, մե՛ղք եմ... սո ձերմկած մաղերէս ա՛նչ իր ձէ մանչս:

Այսպէս շարունակեց ա՛ ա՛ վերջ չորքը իր չարութիւններուն: Մէկուն մածուն կամ կաթ տուն տարած առնը, աի մը փոշի նետեց պ' սկին վրայ, ուրիշ մը դա՛նակով վիճառեց, միշտ տղոց հետ կոտեցաւ ու ծեծեց, շատ մը տուններու ապակիները կոտրեց: Ամբողջ քաղաքացին տակ ու արամարհեց զինքը, զգուած անոր ամօթալի ու խայտառակ խաղերէն: Ու այս ընթացքը մասնաւորապէս աւելի դառն եղաւ իր հօրը, աղքատիկ ու հնակարկատ հօրը

համար, որ տղուն հասցուցած վնասներուն հետեւանքով միշտ նիւթապէս տուժեց, հաղա՛ւ անգամ անիծելով իր զաւկին ծնունդը:

Կարգ մը մեծեր՝ քանի մը անգամ ծեծեցին զայն խելքը գլուխը բերելու համար, ու շատ անգամ ալ, եկեղեցին, քանի մը օրեր իրարու վրայ բանտարկեցին թաղականները, բայց մազի չափ իր ընթացքը չփոխեց այդ մոլորած տղան:

* *

Կաղանգը կը մօտենար:

Գերագոյն ճիգերով ու զոհողութիւններով՝ սրահ մը վարձեր էինք որ մեր Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղին ակումբը պիտի ըլլար: Եւ որովհետեւ սրահը մերկ էր, ևս ինքս առաջարկ բերի, որպէսզի բոլորս ալ մէկ-մէկ կաղանգի նուէրներով կահաւորենք զայն: Է՛, խինդ ու ոգեւորութիւն կար այդ օրերուն մեր մէջ, ու սրտազին փարեր էինք Հ. Մ. Ը. Մ.ին: Տղաքը բոլորն ալ տեսակ մը ուրախութեամբ ընդունեցին այս առաջարկը: Այսպէս 18—20 հոգի խումբ մը կաղմած մէկ-մէկ աթոռ պիտի գնէին, ուրիշ մը իր հօրը խանութէն վարագոյրցու բերել խոստացաւ, 8—10 հոգի միացան խոշոր ու երկար սեղան մը շինել տալու համար, ևս ալ, իմ կարգիս, գրադարան մը պիտի նուիրէի, ու ոմանք՝ թերթեր, զիւրքեր, նկարներ ևւայլն պիտի բերէին:

Գիտէի, սակայն, որ մեր մէջ Արմենակը աղքատի տղայ էր, և գուցէ իրեն ծանր ու դառն ըլլար այս պարտադրութիւնը որ անխտիր բոլորին համար էր: Մտածեցի իրեն մեկուսի խորհուրդ տալ որպէսզի բան մը չընէ այս անգամ: Բայց ի՞նչպէս կրնայի ընել նման թելադրանք մը, որը վիրաւորէր թերեւս իր ինքնասիրութիւնը: Մանաւանդ որ ինքը մեր խումբին կարողագոյն ու ամենէն գիտակից տղան էր:

Երկար մտածեցի այդ մասին, քիչ մը տանջուցայ նոյնիսկ: Գիտէի որ նման պարագաներու մէջ, օրինակ հանդիսանալու համար աւելի բողբոս ունեւորուն ինքը կարողութիւնէն շատ աւելին կ'ընէր: Գիտէի, նաեւ, որ տունէն կը պախարակէին զինքը իր այդ ընթացքին համար: Ուստի, յարմար առիթով մը՝

— Արմենակ, ըսի, անպատեհութիւն մը չկայ, եթէ այս անգամ գոնէ քաղով մը բերես մասնակցութիւնդ: Զէ՛ որ ան ալ իր կարգին նուէր մըն է:

Աչքերը գետին յառեց, ու քիչ մը մտածելէ յետոյ՝

— Կը հասկնամ... մընջեց. այո՛, նիւթականի այդ զոհողութիւնն իսկ չպիտի ընեմ. բայց աւելի՛ն պիտի շնորհ տալ, աւելցուց վստահօրէն և աչքերը ի սլեցնելով:

* *

Տարուայ առաջին օրն էր:

Զիւնը ձերմակցուցեր էր գետինները, բոլոր աղքատ ցերեկէն առաջ իրենց նուէրները բերել, կահաւորել ու դարդարել էին սրահը: Արմենակը չերեւաց: Ցերեկէն վերջ կրկին պիտի հաւաքուէինք, ու արիւնքս մենք մեր մէջ պիտի տօնէինք Նոր Տարին: Ինչքան հրճուալին էր այդ հին օրերու առաջին ամանորը: Մեր սեփական երգիքներուն ու օճախնե-

բուն տակ. մեր ամանորը այնքան բարի ու առա-
տապին: Դէմքերնուս վրայ ժպիտը կը ցոլար. դուարթ
կըզեր մեր շրթներէն կը փախչէին, ու մեր սրտերը
խայտանք մը ունէին:

Ամենքս ալ, ակումբի սեզանին չուրջ բոլորուեր
էինք, տա՛ք ու անտէ՛շ խօսակցութիւններով: Յան-
կարձ սանդուխներէ վեր ելլողներու տանձայնը
առինք: Խնքնաբերաբար բոլոր աչքերը զէպի դուռը
ուղղուեցան:

Արմենակն էր Միհրանին թեւը մտած: Անմիջա-
պէս եկաւ, քիչ մը հեռու կանգ առաւ և պատրաստ
բարեւով մը՝

— Կը ներէ՞ք, եղբայր խմբավետ, որ ուշացայ
քիչ մը իմ պարտականութիւնս կատարելու: Ահա՛ իմ
կաղանդի նուէրս, ըսաւ թրթռուն ծայրով մը՝ Միհ-
րանը ցոյց տալով, մինչ տղոց բուն ծափահարու-
թիւններէն ու կեցցէներէն սրա՛նը կը թնդար...

Այդ օրէն վերջ, Միհրանը մնաց Հ. Մ. Ը. Մ.ի
նուիրական դրօշին տակ: Յանձնարարեցի իրեն ամէն
իրիկուն գայ, զիս տեսնել ակումբը և ամէն անգա-
մուն ալ յորդորեցի զինքը և իր սիրած ձևով մէկ
մէկ պատմութիւն կամ հէքեթի հիւսկեցի, ամէն մէկ
խրատին համար: Այսպէս, քիչ ժամանակուայ մէջ
բաւական յառաջդիմեց. վաղքի ու ցաւակիւ առաջին
էր. միւս մարդանքներուն մէջ ալ լաւագոյններէն:
Բայց այդ չէր որ կը հետաքրքրէր զիս:

Կամաց կամաց պակսեցան իր չարութիւնները.
ա՛լ դօտի չէր փաթթեր: Ալ ծխատուփ ու դանակ չէր
գործածեր: Դռներու օղակները կամ դանակները հըն-
չեցնելու խնդութիւնը մոռցաւ և փողոցներէն ան-
ցած պահուն տեսէ մէկուն չի հայհոյեց, զիս չի հա-
ցուց ու չի կոտեցաւ:

Նոյնիսկ օրին մէկը տեսայ, որ քեւ մը փայտ
չալկած ձերուկ կնոջ մը ասջեւէն կ'երթար.

— Ի՞նչ է այդ, Միհրա՛ն: Ըսի.

— Արին կ'օգնէ միշտ իրմէ տկարին, յարեց. ձեր
էր մեղքայա ևւ ուղեցի մինչև տուն տանիլ իր բեռը:
Ուրիշ օր մըն ալ Միհրան Պօղոսի խրճիթէն դուրս
ելլելը նշմարեցի՝ պնակ մը անութիւն տակ.

— Ի՞նչ գործ ունէիր հոտ, Միհրան, հետաքրք-
րուեցայ:

— Պօղոս աղբարը հիւանդացի էր. մէկը չունի.
քիչ մը ջուր ուղեց՝ զացի բերի աղբիւրէն. հիմակ ալ
կաթ տոնելու կ'երթամ, ըսաւ, ինքնապա՛շ ժպիտով մը:
Ու աչպէս քաղաք մը ժողովուրդ շուտ մոռցաւ անցեալը
ու հիացաւ Միհրանին այս խէլօքութեանը վրայ: Իր
մասին շատ կը խօսուէր: Ոմանք հրաշք մը նկատե-
ցին, ուրիշներ Աստուծոյ խնայող թիւն իջեր է,
ըսին: Կարգ մը Աստուծաժախ մարդիկ՝ հայրիկը
ժամը գացեր՝ «Տէր Ողորմի» ըսել տուեր է, պըն-
դեցին, ու շարք մը կիներ ալ եղբակաջուցին.

— Ի՞նչ է ատ, կեցիր նոյնիս, կրնա՞մ վրայ բե-
րել. զօր անուն մըն է. հա՛, հեկայտէ՛թ է, ի՞նչ է,
ստանկ ըլլալէն պէտէ չնորձք մը եկաւ վրան. խելա-
ցիցաւ քա՛, խելացիցաւ. Բէշ էսչի տղան չէ:

Հ. Մ. Ը. Մ.
ՄԱՀԱՊՍԱԿ



ԳԱՌՆԻԿ ԾԷՆՐԻԿԵԱՆ

Ամիսներ առաջ, բնիկը մը ցաւով կը հաղորդէր
մահադէպը Գ. Շէշթիկեանի: Անպատակի այս դառն
իրականութեան հետ պահ մը չկրցի հաշտուիլ. Խնչ-
պէս, լոկի և անշուկ Բարիդի մէկ անկիւնը կը փա-
կէր իր աչքերը Մէկը, որ համակ բողոք, գանգատ և
ջիւղ եղած էր: Դեռ նոր խմացած էի Բարիդի Մ-ճիւղի
Վարչութեան անդամակցութեան ընտրուիլը և, եւ-
թաղրած որ, իրմով կը կանոնաւորուի այդ անկաշ-
գապահ Մասնաճիւղը:

1919 թ սկիզբները, Բերս Մ-ճիւղի մարդիկ ան-
դամները անջատուելով «Շիշի» մարմնակրթականը
կազմած էին: Նոյն տարուայ ձմեռը, այս վերջնոյն
նորընտիր վարչութեան ղեկեցիկ մէկ մէսթովը դար-
եալ միացուելով կը կազմուէր «Բերս Շիշի» բաղման:

Կանցապէս մեր պարտականութիւններուն ամենանուի-
րականը ու մանաւանդ պարտաւորիչը պիտի ըլլայ,
Օրինա՛կը՝ որովհետեւ զեռ Միհրաններու մոլորած ու
անգառաւարի շարքը ունինք մեր ետեւ, որոնք Ար-
մենակներու նուէրին կը կարօտին, դառնալու հա-
մար պարկիշտ ու գիտակից քաղաքացիներ: Եւ վեր-
ջապէս օրինա՛կը, որով ամբողջ մեր նոր սեռունդը
իր հայեցի գոյութիւնը պէտք է պարտադրէ հակառակ
բոլոր արգելքներուն:

Այս ձգտումը ևւ այս գիտակցութիւնը հարկ է
որ ունենանք, ու երբ ևւ իցէ յաջողեցանք — անվա-
րա՛ն ու յամառ աշխատութեամբ — քանդելու հին
ունակութիւնները այս նորերուն մէջ, կառուցանելով
անոնց սրտին ու մտքին խորքը հրաշալիորէն կեր-
տուած հայ արիին դաւանանքը, փրկած ու աղնուա-
ցուցած պիտի ըլլանք նոր սերունդը:

Կը տեսնէ՞ք մեր վաղը, մեր ապագան որ ան-
տարակուսելիորէն պիտի գա՛յ, պէտք է գայ ներ-
գաշնա՛կ համադրութեամբ մը:

Ֆիլիպի

ՕՆՆԻԿ Ա. ԲԱՆԻԿԵԱՆ

Տղա՛ք, օրինա՛կը այս պատմութեան, որ գերաւ

դամ և զօրաւոր Մ-ձիւղը: «Բերա»ի կ'ազմութիւնէն ի վեր, զորմէյը վարած էին քանի մը անվորձ երկուստարդներ, որոնք՝ հաշիւ, անդամ, մուտք, ելք, գոյք, ամէնքը հաղիւ բարեհաճեր էին 100 փարանոց տեւորակի մը մէջ նշանակելու, ոչ ֆաթթիւր, ոչ ստացադիր, ոչինչ իրարու քով կարելի էր դնել: «Շիշլի»ն նմանապէս. սա տաքերութեամբ որ, յիսուսն սակիի պարտք և նոյնյաի ալ անդամ կը բերէր: Ալ կրնա՞ք երեւակայել վարչական ծանր հոգերը...: Մա՛նաւանդ հաշուական մասը՝ տեսակ մը լաբիւրինթոս, որը, երկու տարուայ տքնաջան աշխատութեամբ կարելի եղաւ չտկել, խեղաշարժող չորս հաշուապահներու կողմէ: Մինչդեռ «Բերա-Շիշլի» վերեւ յիշուած ցաւերովը կը դալարուէր, կեդրոնը՝ կարծես, անտեղեակ մեր այս կացութենէն, նամակ-նամակի վրայ զրկելով կը նեղէր, հաշիւ, հաշուեկշիռ և ստացադիր պահանջելով: Մեր այս վիճակը և եղած պահանջին դեռ ատեն մը գոհացում տալու անկարելիութիւնը բացատրելու պաշտօնով (իբր նոյն Մ-դի ատենապետ) Սիրքէճի, իտրասանձեան խան, կեդր. Գրասենեակը գայի, ուր կարօին Բիջուա, ստաջին անգամ ծանոթացայ ողբացեալ Գ. Շէշրիկեանին: Բաւական խօսեցանք: Երկա՛ր բացատրեցի, բայց անկարելի եղաւ համոզել այդ խտտաբանն մարդը, որ ոչինչ կ'ուզէր մօտիկ ընել և անընդհատ հաշիւ կ'ուզէր: Խառնովանիմ, որ «Շէշրիկ»ին այդ խիստ բնաւորութիւնը խոտոր համեմատեցի Հ. Մ. Բ. Մ. ի ներդաժիտ ոգւոյն: Վերջէն կը հասկնայի որ, վերին առիթման բժականդիր, խիստ և ջգուտ այն նիհարակալմ մարդուն մէջ կ'ապրի գերազանցապէս բարի, ուղղադատ և անձնուէր անհատը:

Հ. Մ. Բ. Միութիւնը, եթէ իր առաջադրած առողջ և դավելի նպատակով չառ և չուտ ժողովրդականութիւն չանցաւ, այդ յաջողութեան գլխաւոր աղբակը՝ անտարակոյս որ, իւրաքանչեւ գործելակերպը եղաւ, որուն մէջ՝ իր կազմութեան օրերէն սկսելով, մեծ բաժին մը ունէր Շէշրիկը, ստանձնած ըլլալով ամենապատասխանատու և յոգնեցուցիչ մասը՝ համարակալութեան ձիւղը: Եղանակեցիք էր անոր համար որ, նախ մեր գործը տղոց հետ ըլլալուն, պէտք էր գտնել այնպիսի դիւրամոտեցիկ ձեւ մը, որ տղան դժուարութիւն չի կրէր այս կամ այն Մ-դի հաշուապահութիւնը վարելու, և, յետոյ՝ մարմնակրթական կանոնաւոր միութեան մը նախընթացը չ'գտնուելուն այն ինչ որ գրուէր, նոր էր, և թէ նիւթական և թէ աշխատանքի տեսակետով խնայողականը պէտք էր ըլլար: Պատասխանատու գործ էր Հ. Մ. Բ. Միութեան համարակալութիւնը այն պատճառաւ որ՝ գացող-եկող բոլոր հայ կազմակերպութիւնները չէին ունեցած և կ'ուր առած ճշգրիտ հաշիւ, ապա ուրեմն անվատահաշիւ ներշնչած էին ազգին: Ճգրիտ և խնայողական հաշիւը, ինչ որ, անվերապահօրէն կարող ենք յայտարարել թէ ունեցանք: Հազարաւոր անգամներ և 75ի մօտ Մ-դեր համարչ միութեան մը հաշուական գործը, մուսանք ըսելու, կարծաւորին չափ ալ դիւրին աշխատութիւն չէր, որը համբարաւոր ոգով, կովեց, չովեց ողբացեալ Շէշրիկը, մինչև որ միութիւնը օրըստօրէ գործնալով որպէս օգնական վճար-

եալ պաշտօնեայ մը տրուեցաւ: (Մագրի գիւղի Մ-դէն նոյնքան բժականդիր հաշուակալուհի մը՝ օր. Հեթմինէ Ունեճեան:

Շէշրիկեանին կը պարտինք, ներկայիս գործադրելով անդամագրական չլթայակերտ ձեւը, որուն չորսորհիւ երբէ՛ք անգամ մը չի կրնար հետաւոր Մ-ձիւղ մը խաբելով, որպէս նոր մէկը, արձանագրել: Ի մէջ այլոց լաւ կը յիշեմ Քէօթիճեճի Մ-դին գլխով Բերա-Շիշլիցի մը: Շէշրիկեան գիտ կանչելով ծուղակին մէջ ինկող տղուն հաշիւները և կենապարտիւնը ցուցուց, և մինչև որ հաշիւները և այլ օրինական ձեւակերպութիւնները չի լրացուց, կարծես նոյն տարուայ Ողիւմիականին իսկ մասնակցելու թոյլ չ'տրուաւ: Որքան կը նրճուէր այսպիսի պարագաներու մէջ, այն սրտի գոհունակութեամբ որ գործը կանոնաւոր կ'ընթանայ: Երբ գայ ժամանակը կեդրոնի հաշիւները քննելու, (և ասիկայ պէտք է ունայնել) հոն պիտի գտնենք մաքրուիւն, ճշգրտուիւն և խնայողութիւն որոնք կենդանի յիշատակներն են անխոխարինելի Գառնիկ Շէշրիկեանին, և պատիւը՝ Հ. Մ. Բ. Միութեան: Իրչեւ կարող հաշուապէս (մեծկակ գումարով մը, հրեայ կարեւոր Ասետրական հաստատութեան մըն ալ խորհրդատու-հաշուակալն էր: Ըսի՞ թէ՛ Հ. Մ. Բ. Միութեանն տառնոց չէր տառնար: Գառնարուն տեսակ մը իրաւագէտ-խորհրդականն էր Հ. Մ. Բ. Միութեան որուն կարծ ու լուրջ խորհուրդներէն յաճախակի կ'օգտուէին կեդրոնը և իր Յանձնախումբերը:

Եթէ վերջին կեդր. վարչութիւնը ի վարձ իր չարաչար աշխատութեանը (ինքը՝ համեստ կը կոչէր) աշխատեայ «Բարձրա ցիր - Բարձրացաւ» մէտալով պատուեց, այդ բաւական չէ՛, այլ Անոր արժանիքին իսկական գնահատումը այն կրնայ ըլլալ որ՝ մեր բոլոր անդամները, իրենց հոգւոյն մէջ կ'անենան Զինքը, որպէ՛ս ուղղաճիւղեան, պրպտող և նախաձեռնող սղի խորհրդանշան:

Միջանառակ և նիհարակալմ մարմին, անոր վերայ պղտիկ գլուխը, ակնոցին տակէն փայլատակող զոյգ մը կապտորակ աչքերով և «Ճեճելով չը ցուցընող» ի խիստ գէմքը, հիմայ, գլխացոց ցցուած կ'ըզգամ, որուն նայուածքէն՝ կը տարուի մասնագիտութեամբ հապճեպ տղերով հաղիւ թէ կարողացայ ուրուապէս Սկիւտարի Մ-դէն հաշուապետ Գ. Շէշրիկեանը:

Հանգիստ իր անդուստլ ջիղերուն և յարգանք գաղթականի իր անշուք գերեզմանին:

Յ. ՄեկնՅ

Հէլսինկիորս (Յուլիուսան)



Խորհրդաժողովի պատգամաւորներէն մաս մը



ՃԱԽԱՐԾ ՔՐԻՍՏԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. ի Օրուայ առթիւ մեր Մասնաձեռն գերբ ընդերս իրենց յարգանքի բաժինը հայ մարմնակրթական շարժման մեծագույն առաջնորդին Շաւարշ Բրիտանի յիշատակին: Հայ երիտասարդութիւնը գիտցաւ ու պիտի գիտնայ ծանօնալ իր պարտքը հանգէպ Բրիտանի, որ իրեն համար ոչ միայն ապրեցաւ հայ հասարակական գործիչի զոհողութիւնն առ լեցուն կեանք մը, այլևս ունեցաւ երկրական վախճան մը՝ միայն անոր համար որ ուզած էր հան երիտասարդին սարկեցնել ուժել, առողջ ու մաքուր ապրիլ:

Բրիտան եւ «Մարմնամարզ».— Ծնած Պէշիկթաշ, Պոլսի 1886ին, Բրիտան ստացած է իր կրթութիւնը Պարսիկի եւ Պոլսի Ամերիկեաններուն մէջ: Աշակերտած է աշխարհաշուի էօմէն Սանտօի Լոնտոնի մէջ ու վերադարձին (1903) Պոլսի զանազան վարժարաններու մէջ ստանցնած է մարզանքի դասեր:

Մինչեւ «Մարմնամարզ» ի երեւումը (1911 փետրուար) Շաւարշ միայն փոքրիկ չըջնակի մը մէջ ծանօթ համեստ ուսուցիչ մըն էր, այն ալ մարզանքի պէս «անկարեւոր» դասի մը. սակայն թերթին հրատարակմամբ արդէն ան կը դառնար հասարակական մարզ:

Շաւարշի արեւմտեան դաստիարակութիւնը, եւ ջգուտ, աշխոյժ ու գուարթ բնաւորութիւնը մասնաւոր ապագայութիւն մը կը ձգէին վրայ: Ոճը, հսկասկ գրախն իր պարզութեան, իրայատուկ, վճռական, մեկին ու տպւորիչ էր: Իսկ իր մտածելակերպը եւ փաստաբանութիւնը՝ իր ասեմին ընդգծած ձեւը ունին: Յատկանշական, եւ մասնաւորապէս իր հետեւեալ տարիքը «Հայոց Պատրիարքին տեղը առաւելապէս սկսեալ է ըլլայ հայ երիտասարդին քովիկը. այն երիտասարդութեան, որ չ'ուզեր լալու վարժուել, այլ կը վարժուէ ճիշդի, պայքարի եւ խնդրու:

Սկիզբը գրեթէ մինակ էր, ունենալով հաղի քանի մը բարեկամներու քաջալերութիւնը. բայց իր անպարտ վճռականութեամբ գործի կը լծուէ: Դժուար

բութիւններ չեն պակսիր: Թերթին ամէն մէկ թիւը զոհողութիւններով միայ լոյս կը տեսնէ, սակայն, «Մարմնամարզ» կը շարունակուի մինչեւ որ աւելի ծանր հոգեր գան անգամ մը եւս մթնաղնելու հոյկուկան երկնակամարը:

Կը յիշեմ պիտքը, վերջին օրերուն, երբ այլեւս խմբագրատունը պարպել հարկ կըլլար, մտահոգ ու մըռայլ՝ կարգադրութիւններով զբաղած...

ՄԱՐԻՄԱԿՐԹԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԷ.— Բրիտան իր Մարմնամարզով իսկապէս շինարար աշխատանք կատարած է մեր մէջ: Այնպիսի ատեն մը երբ մարմնակրթանքը «Անպարտութիւն» կը նկատուէր ոչ միայն հասարակ ժողովուրդէն այլ եւ երկրորդական վարժարանի մը անօրէնին (պ. կարապետեանի) կողմէ, ան պայքարեցաւ, դրեց, խաւեցաւ եւ հետաքրքրեց ու համոզեց երիտասարդութեան հետ նաեւ ծնողներն, մտաւորականութիւնը, մինչեւ իսկ մամուլը եւ ազգային իշխանութիւնները, այնպէս որ օր մը Պատրիարքը հայկական Ողիմպիականի նախագահութիւնը կ'ստանձնէր, ու հայ մամուլի ներկայացուցիչներ, թերեւս կեանքներուն մէջ առաջին անգամ ըլլալով՝ մարզադաշտին վրայ կը շրջէին իրենց աչքերով տեսնելու համար հայ մկանին փառքը:

ԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԻ.— Շաւարշ չէր բաւականանար «Մարմնամարզ» մէջ ու Պոլսի բնակէն ցնդին ֆիզիքական ապահովութիւնը ձեռք բերելու անհրաժեշտութեան մասին արտայայտուելով: Ան ուզեցաւ գործի կը լծուէր: Անձամբ կը շրջէր Պոլսի թաղերը, կը կազմակերպէր, կը մարզէր, կը քաջալերէր: Եւ այն տեղ ուր ինք չկար, կար իր ազդեցութիւնը, կար իր շունքը, — «Մարմնամարզ»:

Պոլսի մէջ թէ գուտները, հեռոյնեակ մարդական միութիւններ կը կազմուէին ու կեանքի մ սին նոր ըմբռնում մը, նոր ճաշակ մը ունենալ կ'սկսէր հայ երիտասարդութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԵՐ.— «Մարմնամարզ» իր երեւումովը իբր ատաղջին արդիւնք, ապահովեց հայկական Ա. Ողիմպիականը:

Ժիշտ է, որ Շաւարշ օժանդակներ ունեցաւ, որոնք գործիք ի գլուխ հանեցին, բայց այդ չի նշանակէր որ նուազ եղաւ նաեւ «Մարմնամարզ» ի կատարած գլխաւոր ու հիմնական դերը:

Իսկ հայկական առաջին Ողիմպիականը, իր կարգին, տարբեր հմայք մը ունեցաւ՝ խոր ազդեցութիւն մը ձգելով մեր երիտասարդութեան վրայ, այնպէս որ յաջորդ օրն իսկ սրճարաններէն աչքստու թիւով յաճախորդներ կը պակսէին տաղջ ու մարտը կեանքի մը նուիրուելու համար:

ՇԱԽԱՐԾ ԵՒ ՍԿԱՌԻՏԻՉԻ.— Մարմնամարզի երկրորդ տարուայ երկրորդ թիւին մէջ, առաջին անգամ ըլլալով կ'երեւար յօդուած մը Պոլսի Արտաւնեւոր մասին «Տղայացի գումարասկներ», վերնադրով հաւանաբար Շաւարշի կողմէ գրուած, որմէ վերջ Պ. Յ. Թ. Հինդլեան երկար ուսումնասիրութիւն մը կ'ընէր, ու կը թերագրէր նոյնօրինակ կազմակերպութիւն մը ստեղծել մեր մէջ:

Այս տեղ անցողակի պարտաւոր եմ ի վեր հանել սա կէտը թէ՛ մեր մէջ դաստիարակ մըն է որ եղած է Սկաւորիգմը՝ ներմուծել ուղղորդ, մինչդեռ ուրիշ ազգ

գերու մէջ զինուորականներ նախաձեռնած են: Այդ կը նշանակէ որ մենք աւելի ճշգրիտ կերպով բմբռնած ենք Սկաուտիզմը որ դերադանցապէս կը նշանակէ դաստիարակութիւն:

Սկաուտական ասօցիին խումբեր կը կազմուին Հինդլեան վարժարանին (Նոր Կպրոցի) մէջ եւ Սկիւտար: (1912ին)

Շաւարշ խանդավառուած կը մշակէ երազ-ծրագիրներ (այն ատենուան համար) ու մէջտեղ կը դրնէ տեսակ մը Հ. մ. Բ. մ. ի գաղափար որը իր մէջ կ'ամփոփէ ամբողջ հայ պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը:

ՇԱԽԱՐՇ ԵՒ Հ. Մ. Բ. Մ. ի ԳԱՂԱՓԱՐ.— Հայ Մարմնակրթական միութեան մը կազմութիւնը ամէնազլխաւոր մասնազոտութիւնը եղած էր Շաւարշին: Շարժումը առաւել կամ նուազ ձեւով հայ իրականութեան մէջ ընդհանրանալէ յետոյ, անիկա իր այս ծրագիրը հրապարակ նետեց՝ յաճախակի արտայայտուելով «Մարմնամարզ» ի մէջ: Արդէն դանդաղ կազմեր եւ միութիւններ խանդավառուած էին նոյն նպատակէն: Որպէսզի գործը ստանայ հիմնական եւ լայն բրեւիթ, Քրիսեան որոշուած թուականի մը համար պատկաճաւորական ժողովի հրաւիրեց միութիւններ, հայ մամուլի ներկայացուցիչներ եւ դպրոցներու ուսուցչական կազմերը: Յաւալի է բնել, սակայն, որ հապտակ թափուած քանքերուն ձեռնարկը յաջողութիւն մգտաւ եւ համապատասխան հրաւերը դատաւ փոքրաթիւ համաձայնութիւն մը:

ԵՂԵՐԱԿԱՆ ՄԱՀԷ.— Աշխատանքի ու նուիրումի իր ամէնէն եռուն շրջանին, սակայն, քաղաքական ծանօթ դէպքեր խորտակեցին իր բոլոր երազները... 1915ին, Շաւարշն ալ, բոլոր մասնաւորականներու կարգին կը հեռացուէր Պօլսէն՝ տարաբախտ մահացումին տարուելով...

Իր ծրագրին ու կեանքին դեռ կէսէն բաժնուած, եթէ իր յիշատակութիւնը կսկիծ կուտայ մեզի, ուրախ ու հպարտ պէտք է ըլլալ, որ զլխաւորաբար իր մով ներշնչուած շարժումը այսօրն ուժեղ կերպով արմատացեր է հայ իրականութեան մէջ:

Իր յիշատակին հարկ մը մատուցանելու կոչուած այս հաղթանակ տղերքը հազիւ թէ կարենան յատկանշել իր դէմքն ու իր կատարած դերը: Աւելի յարմար առիթի մը վերապահելով իր մասին լայնօրէն խօսիլ, կը փափաքէինք, որ զինքը կամ իր գործը ճանչցողները, քանային իր շունչը ներմուծել նորերուն մէջ, որոնց իր բաղձացած ձեւով դաստիարակութիւնը լաւագոյն պսակը պիտի ըլլայ իր նուիրական յիշատակին:

Ն. ԱՍՏՈՒԱՅԱՏՈՒԵԱՆ

ԿԱՐԴԱՑԵՔ

ԵՒ

ՏԱՐԱԾԵՑԵՔ

“Բ.Մ.Բ.Մ.”

ՀԱՅԿ ԺՕԼՕԼԵԱՆ

Աւելի քան տասը տարի է անցեր, բայց իր մարմնեղ ու առոյգ հասակը՝ — պի՛րկ, քիչ էր բերտ՝ սակայն համաչափ, — ու իր բարի, բայց շատ բարի նայուածքը՝ դեռ կենդանիօրէն դրօշմուեր են յիշողութեանս մէջ:

Մեզմէ ամենց համար թերեւս պարտութիւն մըն է քանի մը տող «նուիրել» ճամբուն դեռ կէսէն բաժնուողներու յիշատակին: Ինծի կը թուի, որ ուրիշ, դառնօրէն բաղձալի բան մը կայ այդ վերջիշունհերուն մէջ:



Ու այն հոյակապ քաղանդի կողքին, — որուն յեղակարծ կորուստը հայ ժողովուրդին տառապանքը կրկնապատկեց —, անանուն ու աննշմար ստուերներ կան, որոնցմէ հազիւ թէ կարենանք անջատուիլ այնքան սերտօրէն նոյնացեր են անոնք մեր մասածումին, մեր զղացողութեան ու մեր յարստեւօրէն ածող ճիգերուն հետ:

1912ին, ծափի ու ճառի այդ շրջանին ուսանողութեանս օրերուն կը կապուի իր յիշատակը: Կեդրոնականէն յետոյ, միացեր էինք ուրիշ յարկի մը տակ: Եւ հակառակ դրասեղանը տարի մը միասին գրուած ըլլալուս, գրեթէ անհաղորդ, իրարմէ... հեռու ապրեր էինք: Ինք դպրոցէն ներս՝ հաշիւի, կէտը կէտին պատշաճեցնող ու իր նախընտրած ճիւղերուն կապուած իսկ անկէ դուրս՝ բնութեան, ժպիտին ու ուժին նուիրուած աղայ մըն էր: Եւ ի՛ր իսկ բացատրութեամբ — «յաւ իտեանական մենամուլը, գրքերուն մէջ աշխարհը մտցած, ե... շուքէն վախցող մը»: Ու հակադիր մեր այս խառնուածքներով, հաշտութեան միայն մէկ եղբ գտեր էինք, — ստուգութիւնը — ուր հաւատարմ ճիգերով պիտի նոյնառնայինք գլուխ-գլխի՝

անձամբ ին (X/ն) որոշումներն անձնատուր:

Ապրիլակերպի ու նախապրոգնության մեր այս անհայտ տրամադրությունները դատարանին դուրս մեղ միշտ հետև պահեր էին իրարմէ: Հայկին նկատմամբ սչինչ կրցեր էի ունենալ, որպէս հոգեկան կապ: Ինք ալ իր բարեկամներու կարգին երբէ՛ք չէր դատած զիս: Բայց Հայկին մէջ եւ գտեր էի ուրիշ, բացասիկ գիծեր: Արտաքինեւ այս թուխ ու ջղուտ տղան, դպաշուն, ու բարախուն սիրտ մը, բայց մանաւանդ հոյակապ նկարագիր մը ունէր: Բարութիւնը — գիտակից բարութիւնը, — իր մօտ՝ ի՛րեն հետ էր ծնած: Ու մեծ, անհամեմատ չափերով մեծ ներդրումութիւն մը կար իր շարժումներուն, վերաբերումին ու նայաւորութիւն մէջ: Ատիկա այնքան չնշտուած էր իր մէջ, որ եւ իմ չա՛ր պահերուս լուսօրէն կը մօտենայի իրեն՝ թրմով խեղդելու համար մէջս ամէն անողորմ զգայնութիւն: Լայն յարաբերութիւններ չ'ունէր: «Հաճի՛ն» — ա՛յ յապէս կ'որակէինք երբորդ «մաթէմատիկոս» մը՝ Գեորգ Մամուլեան — տեւական խօսածիցն էր: Մտերիմ չ'ունէր անիկա, չէ՛ր ալ կրնար ունենալ: Վասնզի, իր առաքելութիւնը, — բարեացակամ, ներող, խնդակից, — ամէնքին հաւասարապէս գիտէր տալ: Խոստովանիմ, որ շատ ուշ ճանչցայ իր մէջ այդ գիծերը: Անգամ մը միայն, տարեվերջին, երբ միասին կը պատրաստուէինք քննութեան, «Մարմնավար»-ը հանկուզ գրպանէն, և խանդավառ շնչով մը,

— Եթէ կարենայինք տարածել սա շարժումը, բնու:

Եւ, բարեմիտ յոյնածութեամբ մը թղթատելով զայն,

— Թէեւ... գրական չէ, աւելցուց հեզնոտ, բայց կարգա՛յ սա յօգուածաշարքը:

Պ. Յ. Թ. Հինգլեանի ուսումնասիրութիւնն էր՝ սկաուտիզմի նուիրում: Իրեւ նոր ու իտեպապաշտ մտածողութիւն մը՝ խանդավառացի զիս այդ վարդապետութիւնը ու, քանի անդրադարձայ, ա՛յնքան կապուած զգացի ինքզինքս անոր: Մարդը, որ պատրաստել պիտի ձգտէին այդ շարժումով, հետզհետէ գտեր էի Հայկին մէջ: Համեստ, վճռական, անխոնջ, բարեսէր ու առաքինի, — Հայկը կենդանի տիպարն էր այդ դադախարին, ծագումով սկաուտ մը, եթէ կ'ուզէք:

Արդէն կապուեր էի իրեն, — իրեն, թէ իր մէջ չնչող վարդապետութեան, չգիտեմ: Էականը այն է, որ ա՛յ կէ վերջ, իրենց «շարքեր»-ուն յետոյ գտայ ինքզինքս: Դպրոցէն ներս շարժումը աւելի շնչոտեցաւ: Բակը դարձաւ մարդարան մը: Ապահովեցինք նաեւ, Շաւարշ Բրիտանի այցելութիւնը: Հայկը՝ Պօլսոյ Խոստիան «Տորք»-ին ու «Արաքս»-ին մաս կազմած՝ ստանձներ էր շարժման ղեկը, որուն հետ նաեւ իր եղբայրը — Հ. Մ. Ը. Մ. ի ապագայ ղեկավարներէն մին՝ Գրիգոր Ծօլօեան, — եւ «Թօրիտո»-ն — սրբնթաց Յ. Ազարկըզեանը, (Սլիվէնի մէջ, այժմու անդամներէն): Աթլէթիք փորձերու կողքին, անոնք հոգ տարին, նաեւ, Արարա՛ս՝ քիմի կազմութեան, որուն կը մասնակցէր համբաւուոր ձախ «Ժակոզ» մը՝ Ս.

Ռուպէսէրեան (Հ. Մ. Ը. Մ. Փարիզի Ա. Թիմէն): Հայկը առաւելապէս հաշիւ կը սիրէր դնել խաղին մէջ:

— Մարեմարիֆին կապուած ըլլալդ՝ ֆութպօլով եւս ապացուցանէ, զիսով տուաւ ինծի օր մը:

Եւ, ձախաւեր բասերովս զի՛ս ալ խառնեց կարաւանին...

Ջերմօրէն կապուած արտաքին շարժումներուն, աւելի խորքին նւիրումով մը եղաւ սակայն ինք: Իր մօտ խանդավառութիւնը դադաթնակէտին հասեր էր իրիկուն մը, երբ Կովկասահայ թատերախումբը «Հին Աստուածներ»-ը ներկայացուցեր էր: Զօրականներու խնջոյքի տեսիլն ու Վահագնի փառաբանութիւնը հմայեր էին զինքը: Դպրոց վերադարձնուաւ, և անկէ վերջ գրեթէ ամէն մէկ դադարի պահուն, իր սովորական լրջութենէն պիտի հրաժարէր, «Հաճի՛ն»-ին հետ լիաթոք գոչելու համար,

— Կեցցէ՛ Ուժն ու Գեղեցկութիւնը...

Փարիզ, կրկին ուսողութեան ճիւղին մէջ իրար գտնելու խոստումներով աւարտեր էինք վարժարանը: Պատերազմը քայքայեց մեր ծրագրերնր: Աշնանային առտու մը տարաբախտ «Հաճի՛ն» Տէր Զօրի մօտ հողին յանձնեցինք: Ու մահացումի ճամբաներուն վրայ պատահաբար խմացայ, որ Հայկը թրքական բանակին կը ծառայէ իրեւ փոխ-երկրաչափ: Իսկ աքսորէ վերադարձիս իր եղբայրը Սիրունին տեղեկացուց իր կորուստը: «1916 ի սկիզբը զո՛ւ էր զացեր Շար Դըլլայի կոտորածին՝ 1700 հոգիի հետ»:

Մօտ ամիս մը առաջ, մեր աշխատակիցներէն Օ. Բունիկեան ինձ կը յանձնէր ֆութպօլի մեր մէկ խմբանկարը: Տարիներու ժպիտներէն, յոյսերէն, ճիգերէն ու տառապանքներէն խաւաքարտի այդ կտորն էր մնացեր միայն: Բայց անով եւ անդրադարձայ այն անդգալի ներշնչումին, որ Հայկը՝ ծնունդով այդ Հայ-Արին ներդրած էր վրաս: Յիշեցի մանաւանդ, իր այն բո՛րի հեղնանքը զոր ունէր ամֆակ մկաններուս նկատմամբ, դառնութիւնը բերնէն չձգելով,

— Չպիտի հաշտուի՛ս, հաշտուելիք չունի՛ս մեր այս շարժումին հետ:

Ժամանակը ժխտեց իր յոռետեսութիւնը: Ժխտե՞ց: Ո՛վ գիտէ: Գուցէ նորէն շարունակէր հեզնել զիս, եթէ իմանար, որ իր մահէն աւելի քան տասը տարի վերջ մարդական այս պարբերականին հոգը յանձնուէր է ինծի: Հայ կեանքին յատուկ չա՛տ մը, փոխութիւններու կարգին Անձամբ մը, այս պատիկ կէտը եւս:

Իր անխոնջ աշխատակցութեան առաւելապէս կարօտ, բայց այս անգամ ալ պէտք չ'ունինք տեսարանողի իր բնածին յատկութեան՝ «լուծել»-ու համար այս չը:

Հայ Պատմութեան անակնկալ էջերուն վերապահումը և բոլոր մեծ ու պզտիկ Հայկերով յատկանշուած հոյակապ գիծ մըն է այդ անձամբը, — մեր Յեղային ճիգը:

Լ. ԳԱՐԻՏ

Մեր ակոյեանները

ՅԱԿՈԲ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

1922ին, հայկական վերջին Լճահանուր Ողիմպիականին օրն էր: Լճահանուր պատերազմէն ի վեր առաջին անգամ ըլլալով, դաւառը Իզմիրով և արտասահմանը Ֆիլիպէտով իրենց մասնակցութիւն կը բերէին այդ տարեկան հոյակապ մարզատօնին, կազմակերպուած Հ. Մ. Ը. Մ.ի կեդրոնին կողմէ:

Պոլսոյ Հայ Մամուլին աշխատակիցները — Վ. Ս. Փափազեան, Ա. Մկրտչեան և ևս — դաշտին վրայ իրարանցումի մէջ էին: Ինչպէ՞ս «տաղ» մը դռներու ցանկութեամբ, որպէսզի յաջորդ օրը կարենային դաշն պանծացնելու մէկ զիրար դէկ...

**

Այդ ատուրը եղաւ կարապետ Շահինեան, Իզմիրէն, որ կոտրեց երկայնութիւն ցատկելու մեր ազգային մրցանիշը: Երկրորդը պիտի ըլլար Ֆիլիպէի պատուական «Շանթ»-ին պատուիրակը, այսօրուան մեր հերոսը, եթէ ձողով ցատկելու մրցումէն առաջ 400 մէթր վազքին մէջ արկածով մը իյնալով վիրաւորուած չ'ըլլար:



Թ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ (Ֆիլիպէի Հ. Մ. Ը. Մ.ի)

Սակայն, եթէ նոյն օրը Յ. Մամիկոնեան չի կրցաւ իր վրայ դրուած յոյսերը իրականացնել, 3 տարի վերջ, այսինքն անցեալ դարնաւ, անիկայ լիառատ վարձատրեց անոնք՝ որ իր մէջ ապագայ ակոյեան մը նշմարելով զինքը առաջնորդած էին:

Ու այսօր ա՞ր Ֆիլիպէցին է որ ի տես այդ 3 մէթր 32ի բարձրութեան՝ պիտի վարանէր Յ. Մամիկոնեանով ինքզինքը հպարտ դառնէ:

**

Պէտք է խոստովանիլ թէ Ֆիլիպէ Յակոբիմիայն մարզական հայրենիքը եղած է: Արդարեւ, մեր հերոսը աշխարհ եկած է Պոլիս, Գասրմ Բաշայի թաղին մէջ 1904ին և փոքր տարիքին իսկ դաշխած Վառնա: Պուլկարիոյ այդ ծովեզերեայ գեղեցիկ քաղաքին մէջ է որ անիկայ սկսած է «հասակ նետել», ու գպրոց երթալ: առաջին անգամ Ֆիլիպէ եկած է 1912ին, ուրիշ վերադարձած Պոլիս — միշտ իր ծնողքին ընկերակցութեամբ, — 1917ին, մնալու համար մինչև 1920:

Ահա այդ շրջաններուն է որ Յակոբ սկսած է ըմբռնել տղատ օդի խաղերուն հաճոյքները և խաղալ ֆութպոլ «Շիշլի»-ի Գ. Բ. Գ. խումբէն: 1920ին դաշն կը գտնենք դարձեալ Ֆիլիպէի մէջ: Մեր հերոսը հոն է որ սկսած է ձողով ցատկելու փորձեր ընել, նախ 1 մէթրով (!), յետոյ երկու, 2,50, մինչև որ 1922ին անցած է 3 մէթրը, գոհունակութեամբ մպիտ մը դժել տալով իր նոյն ատենի մարզիչին՝ Ալոտ Պամաճեանի դէմքին վրայ: Եւ մաճայնութեամբ որոշուած է դաշն Պոլիս ուղարկել՝ Հայկ. Զ. Բ. Ողիմպիականին մասնակցելու համար:

Այդ համբուրդութիւնը իր օգուաները ունեցած է Յակոբի համար, որ լաւ մը ուսումնասիրած իր հակաակորդներուց ցատկելու կերպերը, գտնոնք միտքը պահած ու մտադրած է յառաջդիմել:

Երբ մէկը մտադրէ յառաջդիմել, հազուադէպ է որ չի յաջողի և անկայ առաջին անգամ մը, 1924ին, Սօֆիայի Պուլկարիոյ ակոյեանութեան մրցմանց օրը, մեր ազգային մրցանիշը (3.08) անպաշտօն կերպով 3.15ով կոտրելէ վերջ, անցեալ Ապրիլին կրցած է ցատկել 3.32 մէթր:

1924ի վերջերը անիկայ մեկնած է Ֆրանսա, ուր 1925ի ապրիլի եղանակին անդամակցելով ծանօթ C. A. S. G. Միութեան, առիթը ունեցած է ֆրանսացի ծանօթ մարզիչ Գիլիարի ցուցմունքներուն հետեւելու որոնք իրենց մեծ օգուտը ունեցած են: Յետոյ, սակայն, սխալ մը ըրած է հրամարելով — աւելի ճիշտը թելադրուելով ուիշներէ որպէսզի գայ Հ. Մ. Ը. Մ. լիաւն առնէ: Եւ որովհետեւ բարիզի մեր մասնաճիւղը «եկեղեցւոյ բակ» մը իսկ չ'ունի ուր փորձեր կատարուի արդիւնքը այն կ'ըլլայ որ Յակոբ ամբողջ ամառուան ընթացքին միայն Մէկ անգամ եղէքը ձեռք կրնայ առնել, այն ալ տարեկան ողիմպիական օրը, ուր ցատկեց, ինչպէս գիտէք, 3 մէթր 20 քիչ մօտէն վար ձգելով 3.40ր:

1925 Ապրիլ 19ին երբ իր մրցանիշը հաստատեց, անիկայ դեռ նոր սկսած էր յաճախել այդ գաղիական մարզարանը և այդ առաջին քայլը մեծ յոյսեր կը ներշնչէր մեզ — յոյսեր որ մեր ակնարկը կը սեւեռեր շատ բարձրերը, դէպի 3.50 մէթր, 3.60 և աւելի բարձր:

Յակոբ ալ ճիշտ այդ բարձրութիւններուն վրայ է որ կը պտտի, կամ աւելի ճիշտը կ'ուզէ պտտիլ. իր միակ մտածումն է յառաջիկայ գարնան իսկ անցնիլ 3-40էն աւելի բարձրերը: Ինչո՞ւն է, երբ գիտակցաբար աշատանքի կը լծուի:

ՆԿԱՐԻՉ Ք.

Ս. Է.— Մեր ամէնէն ժողովրդավարական տէրերէն կը խնդրենք շուտափոյթ մեզ տեղեկացնել իրենց որոշ հասցէն:

ՊԱՏՄԱԿԱՆ ՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Մ. Ը. Մ-Ը ԻՆՉՊԷՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԵՑԱԻ

Հայ բազմատանջ ազգը, քաղաքակիրթ ազգերու ընդունած քաղաքականութիւնը ու զարգացումը ընդգրկելու ու յարատեւելու ընդունակութիւնը ցոյց տուած է, ամէն անգամ որ առիթ է ներկայացած:

Շատ զարմանալի ու տարօրինակ կը թուի սաիկա բոլոր օտարներուն, երբ ականատես կ'ըստ են մեզի՝ ջարդի ու թալանի օրերուն: Կարծես հայը բարոյական աւելի բարձրացում ու ֆիզիքական անհաշուելի ոյժ կը ներշնչէ օտար հորիզոնի տակ:

Ահա այս գերմարդկային ոյժը բնականէն խմորուած է մեր ազգին պատմութեան հետ, որը կարելի է արմատախիլ ընել, տարածումի օրերուն իսկ: Օրինակներ, անթուելի ու ապացոյցներ կենդանի են, զանոնք ճնշելու: Փոքր Ասիոյ Բիւզանդական սարսափներէն, աղէտներէն հալածուած, բուռն թափառական հայեր, կ'ապաստանին Հելլեդաշի հիւրընկալ ավուները, Բիւրէի ու Աթէնքի խորան ու անմարդաբնակ տափաստաններուն վրայ:

Հազիւ զարուն մը կ'անցնի, այդ տափաստանները կերպարանափոխուած են զիւղերու, ինչպիսին է Տերզնոսթի, Դոգլինա, Լիբաղմա, Սինկրոս եւ ուրիշ չրջաններ:

Հոս, այս զիւղերուն մէջ զարմանքով կը տեսնաս զպրոց, եկեղեցի, ժողովարան, լսարան, հայ մանուկը, հայ մատաղ սերունդը դէպի լոյս առաջնորդող բոլոր կազմակերպութիւններն ու միութիւնները, բայց ցաւալին այն էր, որ այս միութիւնները հիմնուած էին լոկ մտային զարգացում մը տալու նըպատակով: Անդին կար նոյնքան կարեւոր կէտ մը, որը որոշապէս պէտք էր մտային զարգացման հետզուգորէն թանար, այն էր ֆիզիքական եւ բարոյական զարգացումը: Բոլոր այս կազմակերպանքները ունէին երիտասարդաց միութիւններ, որոնց ծրագրէն զուրո մընացած էր, մարմնակրթանքը ու քառատիղմը: Միմիայն Տերզնոսթիի հայ յառաջընթացական երիտասարդաց միութեան ծրագրին մաս կը կաղմէին վերոյիշեալ երկու կէտերը, որոնց իրադրութեամբ սակայն թուղթի վրայ մնացած էր, թէեւ քանի մը անգամներ փորձուած էր, զայն գործնական հողի վրայ դնել: Այս ուղղութեամբ գործին հմուտ երիտասարդներուն չգոյութիւնը խիստ զգալի էր: Ահա այս միջոցին է որ հրապարակ կը նետուին երկու ազատու առտիճանաւորներ (Պ. Գայեան Կիլիկիայէն եւ Մ. Մանուկեան

Պոլսէն) եւ հնայելով պայմաններու դժուարութեան, իրենց ուսին վրայ կ'առնեն այս նուիրական պարտականութիւնը, իրենց սիրած ու դաւանած վարդապետութիւնը գործնականապէս իրագործելու համար այս օտար հորիզոնին տակ: Առաջին անգամ ըլլալով, կը պանծացնեն սկստուական դրօշը: Ահա քիչ ժամանակի մէջ հոս ու հոն զիւղի եկեղեցւոյն ու հանդէսներու մէջ կը նշմարես սկստուներ, որոնք գրեթէ իրենց կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով լսած էին սկստու անունը: Տղաքը շատ ոգեւորուած էին: Գրեթէ ամէն իրիկուն հազիւ իրենց աշխատանքէն վերադարձած, իրենց յոգնութիւնը կ'առնէին այն խորճիթին տակ, որը իրենց հաւաքավայրը կ'ըստ էր:

Տղայոց ոգեւորութիւնը, վերջին ծայր կը քաշալերէր ազգային բոլոր կազմակերպութիւնները: Բայց այդ ոգեւորութիւնը, որպէսզի աւելի արմատանար տղայոց հողին ու մտքին մէջ, պէտք էր անձնուէր ու յարատեւ աշխատանք ու ազատական դասախօսութիւն, բայց արդիւններ կային: Դրեթէ տղայոց մեծամասնութիւնը Կիլիկիցի ըլլալով պէտք էր թրքերէն զասաւանդել: Սակայն այս ալ կարելի էր, որովհետեւ սկստուական դաւանանքը չէր թոյլատրեր որ օտար լեզուով դասախօսութիւն աւանդուի: Այսպէս դժուար կացութեան մէջ դասախօսուեցաւ տղայոց հայերէն լեզուով: Եւ ահա երեք ամիս շանցած բոլոր տղաները հայերէն կը խօսէին: Բայց այս վերոյիշեալ անհրաժեշտութիւններուն հետ մէկտեղ պէտք կար նիւթականի, որուն հայթայթումը շատ մեծ բեռ մըն էր:

Այդ ուղղութեամբ կը կազմուի տեղական վարչութիւն Պ. Արամ Կայծակի նախագահութեամբ:

Հոս կ'արժէ գնահատել Պ. Արամ Կայծակի այն աշխատանքը, որ երկու տարի թափեց շարունակաբար: Պ. Պ. Արամ Կայծակի, Պ. Գայեանի ու Մ. Մանուկեանի աշխատանքներուն շնորհիւ շատ քիչ ժամանակի մէջ կազմակերպուած ու հագուած երկու խումբեր ունեցաւ Յունաստանը, ղեկավարութեամբ Մանուկեանի ու Գայեանի: Հոս կ'արժէ յիշել Պ. Լ. Գայեանի այն աշխատանքը, որ սկստուական նուագախումբը կազմելու համար թափեց վարիչի աստիճանով:

Այսպէսով Տերզնոսթիի օրինակ հանդիսացաւ Յունաստանի բոլոր կազմակերպանքներուն, եւ հիմնադիր կազմակերպիչները եղան Պ. Պ. Գայեան ու Մ. Մանուկեան: Այս ուղղութեամբ խումբեր սկսան կազմուիլ Դոգլինիոյ եւ ուրիշ գաղթավայրեր: Միանգամայն Պ. Յակոբ Աւագեան, Պ. Գառար Աստրեկեան, ու Յարութիւն Առաքելեան, Պ. Հայկ Տէտեան յանձն առին կազմակերպել զատ զատ խումբեր:

Յունաստանի սկստուական գործերը կանոնաւորուելու ու զայն որոշ ուղղութեան մէջ դնելու համար Պ. Մանուկեանի ջանքերով կազմակերպուեցաւ Կեդր. վարչութիւն մը եւ սկստուական յանձնախումբ մը, որոնք ներկայիս կը ղեկավարեն Յունաստանի հ. մ. բ. մ. ի գործերը:

(Ճարուակելի) Հիւ. ԱՌԻԿԻՅ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հ. Մ. Բ. Մ. ՌՈՒՄԱՆԻՈՅ ԵՒ ՊՈԽԼԿԱՐԻՈՅ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Շրջ. Վարչութեանց լիազօրեւեակ կազմուած Խորհրդաժողովը, գումարուած 21—24 Նոյեմբերին Ռումանիոյ Հ. Մ. Բ. Մ. ի Մասնաճիւղի հաւաքական ճիւղերուն մէջ զբաղելով իր օրակարգին վրայ զտնուած եւ նախապէս երկու Շրջ. Վարչութեանց Խորհրդակցութեան լանձնուած օրակարգով, լանգեցաւ ի մէջ ալ ոչ հետեւեալ որոշումներուն:

Օրկաններու միացման խնդիր

1. Միացնել «Մարզիկ»-ն ու «Արիւն»:
2. Այդ կերպով ստեղծուած նոր պարբերականը դարձնել օրկան երկու շրջաններուն, եւ հետզհետէ վերածել հ.մ. ք. մ.ի օրկանի՝ ստանալէ յետոյ միւս շրջաններու ալ հաւանութիւնը:
3. Պարբերականի վարչութեան հոգը յանձնել Պուլկարիոյ շրջանին կողմէ՝ քնտրուած մարմինին (Թ. Հէքիմեան եւ Ն. Գասապեան):
4. Ռումանիոյ Շրջ. Վարչութիւնը յանձն կ'առնէ իր շրջանին մէջ տարածել պարբերականը՝ ստանձնելով նաեւ վաճառուածներու գանձման հոգը:
5. Պարբերաթերթը հրատարակել իրբեւ ամսաթիւրով՝ մարզական եւ արիւններու բաժիններով, տեղ տալով թէ տեսական եւ թէ տեղեկատուութեան վերաբերեալ նիւթերու, ուժ տալով մասնաւորապէս հ.մ. ք. մ.ի փրօխականին:
6. Պարբերաթերթը հրատարակել 20—32 էջ ծաւալով, բաժնեգին նշանակելով 60 լէվա Պուլկարիոյ համար, 120 լէվա Ռումանիոյ համար, 20 Ֆր. եւրոպայի եւ 2 ալլաք Ամերիկայի համար:
7. Պարբերականին խմբագրութեան հոգը (ստանց վճարումի) վստահել Պ. Կարա Ղազարոսեանի՝ որ արդէն իրր տղապիւն քնտրուած է հ.մ. ք. մ.ի Պուլկարիոյ Շրջ. ժողովէն, Ռումանիոյ Շրջ. վարչութեան կողմէ նշանակելով աշխատակից մը:
8. Պարբերականէն գոյացած սեւէ յաւելումական չափ յատկացնել թերթին կառարկադրածութեան:
9. Պարբերականին իրր տխոզս քնդունիլ «Հ. Մ. Բ. Մ.» վերանուութիւնը:

Միացեալ մրցահանդէս

Ընդունելով հանդերձ որ Ռումանիոյ եւ Պուլկարիոյ մրցահանդէսներուն փոխադարձաբար մասնակցութիւնը երկու շրջաններու մարզիկներու համար ունի իր օգտակարութիւնը, յառաջիկայ Ռումանիոյ եւ Պուլկարիոյ մրցահանդէսները կազմակերպել միմիայն տեղական ուժերով՝ նկատի ունենալով դժուարութիւնները:

Միացեալ բանակում

1. Հնարաւորութիւն ստեղծել որպէսզի, երբ պարագաները ներքին, երկու շրջաններու շրջանային

բանակուաներուն փոխադարձաբար մասնակցին երկու շրջաններու արիւններն ու մարզիկները:

2. Ծանապարհածախսերը կը հոգան հիւր մարզիկներն ու արիւնները, կամ դանտնք ուղարկող շրջանը:

Բանակավայրի յարմարութիւնները կը հայթայթէ բանակումի կազմակերպող շրջանը: Բանակումի մասնակցողները, տեղացի ըլլան թէ հիւր, կը մասնակցին նաեւ բանակումի ծախքերուն:

3. Հիւրերը կը հպատակին կազմակերպող շրջանին կողմէ՝ բանակումին համար սահմանուած բոլոր կանոններուն:

Հ. Մ. Բ. Մ. եւ Եղեական պայմաններ

1. Հ.մ. ք. մ.ի մարմինները պարտաւոր են իրենց դժբախտութիւնը պատշաճեցնել ապրած երկրին օրէնքներուն:
2. Հ.մ. ք. մ.ի մարմինները կրնան մաս կաղմել իրենց ապրած երկրին մարզական դասնակցութեանց՝ ի հարկին պատշաճելով պահանջուած ձեւակերպութիւններուն եւ պայմաններուն:
3. Հ.մ. ք. մ.ի ըլլալով տղաքաղտբական եւ աղտադատակարգային կազմակերպութիւն մը՝ շարունակել բացարձակապէս չզբաղիլ հ.մ.ք.մ.ի հաւարումներուն, ժողովներուն, դատախօսութեանց ատեն քաղաքական կամ կուսակցական սեւէ խոսակցութիւններով կամ վէճերով:

Հ. Մ. Բ. Մ. եւ հայ վարխաւաններ

1. Պարտք դնել հ.մ. ք. մ.ի մարմիններուն վրայ կատարել հարկ եղած բոլոր ձեռնարկները հայ դպրոցներուն մէջ իրապէս պարտադիր դարձնելու համար մարմնակրթութիւնը, եւ դպրոցական պիւտճէիւնուն մէջ դնել տալու անհրաժեշտ վարկերը այդ առթիւ:
3. Աշխատիլ որ հ.մ. ք. մ.ի արիւնները վարժարաններուն մէջ դառնան խկապէս օրինակելի տարր մը:

Պատասխանելու մարզական ուղեցոյցի

1. Պատրաստել մարզական ուղեցոյց մը՝ տալնորդուելով մարզական միջազգային կանոններէն:
2. Մարզական ուղեցոյցի դատաւորման եւ հրատարակութեան հոգը վստահել Ռումանիոյ շրջանին:

4. Մարդական ուղեցոյցի զանազան բաժինները նախապէս հրատարակել զատ զատ, իւրաքանչիւր տպագրական ֆորմայի գին սահմանելով 5 լէյ, 4 լէվա, 1 ֆրանք, 5 սենթ:

5. Մարդական ուղեցոյցի հրատարակութիւնը կատարել յանուն Առժ. կեդր. Յանձնախումբին:

Պատասխանելու արհմեծութեան ուղեցոյցի

Պատասխանել արհմեծութեան ուղեցոյց մը՝ որ իբր առաջնորդ ծառայէ նորընծաներու, Բ. կարգի արհմեծութեան եւ Ա. կարգի արհմեծութեան պատրաստութեան:

2. Սոյն ուղեցոյցը պարտադիր նկատել երկու շրջաններուն համար, և ջանալ որ ըստ այնմ առաջնորդութիւն միւս շրջաններն ալ:

3. Ուղեցոյցի խմբագրութեան և հրատարակման հոգը յանձնել Ռուսական Շրջ. վարչութեան:

4. Պարտադրել երկու շրջաններն ալ՝ ապահովելու ուղեցոյցներու սպառումը իրենց շրջաններուն մէջ, ըլլալ բաժանորդագրութեամբ, ըլլալ յետոյ հատորներուն վաճառումով:

5. Ուղեցոյցին գին սահմանել իւրաքանչիւր տպագրական ֆորմայի համար 5 լէյ, 4 լէվա, 1 ֆրանք, 5 սենթ:

6. Արհմեծութեան ուղեցոյցի հրատարակութիւնը կատարել յանուն Առժ. կեդր. Յանձնախումբին:

Հ. Մ. Ը. Մ. ր եւ հանրային ուրիշ աշխատանքներ

1. Ընդունելով հանդերձ որ Հ. մ. ր. մ. ի բոլոր մարմիններուն վրայ իրենց կարելի աջակցութիւնը ընծայելն հայ մարմիններու եւ հիմնարկութեանց՝ մասնաւորաբար անոնց մշակութային աշխատանքներուն առթիւ, ջանալ որ հանրային այդ կարգի աշխատանքներու համար ընծայուած աջակցութիւնը չի վնասէ Հ. մ. ր. մ. ի սեփական աշխատանքներուն:

2. Խուսափել Հ. մ. ր. մ. ի անունով կուսակցական և խմբակցական ամէն կարգի վէճերու միջամտութենէն, ընտրական պայքարներու միջամտութենէն, և պահել բացարձակ չէզոքութիւն նման պարագաներու առթիւ:

Արհմեծութեան պարահանդեսներ

1. Առհասարակ բոլոր արհմեծութեան՝ Հափաճաւ Ըլլան թէ անհափաճաւ՝ արգելուած է համագլխատով ներկայ ըլլալ պարահանդէսներու եւ հանդէսներու պարի բաժնին:

2. 16 տարեկանէն վար արհմեծութեան արգելուած է նոյնիսկ առանց համագլխատի ներկայ ըլլալ պարերու:

3. Արհմեծութեան թոյլատրելի է մասնակցել միմիայն հայ եւ այլ ժողովրդական պարերու:

Յարաբերութիւն միջազգային սպանական կազմակերպութեան հետ

Յարմարել ամէն վայրի մէջ տեղական պայմաններու՝ արհմեծութեան աշխատանքներու առթիւ:

Փարիզի ֆուրպօլի խումբին Պալ Բանեան ալցելութեան խնդիր

1. Հնարաւորութիւն տեսնել որպէսզի Հ. մ. ր.

մ. ի ֆարիզի ֆուրպօլի խումբը այցելէ Պալ Բանեան և Ռուսական:

2. Պայմանաւորուել նախապէս տեղական օտար խումբերու հետ՝ մասնաւորապէս ապահովելու համար խումբին ճանապարհածախսը:

3. Մրցումներու արդիւնքէն դոյացած գումար հասոյթին կէսը տրամադրուի յառաջիկային Հ. մ. ր. մ. ի ընդհ. ֆոնդին:

4. Այցելութիւնը տեղի ունենայ նախ Ռուսական և յետոյ Պալ Բանեան:

5. Խումբին անունով համար անհրաժեշտ դիւրութիւնները հայթայթելու հոգը յանձնել այն շրջանին՝ ուր կ'այցելէ խումբը:

Հ. Մ. Ը. Մ. ի օր

Ամէն տարի տօնել Հ. մ. ր. մ. ի օր՝ Նոյնմեքի երկրորդ կիսուն (Միութեան հիմնման թուականը):

Հ. Մ. Ը. Մ. ի պատգամական դրօշի խնդիր

Առժ. կեդր. Յանձնախումբին պաշտօն յանձնել Հ. մ. ր. մ. ի համար միօրինակ դրօշի մը նմոյշը յառաջիկայ Պատգամ. ժողովին:

Թուագրութիւն

Հ. մ. ր. մ. ի շրջանները եւ մասնաճիւղերը զանազանել նոր թուագրութեամբ մը, շրջաններուն թիւ տալով հայկ. այբուբէնի տառերով, եւ իւրաքանչիւր շրջանի մէջ մասնաճիւղերուն արաբական թուանշաններով՝ մէկէն սկսելով իւրաքանչիւր մասնաճիւղի մէջ:

3. Գոյութիւն ունեցող շրջաններէն Ռուսական տալով Գ. տառը, Յունաստանի Դ. տառը, Պալ Բանեանի Ե. տառը, Ամերիկայի Զ. տառը՝ Ա. եւ Բ. տառերը նախապէս պատկանած նկատելով Պոլսոյ և Իգմիթի:

Փոփոխութիւններ Մրազի—Ամենամագրին մեջ

1. Արգելել Պատգամ. ժողովին գումարումէն առաջ, տեւէ փոփոխութիւն ներմուծել Հ. մ. ր. մ. ի Մրազի կանոնադրին մէջ:

2. Փորձառութեամբ անհրաժեշտ նկատուած փոփոխութիւնները բանաձեւել յառաջիկայ Պատգամ. ժողովին ներկայացնելու համար:

3. Տեղական պայմաններու բերմամբ դործադրել անկարելի եղած տրամադրութիւնները զանց ընել Առժ. կեդրոնին հաւանութեամբ միայն:

Հայկ. ուրօրներու խնդիր

1. Ընդհ. հայկ. ողիմպիական մրցանիշի (սքրօս) համար հիմ ընդունիլ Հ. մ. ր. մ. ի կողմէ 1922ին Պոլսոյ մէջ սարքուած հայկ. ողիմպիականի մրցանիշերը:

2. Իբր հայկ. մրցանիշ ընդունիլ այն բոլոր մրցանիշերը որոնք չափուած են հայ մարզական կազմակերպութեանց կողմէ սարքուած մրցանիշներու միջոցին պաշտօնապէս ընդունուած հակակշիռ սահմաններուն մէջ, պայմանաւ որ դատաւորները նըշանակուած ըլլան Հ. մ. ր. մ. ի կեդր. Յանձնախումբէն եւ կամ նոյն երկրին մէջ գտնուող տեղական դաշնակցութեան հաւանութեամբ:

Անկողում առժամայ կեդրոնի

1. Ստեղծել առժամայ կեդրոնական յանձնախումբ մը՝ որուն պաշտօնը ըլլայ ընդհանուր կապ մը հանդիսանալ բոլոր շրջաններուն միջեւ, հոգ տալ

նիլ նոր չըջաններու կազմակերպութեան և մասնաձիւղերու բաղադրութեան, և գետինը պատրաստել ընդհանուր պառզմ. ժողովի մը համար:

2. Սոյն խորհրդածաղկի որոշումներով ճշտուած աշխատանքներէն դուրս սեւէ կարեւոր հարց վճռելու համար կեդր. Գանձնախումբը պարտաւոր է ստանալ առնուապէս երեք շրջանի հաւանութիւնը:

3. Առժամայ կեդրոնը կազմել Ռուսմանիայ և Պուլկարիոյ ճրջ. վարչութեանց երեք երեք անգամներէն՝ որոնք հաւաքական նիստ կ'ունենան կարեւոր խնդիրներու առթիւ, և երկու շրջաններէն ընտրուած մէկ մէկ գործաւարի կը թողուն ընթացիկ գործերու ղեկավարութիւնը:

4. Երկու գործաւարները աշխատանքները կը տանին՝ աշխատանքի բաժանում կատարելով կեդր. Գանձնախումբին իրաւասութեան յանձնուած պարտականութեանց մէջ, իրար տեղեակ պահելով կատարուած աշխատանքներէն:

5. Ստանալ այդ մասին Յունաստանի և Ամերիկայի շրջաններուն ալ համամութիւնը, և տեղեկութիւն հաղորդել շրջան չկազմող մասնաձիւղերուն:

6. Առժ. կեդր. Գանձնախումբը իրաւասու է իր տեւական և այլ ծախքերու բաշխումը կատարել շրջաններու վրայ:

Հայկ. ընդհ. ողիմպիականի խնդիր

1. Պարտք դնել առժամայ կեդրոնին վրայ հրահարուածութիւններ ստեղծել որպէսզի կանաչացն շրջաններու մէջ կազմակերպուող ողիմպիականներէն մէկը դառնայ հայկ. ընդհ. ողիմպիական, այդ առթիւ ապահովելով ուրիշ շրջաններու ալ լաւագոյն մարզիկներուն մասնակցութիւնը:

2. Մասնակցողներու ծախքը հոգացուի ուղարկող շրջանին կողմէ, իսկ բնակութեան գիւրութիւնները ստեղծէ կազմակերպող շրջանը:

3. Մասնակցողները ընտրուին տեղական ողիմպիականներու առին առաջնութիւնը չահողներուն մէջէն՝ նախապատուութիւն տալով անոնց, որոնք կրցած են այդ առթիւ կատարել հայկ. հանչցում ժըրյանիչներէն մէկը:

Հ. Մ. Բ. Մ.ի միջազգային ռիսկոսը

Հ. մ. ր. մ.ի իրրեւ ընդհանուր տիրուս բնդունել "Homemten" վերտառութիւնը երկու շրջաններու համար և թեւադրել յառաջիկայ Լնդհ. Պառզմ. ժողովին ընդհանրացնել այդ տիրուսը բովանդակ կազմակերպութեան համար:

Նախաձեռնութիւն Ընդհ. Պառզմ. ժողովի

1. Երբ կազմակերպուած շրջանները գտնէ հինգի հասնին, Առժ. կեդրոնը պարտաւոր ըլլայ հրահարելու հ. մ. ր. մ.ի ընդհ. պատմ. ժողով:

2. Առժ. կեդր. Գանձնախումբին թողուլ Պառզմ. ժողովին տեղը ճշտելու հոգը՝ թեւադրելով, որ նախապատուութիւն տրուի այնպիսի վայրի մը, ուր համարողելու և ապրելու պայմանները աճենէն ձեւառուն ըլլան:

Սեղծում ընդհանուր Գանձի

1. Ստեղծել հ. մ. ր. մ.ի ֆոնտ մը՝ առժամայ կեդրոնի հսկողութեան և վարչութեան տակ:

2. Ֆոնտը ի հարկին գործածել հայ լաւագոյն մարզիկներու հ. մ. ր. մ.ի անունով միջազգային ողիմպիականներու մասնակցութեան, ֆութպոլի լաւագոյն հայ խումբերուն միջազգային մրցումներուն, ինչպէս նաև Պառզմ. ժողովի գումարման վերաբերեալ ծախքերուն համար:

Պատրաստութիւն Ներքին Կանոնագրութեան

1. Հ. մ. ր. մ.ի ներքին կոնոնագրութեան համար հիմ ընդունել Ռուսմանիայ շրջանին համար պատրաստուածը՝ Պուլկարիոյ մասնաձիւղերու հաւանութիւնն ալ ստանալով:

2. Անխոփոխ կիրարկել արիներու և մարզական կազմակերպութեան վերաբերեալ տրամադրութեանները իսկ վարչական կազմակերպութեան մասը ի հարկին պատշաճեցնել տեղական պայմաններու:

3. Աշխատիլ որ ուրիշ շրջաններ ալ որդեգրեն նոյն կոնոնագրութիւնը՝ կարելի միօրինակութիւնը հաստատելով այսպէս հ. մ. ր. մ.ի ներքին կեանքին մէջ:

Ուրիշ Երջաններու կազմակերպութեան խնդիր

1. Աշխատիլ որ Ռուսմանիայէն, Պուլկարիայէն, Յունաստանէն և Ամերիկայէն յետոյ՝ հ. մ. ր. մ.ի շրջաններ կազմակերպուին նաև այն երկիրներուն մէջ՝ ուր հայ համախմբումներ և մանաւանդ վարժարաններ կան, մասնաւորաբար Եդիպոս, Պաղեստին, Պարսկաստան, Իտալիա և այլն:

Միջազգային ողիմպիականի մասնակցութեան խնդիր

1. Աշխատիլ այժմէն ազատով և հայ մարզիկներու մասնակցութիւնը յառաջիկայ միջազգային ողիմպիականին:

2. Կեդր. Գանձնախումբին պաշտօն տալ յանուն հ. մ. ր. մ.ի կատարելու այդ մասին նախնական անհրաժեշտ ձեւակերպութիւնները:



Խանգալառութեան օրէրէն

Հայ արիները Պոլսոյ մէջ՝ բանակումի մը ընթացին՝ լողանէ կէ:



ՀԱՅ ՄԱՐՄԵԿ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

„Հ. Մ. Ը. Մ.Ի ՕՐ“ ՊՈՒԼԿԱՐԻԱ

ፅዮሊኮጥኒክ ሆኒጋ

Հ. Մ. Լ. Մ.ի Պուլկարիոյ շրջանի Բ. Պատգամա-
ւորական ժողովի որոշման համաձայն, տասնըմէկ մաս-
նաճիւղերու կարգին, Յիւլիպէի մէջ եւս տնտեսացաւ
«Հ. Մ. Լ. Մ.ի օր»-ը՝ Դեկտ. 13ի կիրակին:

Առտուն, պատարագէն վերջ հոգեհանգիստ կատարուեցաւ, մեռած հայ մարդիկներու յիշատակին Զեռեզուած էր յուշարձան մը, որուն վրայ պսակ մը դրուած էր հ. մ. ք. մ.ի տեղւոյս վարչութեան կողմէ: Օրուայ առթիւ պատարագեց երուանդ եպիսկ. փերատահնեան, որ քարոզով մը յիշատակեց հայ իրակաշուքեան մէջ մարդակալտն շարժման օգուաները և անոր համամարդկային կրթիչ բնոյթը:

Յերեկէ յետոյ, հայ ակումբի մէջ տեղի ունեցաւ ազատ մուտքով ցերեկոյթ մը: Անօրինակ բաղմութիւն մը խնուած էր: Միութեան անդամները սլակարական քայլերդը ու ուրիշ երգեր երգեցին: Արուեստագէտ-ջութակահար մը պ. Կոմէի, իր սիրտ-յոծար մանակցութիւնը բերած էր՝ ընկերակցութեամբ զանակահարին ու թաւ ջութակահարին:

Ի մէջ ալկոյ նուազեցին նաեւ «կոռնիկ»ը, մե-
ներդեց Պօրիսովկրատի մ-դէն. պ. Գրիգոր Պաթմազ-
եան: Ենթակայացուեցաւ կենդանի պնտիկը մը, ուր
յաշտրդաբար ցոյց տրուեցան սրճաբանին ու ալքոլին
մէջ մոլորութիւն, եւ հ. մ. ք. մ. ի շտրքերուն մէջ մար-
մնացէս ու ոչնդէս կազդուրուող սերունդները:

Ամէնէն վերջ խոսեցաւ պր. Կարօ Ղազարսեան, որ մասնաւորէն յետոյ գաղութաշայտքեան քաղօքական, տնտեսային քննարարին ու կրթական կեանքեւրէ հաստատարակէս զուրկ ըլլալը, անդբարձաւ այն անխուսափելի վտանգներուն, որոնց սոխպում է հակառ տայ նորահաս սերունդը:

„Այս իսկ նկատումներով աւելցուց ան, մարմը-
նակրթմանքը պէտք է խրկել իր այսօրուան շլացուցիչ
ձևերէն, զայն դարձնելու համար նոր օրերու կրօն
մը, ու պանդրասեղու համար, նախ՝ մարդը, երկրորդ,
քաղաքացին, բայց մանաւանդ՝ ճշմարիտ Հայրը՝ Հ.
մ. Բ. մ. Բ. ու անոր ի գործ դրած աշխատանքները ո՛չ
թէ նպատակ մը, այլ միշտ մը պէտք է ըլլան, պատ-
րասեղու համար վտանգները դիմադրաւել դիպցող և
իր կոչումին դիտակցութիւնը ունեցող սերունդ մը։”

Լ'նդհանուր առժամբ, հանդէսը խիստ լաւ տպաւորութիւն զործնց ներկայ բազմութեան վրայ: Բեմը միջոց մը ելաւ պատկի տայնելու հասարակութեան աջին հ. մ. ք. մ. ի ձգտումները ու բռնի ընելու իրենցին սկզբունքները, ո՛րոնցմէ կ'առաջնորդուի գաղութահայութեան ծոցը իր գործունէութեանը ընթացքին:

ՍՕՖԻԱՅԻ ՄԷՋ

Պուլկ. Նըշանի Բ. Պապ. ժողովի որոշման համա-
ձայն պուլկաշիոյ տանըմէկ մ-ղերուն հրահանգուած
էր 13 Ինկու.ը տօնել իբրեւ հ. մ. ք. մ.ի օր: Բացի մէկ
երկու մ-ղերէ, որոնք ակամայօրէն յետաձգած էին,
ամէն տեղ նոյն օրը տօնուեցաւ համազգային հանդի-
սաւորութեամբ, որոնց մէկ մասին նկարագրութիւնը
հասած Բլլալով կուտանք ստորեւ:

Հակառակ աննպատու և ցուրտ օդին, պաշտամունքի օր մըն էր կարծես Դեկտ. 13ը Սօֆիաի հայութեան համար, որ առաւօտուն կանուխէն փութացած էր եկեղեցի պանծացնելու համար յիշատակը արեւնակից նահատակ մարզիկներուն՝ որոնք մեռած կամ ինկած էին պարտականութեան ճամբուն վրայ:

Հանդիսութեանց հրուիրութեամբ էին բոլոր կուսակցութիւնները եւ ազգային իշխանութիւնները:

Եկեղեցիին մէջտեղը շարճարացած մահարեմը չըր-
ջապատուած էր սկառւտներով. Աղղային վարժարանի
ուսանողներով և Մեսրոպեան ճեմարանի սաներով ու-
րուն վրայ գեղեցիկ ծաղիկապսկներ դրած էին մաս-
նաճիւղի վարչութիւնը սկառւտները և աղղային
վարժարանի աշակերտութիւնը: Եկեղեցական արա-
րողութիւններէ վերջ հոգեհանգիստ կատարուեցաւ
նահատակ և մեռած մարդիկներու հողւայն:

Վարչութեան կողմէ պ. Ս. Գարաբեան ամիսի
կերպով բացատրելով օրուան նշանակութեանը եւ
նուիրականութիւնը ըստ, որ այսօր իրաւ է թէ հա-
ւաքուած ենք մահաբնի իջ շուրջ սակայն սուգի օ-
րը չէ այս, այլ անմոռաց յիշատակի եւ պանծաշունչի
օրը այն րոյր վեհանձն եւ անձնուէր պատանիներու
եւ մարդիկներու, որոնք գալիք երիտասարդութեան
սպարաւայ ուղղութիւնը գծեցին, ուղղութիւն մը որ
կոչուած է տանիլ մեր սեբունդը դէպի իտեալ եւ ան-
բիծ բարձրութիւններ: Հրաւիրուեցան խօսիլ ձիմա-
րանին կողմէ պ. Գոստուկեան, Հ. Յ. Դաշնակցութեան
կողմէ պ. ինչիկ Կարապետեան եւ Ս. Դ. Հնչակեան կու-
սակցութեան կողմէ պ. Յ. Իսախան:

Բոլորն ալ զատ զատ վեր ապին օրուան նշանա-
կութիւնը եւ շնորհաւորեցին հ. մ. ք. մ. ք. որ իր գոր-
ծունէութեամբ եւ բնագործած ուղղութեամբ ստեղծած
է միջալսյր մը, ուր կ'արեւի է պատահիլ ամէն դա-
սակարգի եւ ըմբռումի մարդոց եւ թշուարեցին որ
իւրաքանչիւր ալգային իր կ'արեւիէն աւելի չափով ոյժ
տայ սոյն միութեան որը կոչուած է Ըլլալ ազգային
այն միա՛յ կազմակերպութիւնը, ուր պատանին իր
փոքր տարիքէն կը պատրաստուի Ըլլալ ապագայ գի-
տակից եւ մարտի հայ քաղաքային՝ օժտուած բարձր
գաղափարներով եւ առողջ մարմնով:

Բանախոսութիւններէն վերջ պ. Գաթալեան վա-
կեց հանդէսը, չնորհալալութիւն յայտնելով բոլոր ա-
նանց որոնք իրենց հեղիայութեամբ պատուած էին
Տ. Բ. Բ. Ժ. Օրբ:

Փախաբերի էր, որ Սօֆիան ալ այդ օրը ամբողջութեամբ յատկացնէր օրուան հանդիսութիւններուն, սակայն նկատի ունենալով տեղի չգոյութիւնը եւ մօտալուտ երկելոյթը, վարչութիւնը յարմար դատած էր եկեղեցիին մէջ տաւրոսէլ ամէն ինչ։

ՌՈՒՍՃՈՒՔԻ ՄԷՋ

Հ. Մ. Ը. Մ. ի օրը տանուեցաւ մեծ հանդիսութեամբ տեղւոյ մասնաճիւղին կողմէ: Նախընթաց իրիկուն Աղբ. վարժաշանի սրահը տեղի ունեցաւ երեկոյթ, գրական-գեղարուեստական յայտագրով: Պոսեցան պ. պ. Միքայէլ Անտոնեան նիւթ ունենալով «Հ. Մ. Ը. Մ. Ը. և անոր դերը մեր իրականութեան մէջ» և Մուշեղ Հայրապետեան—Արի-խմբապետ— «Սկսուած իմը, ծագումը ու նպատակը»: Տեղի ունեցան Աւտասանութիւններ, նուազ և երգ: Արտասանեցին, կըրկայտեր Շաքէ Յակոբեան և Ազաւնի Վարդանեան, պ. պ. Օննիկ Բէշեան, Եղուարդ Մուկիսեան և արի Գրիգոր Սեմերճեան: Հայկական «Արաքս» նուագախումբը «Մեր Հայրենիք» Ը և «Արաքս» քայլերգը նուագեց, ապա արիներու և կըրկ-սկսուածներու երգչախումբը «Յառաջ Նահատակ» Ը երգեց: Երեկոյթը վերջ գտաւ ուշ գիշերին:

Կիրակի առաւօտ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ և հոգեհանգստեան պաշտօն: Մեր մասնաւոր հրաւերին վրայ, սիրայօժար պատարագի ու քարոզիչ ստանձնեց Կերապատիւ Տ. Տ. Ստեփաննոս Արք. Յովակիմեան: Խուռն բազմութիւն մը ներկայ էր եկեղեցին: Ընթաց տաղ-խորանին ղեկաց կանգնած էր Մահաբեմը «Յարգանք մեզնոյ և նահատակ մեր մարդիկներուն և արիներուն» վերտառութեամբ չքեղ սգապատիւ մը դարգարուեւ:

Բոլոր արիները ու աղջիկ-սկսուածները սեւ ժապաւեններ կը կրէին իրենց ձախ կողմին և լուռ ու մտածփոփ կերպով—մահաբեմին չորս բոլորը—կը հետեւէին արարողութիւններուն: Մ-ղի դրօշակը սեւ ժապաւենով ու ծալուած դրօշած էր դպրաց դասուն ճիշդ ետեւը:

ԹՂԹԱԿԻՑ

ՀԱՍՔՕՎՈՅԻ ՄԷՋ

«Մարդիկ» ի երեւումը, Պուլկարահայ կեանքի ֆիզիքական և բարոյական մարդին մէջ դաստիարակիչ նկատելի բնոյթ մը ունի:

Այս պարագան առիթ կուտայ ինձ, որ իմ կարգին կարելի եղած չափով պատկերացնեմ Հ. Մ. Ը. Մ. ի Հասքովոյի շարժումները իրենց գնահատելի և քննդատելի կողմերով:

Պուլկարիոյ գնահատան քաղաքներու կարգին, բարերախոս ենք ըսելու թէ՛ ռուս ալ ունինք Հ. Մ. Ը. Մ. ի 11 րդ. մասնաճիւղը 33 անդամներով, որոնց մէջ 11 արիներ, իսկ մնացեալը աթլէթի հետեւողներ են:

Անոնք տեղւոյս հայութեան համեմատութեամբ թէ և թուով չեն ուրախացներ ընթերցողը. սակայն իրենց եռանդոտ և հետաքրքիր շարժումները, խոստմնայից են յաջորդ շրջանի համար ունենալիք յաջողութիւններով: Անոնք պիտի ըլլան նաեւ իրենց տարեկիցներուն համար նախանձելի տիպարներ Հ. Մ. Ը. Մ. ի

Մ. ի որդեգրած ուղղութեամբ, այդպէսով ստիպելով զանոնք որ մասնաւոր իրենց շարքերուն:

Բայց մինչեւ այդ շրջանը բաղձալի էր որ ծնողներ մի քիչ սթաիէին, ուսումնասիրէին Հ. Մ. Ը. Մ. ի առաջադրած սկզբունքին օգտակարութիւնը և ճանշնային իրենց զաւակներու հանդէպ իրենց իսկ պարտականութիւնները:

Այս իսկ նկատումներով է որ տեղւոյս մասնաճիւղի վարչութիւնը կարծեմ մտադիր է հրապարակային դասախօսութիւններու շարք մը բանալու:

Գնահատելի են 11 արիներու ցոյց տուած եռանդը: Անոնք, հակառակ իրենց նուազ քանակին մշտականօրէն անսահման եռանդի տէր են: Կուզեն միշտ նորութիւններու տիրանալ, բայց դժբաղդաբար կարգ մը անթոյլատրելի պայմաններ զրկանք կը պատճառեն: Գլխաւոր շրջաններէ արի մարդիկներ առեն տան քաղաքս ժամանումը չափազանց կ'ոգեւորէ զանոնք: Ամիջապէս կը բոլորուին անոր շուրջ, հետաքրքիրօրէն շարք կը կազմեն, իրենց ցոյց տուած մարզանքներու մէջ անբացատրելի մնացած հարցերու մասին լաւ տեղեկութիւն քաղելու: Որով, իրենց այդ հետաքրքիր և կոշտմին գիտակցօրէն հնազանդ երեւոյթը խոստմնայի յաջողութիւններ կը կանխատեսէ:

Այս առիթն խիստ կարեւոր է կեդրոնէն ուղարկելիք մարդիկ մը յաճախելի այցելութիւնը:

Մի քիչ քննադատելի է աթլէթներու ընթացքը, սակայն ճասնակը բնակ սնարար, զանոնք ալ պիտի բարեփոխէ:

Անոնք թէ և թուով կը գերազանցեն աբիները, սակայն առիկայ այնքան ուրախառիթ չէ մեզ համար քանի որ կարգապահութեան և պարտաճանաչութեան պակասը զգալի կը դառնայ օրըստօրէ, իրենց շարքերու մէջ մասին մէջ, ինչ որ սկզբունքային հարց պէտք է ըլլայ իրենց համար:

Որովհետեւ որքան շարունակեն մնալ այդ ձևին տակ, կը թուալցնեն իրենց առողջ կամքը և անոր հետեւանօք կ'ենթարկուին զրկանքներու: Թէ և իրենց աթլէթիկ խաղերու մէջ մեծաւ մասամբ գրեթէ յաջողութիւններ ունին, սակայն չեն կարողացած կանոնաւորապէս պահել ֆութպոլի խումբ մը:

Վերջերս միայն, Ֆիլիպպի Մ-ղի ֆութպոլի խումբին քաղաքիս Պուլկար «Ս. Բ.» 24 խումբին հետ մրցումի համար ժամանումը, խթան մը եղաւ իրենց: Այնպէս որ մեր աթլէթները լաւ հասկցան թէ՛ խումբ մը կարելի կ'ըլլայ կանոնաւորապէս պահել իրարահակացողութիւնով թէ՛ գնտակը կարելի կ'ըլլայ բերդը հասցնել իրարու «բաս» տալով, թէ՛ «բաս» կը տրուի առանց իրարու պոռալու:

Այս բոլորէն յետոյ հիմա մեր աթլէթները նոր եռանդով և նոր հետաքրքրութիւնով փառած են իրենց գործին: Յուսով ենք թէ այդպէս պիտի շարունակեն մնալ յարատեւօրէն և յաջորդ շրջանին գործնական փաստերով պիտի հակասեն իմ բոլոր գիտողութիւններուս:

Գ. ԳԱՐԱՅԱՆԵԱՆ

Թ. ՓԱՋԱՐՃՆԲԻ ՄԷՋ

Ամսոյս 13 ին, Թ. Փաղարճըքի մէջ ալ „Հ. Մ. Ը. Մ. ի Յր“ը տանուեցաւ կէսօրէ յետոյ ժամը 3 ին, սարքուելով հանդէս մը։ Ազգ վարժարանի սրահին մէջ տեղւոյս 7 ըզ Մ-զին կողմէ։

Ուրախ ենք, որ մեր անդրանիկ հանդէսին անհախճաւ ըստմութեամբ մը սրահը լեցուած էր։

Խօսեցաւ վարչութեան Ատենադպիր պ. Յարութիւն Ուրբաթեան՝ նիւթ ունենալով Հ. Մ. Ը. Մ. ի, նըպատակը և Ոգին։ Յետոյ, երգուեցաւ „Բարձրացիր հայ Արիութիւն“ը, տեղի ունեցան արտասանութիւններ, Շուէտական մարզանքներ և բուրգեր։

Թ.Պ.Ա.ԿիՅ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԱԹԷՆՔ

(Մեր սեխական թղթակցէն)

7 Դեկտեմբեր 925

Հոկտ. 1 ին Պոլսոյ նախկին խմբավորներէն, պ. Օննիկ Եազմանեան ներկայ եղաւ Ա. մ-դի հաւաքումին և դատախօսեց պ. Եազմանեան լայնօրէն բացատրեց սկստւորի մի ու դպրոցի տարբերութիւնները։

Յիշեալը Փարիզէն պաշտօնով կիպրոս կը մեկնի՝ արիներու շարքեր կազմակերպելու համար։

Նոյ. 1 կիրակի ց. և. ժամը 3 ու կէսին բացուեցաւ երրորդ Բանաստեղծի արիներու երգման հանդէսը նախադասութեամբ, Հ. Մ. Ը. Մ. ի Գանձապահ Պատ. Ա. ճէմանի։ Ժամանակէն առաջ ժողովուրդը փութացած էր մասնաւոր տեղեր գրաւելու, իսկ մէկ մասը գոհունակութեամբ ոտքի վրայ կը մնար։

Պատ. Յ. Աճեման իր խօսքերը ուղղելով ներկաներուն, բացատրեց հ. մ. ը. մ. ի նպատակը և արիներուն կատարելիք ուխտը։

Արիները 12 կամարներէն անցնելով իրենց Դաւանանքները ըսին և նուիրական երգումը կատարեցին արժանանալով „Բարձրացիր Բարձրացուր“ ի նըշանակին։ Տեղի ունեցան զանազան խաղեր ծախահաւթութիւններ խելով։

Չի մոռնաք յիշելու պ. Յ. Առաքելեանի աշխատանքները, որոնք գնահատութեան արժանի են։

925 Նոյ. կիրակի ժամը 3 ին տեղի ունեցաւ հ. մ. ը. մ. ի Գ. մ-դի (Սինկուրու) արիներու երգման տարողութիւնը, բարերարութիւն մըն էր այս զաղթականին համար, որը առաջին անգամ է որ առիթը ունեցաւ այս տեսակ նուիրական հանդէս մը ունենալ, ներկայ էին տեղւոյս վարչութեան անդամներ ու կեդր. վարչութեան ներկայացուցիչներ։

Խումբի վարիչ պ. Գալեանի թախած ջանքերով հանդէսը շատ յաջող անցաւ և ժողովուրդին գնահատութեան արժանացաւ։ Հանդէսը վերջացաւ ժամը 5 ին հ. մ. ը. մ. ին ողին սերմանելով հանդիսականներուն մէջ։



Հ. Մ. Ը. Մ. ի Գ. մ-դի (Սինկուրու) արիներու երգման տարողութիւնը

Ռուսնուքի մէջ

Հ. Մ. Ը. Մ. ի Ռուսնուքի և Պուլկարիոյ շրջաններու խորհրդաժողովի առիւ

Պատգամաւորներն ու Ռուսնուքի մ-դի վարչական անդամները՝

արիներու և կրթ-կայներու մասնակցութեամբ

Պատգամաւորներ.— 1. Յ. Ճ. Սիւրնի, 2. Թ. Թազուրեան, 3. Կարո Ղազարեան, 4. Ս. Պապիկեան, 5. Օ. Սիւնեան, 6. Յ. Բոսիկեան, 7. Մ. Նուկեան։

Յունաստանի հ. մ. ը. մ. ի Ա. մ-զի արիւնքը նոր քննութիւնները յաջողապէս անցուցած ըլլալուն, նոյ. 15 կիրակի իրենց երդումը կառարեցին ներմայութեամբ հ. մ. ը. մ. ի կեդր. վարչութեան անդամներուն և խումբն բաղմութեան մը, արժանանալով արիի նշանաբան «Բարձրացիր Բարձրացուր» ի նշանակին։ Ներկայ էին նաեւ շրջանի բոլոր արիւնքութեան խումբերը։ Հանուն կեդր. վարչութեան խօսեցաւ Ա. տեղապետ պ. Պետրոսեան վերահանելով հ. մ. հ. մ. ի յաջողութիւնները գաղութահայութեան մէջ։

Տեղի ունեցան բուրգեր, դրօշաշարժում, հուման քաշել, արգելարչաւ և ուրիշ խաղեր։

Հանգէսը վերջացաւ ժամը 6 ին, լաւ տղաւորութիւն ձգելով ներկաներուն, մասնաւորաբար ծնողներուն վրայ։

Յետոյ տեղի ունեցաւ ընդհանուր տողանց, որուն կը մասնակցէին հ. մ. ը. մ. ի բոլոր մ-զերը։ Արիւնքութիւնը մօտ 200 ի կը հասնէր։

ԹՈՒՉՈՒՂ ՄԵՂՈՒՆ

ՊԵԼՃԻՔԱ

ՊՐԻԻՔԵԼԻ ՄԷՋ

Հոս եւս հաճոյքով ընդունեցինք «Մարդիկ»ը։

Թէեւ ասկէ առաջ հ. մ. ը. մ. մը կազմելու փորձ մը կատարած էր, բայց կանգ առած էր, որով վերջերս մեծ թափ մը տրուելով վերջնականապէս խումբը վերանորոգուեցաւ։ Հիմա կանոնաւոր վարչութիւն ու ֆութպօլի լաւ խումբ մը ունինք, որ սկսած է մեծ յաջողութիւններ ձեռք ձգել Պրիւքսէլի մէջ։ Մեր խումբը մինչեւ հիմա կատարած է 4 մրցումներ, տեղական Ալիանս խումբին հետ ու յաղթած 4 ի դէմ 7 կոլով։ Տեղական Իւնիօն Պրիւքսէլուաին հետ ու յաղթած 0 ի դէմ 4 ուլ։ Տեղական վուայաթոն Գուրպօլ Բիւլպի երկրորդ խումբին հետ ու յաղթած 1 ի դէմ 5 կոլով։ Իսկ անցեալ կիրակի կատարեց կարեւոր մրցում մը նոյն խումբին Ա.ին թիմին հետ։ Հակառակ օգին ցրտութեան երկու կողմէն ալ բաւականին հետաքրքիր հասարակութիւն մը կար։ Պաղը սկսաւ թշնամիին կոկիկ ու կանոնաւոր բասերու յարձակողականով ու հազիւ 5 վայրկեան անցած կարողացան մեր դաւն ցանցը շարժել, ծափեր խելով Պելճիքացիներէն։ Մինչեւ Ա. կիսախաղին վերջերը տիրապետողը ու մեշտ յարձակում գործողները անոնք էին, բայց մեր տղոց ճարպիկութեան ու տոկունութեան շնորհիւ կիսախաղը չաւարտած կարողացանք անոնց դուռը նշանակէտով մը բանալ։ Բ. կիսախաղին թէեւ երկու կողմէն ալ շատ յարձակումներ գործուեցան, բայց անօգուտ, որով խաղը վերջացաւ 1 ի դէմ 1։

Սա ալ բեւեմ որ մենք 2 ամսուան խումբ մըն ենք իսկ անոնք 4—5 տարուան առաջնակարգ թիմ մը։ Յաջորդով կը ջանամ ղրկել մեր խումբին նկարը։

Մ. ՕՏԱՊԱՇԵԱՆ



1922ի Յունաստանի Հայ արիւնքու Ա. եւ Բ. խումբերը.

մեջտեղը կեցողը Պ. Արամ Կայծակը, տեղ. Կեդր. վարչութեան նախագահ

Աջ ու ձախ երկու կազմակերպիչները, Պ. Գայեան եւ Ն. Մ. Մանուկեան

ՖՐԱՆՍԱ

ՄԱՐՏԵՅԼ

Հոկտ. 1ին փակուեցաւ Արլէիիկ եղանակը, և սկսաւ ֆութպօլի չրջանը: Հ. Մ. Լ. Մ. ի Ա. խումբը կը մասնակցի Ֆ. Ֆ. Ֆ. Ա. ի Միւս Էսթ-ի ախոյեանութեան խաղերուն: Մինչեւ ցարդ ունեցած է չորս պաշտօնական մրցումներ, և պիտի ունենայ քսան և մէկ հաւ եւս: Ֆէտէրասիօնի և ֆրանսական մարզական չրջանակի կարծիքը մեզ համար շատ նպատաւոր է: Բոլորը կը յուսան որ Իւ. Ժ. Արմէնիէնները պիտի խլեն բաժակը. 4 Մեռի ի:

Մենք վատահ ենք մեր խումբին կարողութեանը վրայ, և մինչեւ ցարդ ունեցած խաղերը մեզի կապահովեն ֆրանսացիներու կարծիքը:

Հ. Մ. Լ. Մ. ի Մարտէյի Մասնաճիւղը ունի Ա. Բ. Գ. Դ. ֆութպօլի չորս խումբեր. մէկ հաւ ալ փութբոլ, որոնք արիւնք են. ունեցած են, մինչեւ Նոյ. 15, 36 մրցումներ: Շահած են. 87 նշանակէտ և կորսնցուցած են 23 նշանակէտ:

Ա. խումբի կազմը.

ՊՊ. Տիգրան Փափաղեան բերդապահ, Ա. Բիպրիթեան, Յակոբ, Ժ. Տէրաթեան, Անդրանիկ, Յակոբ, Գասպարեան, Հրանդ, Սեդրակ, Շէհրիկեան, Վահան:

Գլխաւոր մրցումներ.—

Հ. Մ. Լ. Մ. ա) — Գօնէզ Ա. 1—0

Հ. Մ. Լ. Մ. ա) — Ս. Ա. Ֆոքէն 3—0

Հ. Մ. Լ. Մ. ա) — Էնիսիւմ 1—4, առաջին խումբէն 4 խաղացող և 7 հաւ երկրորդ խումբէն. որովհետեւ լիտանները չեն հասած դեռ:

Հ. Մ. Լ. Մ. ա) Մօնթօլի 4—0

Նոյեմ. 1ին հ. մ. Բ. մ. ի վարչութիւնը կազմակերպեց ֆութպօլի մեծ հանդէս մը. բայց անձրևառ և գէշ օդ մը ըլլալուն բաղմութիւն չկար բայց մըրցումը տեղի ունեցաւ:

Հ. Մ. Լ. Մ. ա) Ս. Լուի, Ս. Անրուան միացեալ:

Հ. Մ. Լ. Մ. յաղթական 4ով—2:

Հ. Մ. Լ. Մ. ա) Մարտէյէն 16 քմ. հետ. Ֆօնթվիոյ քաղաքի Ա. խումբին հետ. հ. մ. Բ. մ. յաղթական 7—0:

Հ. Մ. Լ. Մ. ա) Իւ. Ա. Բօլիս Մարսի 4—3 հ. մ. Բ. մ. յաղթական:

Բ. խումբը.

Հ. մ. Բ. մ. Բ) Ֆ. Ս. Սեանիօլ Բ. 3—1

„ „ „ Իւ. Ս. Է. Բ. 1—0

„ „ „ Էլէքթրօ Սթօր Բ. 3—2

„ „ „ Ս. Օ. Մ. 0—1 ով պարտուած

„ „ „ Ս. Ա. Մ. 0—0

„ „ „ Սեանա Էլիւպ Բ. 3—0:

Հ. մ. Բ. մ. ի Մարտէյի մասնաճիւղը ունի իր սեփական մարզադաշտը քաղաքին կեդրոնը, զոր վարձեց 5000 ֆր.: Կազմուեցաւ նոր Պատույ Վարչութիւն և գէշ օդ մը ըլլալուն բաղմութիւն չկար բայց մըրցումը տեղի ունեցաւ:

4—12—925

Մարտէյ

Թ. Թ. Ա. Կ. Ի. Ե.

ՃԱՎԱ

Սուրապայայի (ձալա) հայ մարզ. ակումբը

1922 թ. Յուլիս 23 ին, 24 նախաձեռնողներու մասնակցութեամբ տեղի կ'ունենայ Հայ Մարզ. Ակումբի հիմնադիր առաջին ժողովը, նախագահութեամբ Պ. Սարգիս Յ. Էսգարեանի: Բոլոր սիրով կը փարին գործին եւ այս գեղեցիկ մտքին իրականացման և անվերջապէս խօսքին կը յաջորդէ գործը, կ'ընտրուի վարչական կազմը՝ նախագահութեամբ պ. Ոսկան Ոսկանեանի, եւ կը մեակեն կանոնագիրը: Կարն ժամանակէն անգամներու թիւը կը բարձրանայ 73 ի եւ մեծ համբաւ կը հանեն իրենց խաղերով եւ սիրալի գործունէութեամբ, այնպէս որ Բաղապետէն սկսած մինչեւ բոլոր օտար նշանաւոր անձեր կը յայտնեն իրենց համակրանքը հայերու այս ձեռնարկին եւ անոր յաջողութեանը համար: Տեղական բոլոր բերքերը եւս զովեսով կ'արհայայտուին այս առթիւ 1924 ին հրահարակեցին առանձին գրքովով (28 էջոց): Իրենց միամեայ գործունէութեան պատկեր՝ վարչական եւ մարզական խմբակարներով, Armenian Sporting Club, Թ. 1 Chronicle. որով տուած են բոլոր մանրամասնութիւնները իրենց հիմնադրութենէն սկսեալ եւ ունեցած խաղերուն եւ յաղթանակներուն ամփոփումը: Եւանգը մեծ է երկու սեռին մէջ եւս, որուն համար եւ միշտ կը յաջողին: Ներկայիս կ'աշխատեն ունենալ իրենց սեփական մարզադաշտը, ուր պիտի ծածանի իրենց կապոյտ դրօշը վերահսկութեամբ A. S. C.




(Հ. Մ. Ա.): Դեմիր, որը որոշած են զենլ Սուրապայայի ամենամեծաւոր քաղն է եւ գրեթէ գնուած կը հաշուի 67.000 ֆառակուսի մէր է, որին արձեւն է 87.000 զիլդըր: Հայ ժողովուրդը, ինչպէս որ ամեն տեղ, ձալայի մէջ եւս ունի իրեն հին ու նոր գեղեցիկ հետերը: Հ. Մ. Ա. ի վարչական կազմն է,

Պ. Պ. Միլիթի Տէր Պ. Յակոբեան՝ նախագահ, Գառնիկ Յ. Յորդանեան՝ վ. նախագահ, Գրիգոր խ. Առաքելեան՝ գանձապահ, Հ. Կ. Գալիքեան՝ ֆարսուղար, Արա Յ. Սարգսեան՝ խմբապետ, Յ. Բ. Գալուսեան եւ Միլիթի Ալլա վիտեան՝ գործադիր վարիչ:

ՅՈՎԱԿԻՄ ՔԶՆՅ. ԲՅՐԱՆԵՆ

Ե. խ.— Անխառն հանոյով կը հրահարակենք վե-



Կանկր. Վ. ձողկեան — 1921

Գուլեկի Կեդր. Որբանոցին մէջ

Անգլ. Գինկ ձորն մարտանաւի հրամանատար Քեփրն Թեպրնի այցելութիւնը որք արինեալն, 19 մայիս 1921ին Որբեր բուրգ կազմելու առն

1. Քեփրն Թեպրն, 2. Ժիրայր Խորասանեան, 3. Գր. ձողկեան

րեւի բղբակցութիւնը: „Հ. Մ. Բ. Մ.“ ր իր կարելին պիտի ընէ զօրաւոր կապ մը դառնալու համար հայ բոլոր մարդ. միութիւններու միջեւ: Հ. Մ. Բ. Մ. ի կեդր. Յանձնախումբին կը մնայ անմիջական յարաբերութիւն ստեղծել Սուրապայայի նման հետաւոր վայրերու կազմեալն հետ, որոնք, տարալոյս չունին, պիտի նախընտրեն Հայ Մարմն. Ընդհ. Միութեան մէկ նախանձելի մասը դառնալ, փոխանակ հետու եւ անհաղորդ ապրելու:

ԶԱՆԱԶԱՆՔ

Այս տարի Խաչիկոյ ֆուլթալի ախոյեանութիւնը չափեցաւ „Ֆ. Ք. Պօլսոնի“ Բոլոր խաղացողները իրր վարձատրութիւն ստացան մէկ մէկ ինքնաշարժ հեծանիւ, իսկ մարդիչը, նախկին աւստրիացի ծանօթ խաղացող մը, ինքնաշարժ կառք մը: Ընդունեցէք սր „գէշ չէ“, Բայց „Ֆ. Ք. Ժիւլէնթիւս“ ի նախադէպ, որ միեւնոյն ատեն հոչակաւ որ „Ֆիլաթ“ ինքնաշարժի դարձարաններուն սեփականատէրն է—ըսինք թէ խումբը Թօրինօի մէջ կը գտնուի—խոստացած է մէյմէկ ինքնաշարժ կառք նուէր տալ բոլոր խաղացողներուն, այն պարագային երբ խումբը Խաչիկոյ ախոյեանութիւնը չափէ:

Տրամադրի ր էք, հայ ֆուլթալիստներ:

—Այս եղանակին սկիզբը անդլիական Բրոքսիօնէլ ծանօթ խումբերէն „Արտէնալ“ գնեց Պիւքան անուան հոչակաւոր սեղոր—Ֆօր „Արնաէրլանտ“ խումբէն, վճարելով 6000 անդլիական ոսկի, եւ միեւնոյն ատեն յանձն առնելով 100 անդլ. վճարել նոյն այդ խումբին՝ ամէն անգամ որ Պիւքան նշանակէտ մը ընէ...

Յարդ „Արտէնալ“ այդ պատճառաւ փոքր դուժար մը իսկ վճարած ըլլալու չէ, քանի որ ախոյեանութեան մրցմանց դատաւորութիւն մէջ առաջին է:

—Անշուշտ իմացաք հոչակաւոր սեփականութիւն կառք մաշտիկ Պաթլինի Սիքիի (բուն անուանով Լուի Ֆալ) սպանութիւնը Նիւ-Եօրքի մէջ: Այն որ Գարբանթիէյի յաղթականներէն մին ըլլալու պատիւը ունէր, շատ անհանդարտ ապրիլակերպ մը ունէր: Հաղաբաւոր պատմութիւններ կան իր մասին, որոնց մէջ ի յայտ կուգայ եղական Սենեկալցիին դրամին հանդէպ ունեցած արգահատանքը: Ահա այդ պատմութիւններէն մին.—օր մը Նիւ-Եօրքի մէջ կը հանդիպի բանտարկեալներու կարաւանի մը, կը մօտենայ եւ մխիթարութեան մէկ քանի խօսքերով կը բամբէ այն 2000 աշխարհ որ մրցումէ մը շահած էր, մոռնալով, սակայն մէկ քանի պէնթ վար դէկ իրեն, վճարելու համար իր պանդակին վարձքը...

—Քաղաքական Լօքարնօյէն վերջ, մարզական հաշտութիւն:

Դեկտեմբեր 15ին Լօզանի մէջ Ֆրանսական և Գերմանական արկիթիվմի ֆէտէրատիօններուն ներկայացուցիչները գումարուելով որոշեցին վերսկսել երկու երկիրներու մարզական յարաբերութիւնները:

Առ այդ առաջին հանդիպում մը տեղի պիտի ունենայ Զուիցերլոյ մէջ 1926ի ամբարն:

Ք.

ՍԵՐ ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒՅԵԱՆ

Պուլկ. Շրջ. վարչութեան Նոյ. 17 925 թուագրքեալ և 22 թիւ չրջարականին համաձայն կը խնդրենք որ դրօշմաթուղթեր հաւաքելու դործը լուրջ ուշադրութեան առնէք:

Զեռնարկին նպատակն է ոչ միայն դրօշմաթուղթերու հաղուագիւտ տեսակներ հաւաքել, այլ մասնաւորապէս ապահովել մեծ քանակ մը ամէն տեսակէ ու արմէքէ դրօշմաթուղթերու, որոնք պիտի վաճառուին Յանձնախումբին կողմէ ի նպատակ սկստական դործին:

Հաւաքման դործը կարելի է կազմակերպել հետեւեալ ձևով:

1— Նշանակել մէկ կամ մէկ քանի արիւնք, որոնք պիտի հետապնդեն սոյն դործը և հաւաքուած դրօշմաթուղթերը ուղարկել պ. Աշոտ Պատմաճեանի հասցէին՝ գուրչուն խան թիւ 80 Ֆիլիպէ:

2— Ամէն խմբակի առաջնորդի հրահանգել որ իրենց արիւնքներուն յանձնարարեն հաւաքել և յանձնել պատասխանատու անձերու:

3— Խնդրել ծանօթ վաճառականներէ ու մարմիններէ որ իրենց հասած դրօշմաթուղթերը պահեն և նշանակել արի մը որ ամիսը անգամ երթայ և հաւաքէ:

Այս մասին ձեր բրած կարգադրութիւնները կը խնդրենք վերոյիշեալ հասցէին հաղորդել ու իմացնել մեզի ձեր նշանակած պատասխանատու անձին անունը ու հասցէն՝ ուղակի թղթակցելու համար իրեն հետ:

Ի դիմաց դրօշմաթուղթերու Յանձնախումբին
Ն. ԴԱԻԹԵԱՆ

ՈՌԻՍՃՈՒՔ

ՔՆՆՈՒԹԻՒՆ.— Անձեալ ամսոյ 29 ին տեղի ունեցաւ երրորդ կարգի քննութիւնը առաջնորդուհիներ օր. օր. Զապել Խանճեանի և Արաքսի Կարապետեանի և պ. պ. Տիրան Փափաղեանի և Գէորգ Մինասեանի արիւնքներու ու կըրլ-կայտերու ստուար թիւ մը ներկայ էր հաւաքավայրը և կը հետեւէր խմբապետի հարցումներուն: Քննութիւնը անցաւ յաջող և յիշուողները ստացան իրենց աստիճանները:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հ. Մ. Լ. Մ. ի Ռուսճուքի Գրգ. մ-դի վարչութիւնն պարտք կըզգայ իր հրապարակային շնորհա-

կալութիւնները յայտնել Տ. Տ. Ստեփաննոս Արք. Յովակիմեանի, Պատուարժան Թաղական Եռանդամ Յանձնախումբի, Ազգ. վարժարաններու պատուարժան Հոգաբարձութեան, Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան Ռուսճուքի մարմինն և բոլոր կուսակցութեանց, միութեանց, խումբերու, հայ հասարակութեան և անհատներու, որոնք ամէն կերպով սատար հանդիսացան մեզի և իրենց թանկագին օժանդակութիւնը ընձեռելով մեզ և կամ նիւթական ու բարոյական աջակցութեամբ ուղղակի կամ անուղղակի կերպով աւելցուցին փայլը մեր տօնին՝ „Հ. Մ. Լ. Մ. ի օրուան“ և կաթ իրենց ներկայութեամբ քաջալերեցին մեր արիւնքներու սոյն տօնը:

Դեկտ. 16 925

Ռուսճուք

Հ. Մ. Լ. Մ. ի

Ռուսճուքի Մ-դի Վարչութիւն

ՄՏՔԻ ԽԱՂԵՐ

(Արիւնքներ և մարզիկներուն համար)

—Գ—

Զիարեալի մը սկզբնաւորութեան, երբ ամէն ոք կը պատրաստուէր, որպէսզի տուելիք հրամանին հետ համբայ իյնայ և առաջ անցնելով տուած գումարը շահի, զի կին մը կը ներկայանայ և կը յայտարարէ թէ ինք կը տրամադրէ շահուելիք գումարն շահ աւելի մեծ գումար մը այն ձիին որ ամէնէն ետեւ պիտի մնայ: Այս յայտարարութեան վրայ լսելու հրամանը կը տուի, բայց ոչ ոք համբայ չ'իյնէր, սպասելով որ միւս մրցողները լսեն և ինք ետեւ մնայ ու հրամանը կը կրկնուի, բայց նորէն բոլորը անշարժ են: Տեսնելով, որ ձիարեաւորները նախալ իլլալիք չ'ունին, ձերուկ մը կը մօտեցայ ձիարեալներուն, քիչադուրիւն մը կ'ընէ բոլորին, և արդէն ամէնք մէկ ձիերը հեծած կ'սկսին տարաւ ընթանալ՝ աշխատելով միտ առաջ անցնիլ, և զիսնալով հանդերձ որ ետեւ մնացող ձին պիտի ստանար կնոջ խոստացած մեծ գումարը:

Ծերուկը առաջ անցնողին համար եւս իր կողմէ գումար չէր խոստացած, բայց ինչ քառ էր ձիարեալներուն, որ բոլորը մէկ աշխատած էին առաջ անցնիլ դրամը ձգելով ետեւ մնացող ձիին:

Պատասխանել խմբագրութեան:

ԼՈՒԾՈՒՄ

ՄՏՔԻ խաղերու Ա. ր լուծած է Պուրկազի մ-դէն պ. Գեորգ Դանիլիեան, որ շահ լաւ բացատրած է: (Ֆիլիպի մ-դէն պ. Տ. Պատրիկյանեան ևս լուծած էր, բայց անյաջող օրինակով մը):

Պ. Տ. Դանիլիեան կ'ստանայ խոստացուած երեք բերետուն հետ մեր աշխատակից "Ծեր Ծուն" ի կողմէ ևս անցած նուէր մը:

Բ. ր լուծած է Սիլվէնի մ-դէն պ. Գր. Համամեան և կ'ստանայ 3 թիւ "Հ. Մ. Լ. Մ.":



ՀՐԱՊԱՐԱԿ ԵՂԱԻ

Հ. Մ. Ը. Մ.Ի 1926 ՏԱՐՈՒԱՅ ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ

ՈՐՈՒՆ ՀԱՍՈՅԹԸ ՊԻՏԻ ՅԱՏԿԱՑՈՒԻ „Հ.Մ.Ը.Մ.“ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ



ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ Հ. Մ. Ը. Մ.Ի ՊՈՒԼԿ. ԲՈԼՈՐ Մ-ՃԻՂՆԵՐՈՒ ՄՕՏ

ԱՄԷՆ ՀԱՅ ՊԵՏԲ Է ՍՈՅՆ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԷՆ ՀԱՏ ՍԸ ԿԱՌՈՒԱԾ ՈՒՆԵԱՅ
ԻՐ ՏԱՆ ԵՒ ԿԱՍ ԽԱՆՈՒԹԻՆ ՊԱՏԻՆ ՎՐԱՅ:



ԱՄԷՆ ՏԵԱՆԿ „ՍԲՈՐԹ“Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՊԻՏԻ ԳՏՆԷՔ

ՍԲՈՐԹԵՆ ՄԱԿԱԶԵՆ

Մ Ա Ր Ք Օ Գ Ո Ս Թ Ո Ւ Ր Ք Օ Ֆ Ի Մ Օ Տ

ՍՕՖԻԱ, ՊՈՒԼՎ. ՏՕՆՏՈՒՔՕՖ 24



ՃՈՒ ՄԹԵՐՔ ԶՄԵՌՆԱՅԻՆ ՍԲՈՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԱՆԱԶԱՆ ԳՈՅՔԵՐՈՒ
ՔԸՆՔԻ, ԸՍԿԻ, ՇԵՑՆԻ ԵԻԱՅԼՆ

ԱՄԱՌՁԻԱՆ ՍԲՈՐԻ, ԹՈՒՐԻԶՄԻ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՄԲՈՂԶ ԿԱԶՄՈՒԱԾՔՆԵՐ

ԳԻՆԵՐՈՒ ՅԱՆԿՐ ԶՐԻ Է

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ե Լ Ա Ի

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԲԱՂԿԱՑԱԾ 150Ի ՄՕՏ

ՀԱՅՐԵՆԱԾՈՒՆԶ ԵՒ ՀԱՏԸՆՏԻՐ ԵՐԳԵՐԷ

ԻՆԶՊԷՍ ՆԱԵԻ

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԵՒ ՄԱԿԵԹՈՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

Գ Ի Ն 30 ԼԵՎԱ

ՓՆՏՈՒԵԼ ԹԵՐԹԻ ՑՐՈՒԻԶՆԵՐՈՒՆ ՄՕՏ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ՝ Պ. ՊԱԼԸԳՃԵԱՆ, ՏՕՆՏՈՒՔՕՖ 43 ՍՕՖԻԱ